



« Ն Ո Ր Ա Վ Ա Ն Ք »
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԱՄԲԵՐԴ
ՀՊՏՀ հետազոտական կենտրոն

**ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ
(Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա)**

Երևան
2015

ՀՏԴ 659.2 : 332
ԳՄԴ 73 + 65.04
S 260

*Գիրքը հրատարակվում է
«Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա*

Նախագծի հեղինակ
Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խմբագիր
Արեստակես ՄԻՄԱՎՈՐՅԱՆ

Հեղինակային խումբ՝
Ջոնի ՄԵԼԻՔՅԱՆ
Անուշավան ԲԱՐՍԵՂՅԱՆ
Արեստակես ՄԻՄԱՎՈՐՅԱՆ

S 260

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ (Վրաստան,
Ադրբեջան, Թուրքիա). - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2015. - 242 էջ:

Աշխատությունը նվիրված է Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի հետազոտական կենտրոնների վերլուծությանը, տիպաբանությանը, ռազմավարական առաջնահերթություններին, ինչպես նաև գործունեության տարբեր կողմերին: Հավաքված տեղեկատվության վերլուծության հիման վրա արվել է այդ կենտրոնների դասակարգումը:

Աշխատությունը նախատեսված է փորձագիտական հանրության և ընթերցողների լայն շրջանակների համար:

ՀՏԴ 659.2 : 332
ԳՄԴ 73 + 65.04

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

Ջոնի Մեյիքյան

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ.

ԿԱՅԱՅՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 8

Վրաստանի ուղեղային կենտրոնները 21

Անուշավան Բարսեղյան

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ 106

Արեստակես Միմալոբյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ 147

ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 188

ԱՌԱՋԱԲԱՆ

Սառը պատերազմի կանոններով ընթացող արդի քաղաքական-հասարակական գործընթացների իրողություններում ցանկացած հանրության անվտանգության գրավականն էապես պայմանավորված է տվյալ հանրության մտավոր և լայն առումով՝ ստեղծագործական ռեսուրսներով: Միայն այդ ռեսուրսների առկայության և դրանց համապատասխան կազմակերպման պարագայում է հնարավոր ադեկվատ ընկալել ներկայիս բազմաչափ և հաճախ քառտիկ բնույթ կրող մարտահրավերների օրինաչափությունները և մշակել ու իրագործել համապատասխան ռազմավարություններ, պատասխան գործողություններ: Իր հերթին, մտավոր ռեսուրսներ հասկացությունը խիստ ընդգրկուն է և ներառում է կառավարման, գիտակրթական, հոգևոր-մշակութային և այլ ոլորտներ: Այդ ընդհանրական համակարգում իրենց ուրույն տեղն ունեն այն հետազոտական կենտրոնները, որոնք կոչված են կիրառական բնույթի մշակումներով անմիջական մասնակցություն ունենալ վերը նշված ռազմավարությունների մշակման և իրականացման գործին: Համաձայն ամերիկյան ավանդույթի (որտեղ ձևավորվել են առաջին նման կենտրոնները)՝ դրանք ընդունված է անվանել *think tank*-եր կամ «ուղեղային կենտրոններ» (*Ու Կ*): Հատկանշական է, որ *Ու Կ*-ները հաճախ բնորոշում են որպես «մտքի ֆաբրիկաներ», «ազգային շահեր արտադրող» կամ «գաղափարախոսություն ստեղծող» կազմակերպություններ: Համաձայն դեռևս նախորդ դարի կեսերին տրված ձևակերպման՝ կայացած *Ու Կ*-ները պետք է կապող օղակ հանդիսանան ակադեմիական-համալսարանական գիտական հանրության և այսպես կոչված «որոշումներ ընդունողների»՝ իշխանության միջև¹: Հատկանշական է, որ ներկայում ընթացող բազմակենտրոն աշխարհակարգի ձևավորումն ուղեկցվում է նման կառույցների քանակի շեշտակի աճով, իսկ առաջատար երկրներում (օրինակ՝ Չինաստանում) անգամ ըն-

¹ *Арутюнян Гагик*, Распад «системы» и формирование будущего, НОФ «Нораванк», Ереван, 2011, *Գաղիկ Հարությունյան*, «Ուղեղային կենտրոնները» և ազգային անվտանգությունը, «21-րդ ԴԱԸ», #1 (35), էջ 5, 2011:

դունվում են հատուկ պետական որոշումներ և ծրագրեր նոր *ՈւԿ-ներ*ի ստեղծման և դրանց զարգացման վերաբերյալ:

Վերոնշյալից հետևում է, որ երկրների ներուժի լիարժեք գնահատումը, դրանց այսպես կոչված աշխարհաքաղաքական կամ աշխարհատնտեսական «կոորդինատների» հաշվարկումը ենթադրում են նաև համակարգված և վերլուծված տեղեկատվություն տվյալ երկրի *ՈւԿ-ներ*ի համակարգի վերաբերյալ: Ամեննին պատահական չէ, որ սկսած 2009 թվականից՝ ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանը պարբերաբար հրապարակում է այն *ՈւԿ-ներ*ի գլոբալ վարկանիշը («*The Think Tank Index*»), որոնք զբաղվում են հանրային քաղաքականության, տնտեսության, սոցիալական, անվտանգության ոլորտների և այլ հետազոտություններով¹: Նկատենք, որ նմանատիպ հետազոտություններ սկսել են իրագործել նաև Ռազմավարական հետազոտությունների Ռուսաստանյան ինստիտուտը (*PIICIA*) և մի շարք այլ հետազոտական կենտրոններ: Այսինքն՝ կարելի է ամրագրել, որ *ՈւԿ-ներ*ի վերաբերյալ տեղեկատվության համակարգումը և դրանց գործունեության ուսումնասիրությունը դարձել են ակտուալ խնդիր ազգային անվտանգության համատեքստում:

Միննույն ժամանակ, հայտնի է, որ տեղեկատվական ներկա (արդեն հինգերորդ) հեղափոխության պայմաններում շեշտակիորեն աճել են տեղեկատվական հոսքերը, և այսօր նման մեծ ծավալներով տեղեկատվության օբյեկտիվ վերլուծությունը դարձել է լրջագույն հիմնախնդիր: Հավելենք նաև, որ «սառըպատերազմյան» արդի իրողություններում վարկանիշային ցուցակներն օգտագործվում են նաև պրոպագանդիստական-մանիպուլյացիոն նպատակներով: Այդ պատճառով վերոնշյալ «*The Think Tank Index*»-ը կամ այլ հետազոտությունները միշտ չէ, որ անկանխակալ և լիարժեք են արտացոլում տարբեր տարածաշրջաններում գործող բազմաթիվ *ՈւԿ-ներ*ի գործունեությունը: Այս հանգամանքը վերաբերում է նաև այն *ՈւԿ-ներ*ին, որոնք իրենց գործունեությունը ծավալել են մեր հարևան երկրներում՝ Վրաստանում, Ադրբեջանում և Թուրքիայում: Թերևս, կասկած չի հարուցում նաև այն փաստը, որ բավական բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում գտնվող Հայաստանի (ՀՀ և ԼՂՀ) ռազմաքաղաքական և վերլուծաբանական հանրության համար հարևանների *ՈւԿ-ներ*ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը կարող է օգտակար լինել և կիրառական նշանակություն ունենալ:

¹ <http://www.scribd.com/The-Think-Tanks-and-Civil-Societies-Program/d/26565307>.

Ելնելով վերոնշյալ հանգամանքներից՝ ընթերցողին ներկայացվող աշխատությունում փորձ է արվել համակարգված ներկայացնել Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի *ՈԻԿ-ների* ու նմանատիպ հետազոտական կենտրոնների ստեղծման և զարգացման նախադրյալները, ռազմավարական առաջնահերթությունները, այդ կենտրոնների պետական, գիտական և միջազգային կառույցների հետ ունեցած կապերը և այլն: Նախագիծն իրագործել է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի և ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի փորձագետներից կազմված համատեղ խումբը, և աշխատանքներն այս ուղղությամբ շարունակական բնույթ են կրելու:

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն
Գ.Հարությունյան

«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար
Ա.Սիմավորյան

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի
«Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի տնօրեն
Վ.Աթոյան

**ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ.
ԿԱՅԱՑՄԱՆ ՓՈԻԼԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Ձոնի Մեկիքյան**

ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային տարածքի երկրների հասարակական-քաղաքական կյանքում սկսվեց լայն բարեփոխումների փուլը: Փոփոխություններն առնչվեցին պետությունների կենսագործունեության բոլոր ինստիտուտներին և ոլորտներին: Այդ ամենը չէր կարող չանդրադառնալ նաև գիտահետազոտական կազմակերպությունների վրա, որոնք խորհրդային տարիներին գործում էին գիտությունների ազգային ակադեմիաների, Գոսպլանի և այլ կառույցներում: Վրաստանում նույնպես, սկսած անցյալ դարի 90-ական թթ., գրեթե բոլոր գործընթացները տեղի են ունենում Արևմուտքի միջնորդությամբ և նրա ֆինանսներով:

Հետաքրքիր է անկախ ոչ կառավարական տեղեկատվա-վերլուծական և ակադեմիական գիտահետազոտական կենտրոնների և ինստիտուտների կազմավորման և զարգացման գործընթացի ուսումնասիրությունը: «*Վրաստանի հետազոտական կենտրոնների կայացումը և գործունեության հիմնական ուղղությունները*» հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է ավելի քան 60 ոչ կառավարական, ոչ առևտրային տեղեկատվա-վերլուծական կենտրոնների, ակադեմիական գիտահետազոտական կենտրոնների և ինստիտուտների գործունեությունը, որոնց մեծ մասն ամերիկյան ձևով իրեն անվանում է «ուղեղային կենտրոններ» (*think tanks*): Նշենք, որ «ուղեղային կենտրոն» ասելով նկատի ունենք այն ինստիտուտներն ու կենտրոնները, որոնք «զբաղվում են քաղաքական գործընթացների և խնդիրների ուսումնասիրմամբ և վերլուծությամբ, ինչպես նաև շահագրգիռ դերակատարների

* «Նորավանք» ԳԿՀ հրավիրված փորձագետ, ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող:

(պետական իշխանության մարմիններ, քաղաքական կուսակցություններ և բիզնես-կառույցներ) համար առաջարկությունների մշակմամբ՝ ներքին և արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ, նրանց կողմից հիմնավորված քաղաքական որոշումների կայացման նպատակով»: Քանի որ ուսումնասիրված բոլոր կազմակերպությունները չէ, որ լիովին համապատասխանում են այս սահմանմանը, մենք օգտագործել ենք ավելի լայն հասկացություն՝ «*հետազոտական կենտրոններ*» (ՀԿ):

Նշենք, որ հետազոտական կենտրոնների ընտրությունը կատարվել է նրանց ակտիվ կամ պասիվ գործունեության հիման վրա, որը գրանցված է կազմակերպության պաշտոնական ինտերնետ-ռեսուրսում և որին հղում է արվել վրացական լրատվամիջոցներում: Վերը նշված 60 հետազոտական կենտրոններն ըստ իրենց կարգավիճակի պայմանականորեն բաժանել ենք հետևյալ խմբերի.

1. Անկախ ՀԿ-ներ և հիմնադրամներ (որոնցից շատերը *think tank* են),
2. Միջազգային կազմակերպությունների մասնաճյուղեր և ներկայացուցչություններ (*think tank*-եր և հիմնադրամներ),
3. Ակադեմիական կենտրոններ (բուհերին և ինստիտուտներին կից),
4. Կուսակցական կենտրոններ (քաղաքական կուսակցություններին կից):

Առաջին խմբի հետազոտական կենտրոնները զբաղվում են հետևյալ ուղղություններով.

1. քաղաքագիտական (քաղաքականություն, քաղաքագիտություն, աշխարհաքաղաքականություն, հակամարտություններ և այլն),
2. դեմոկրատիա և մարդու իրավունքներ (ընտրազանգվածային քաղաքականություն, ընտրություններ, խոսքի ազատություն, ՋԼՄ և այլն),
3. տնտեսական (լիբերալացում, առևտուր և այլն),
4. բազմապրոֆիլ (հետազոտությունների լայն ոլորտ):

Վրաստանում այսքան բազմաթիվ ու տարատեսակ հասարակական կազմակերպությունների և հետազոտական կենտրոնների (դրանց թիվը հասնում է 10 հազարի¹) առկայության պատճառը հասկանալու համար անհրաժեշտ է համառոտ դիտարկել երկրի 1990-ականների պատմությունը:

¹ ADB - Asian development bank Research: “Short history of the SCO development in Georgia”, <http://www.adb.org/sites/default/files/publication/29645/csb-geo-ka-0.pdf>

Պետության ֆինանսավորման և աջակցության բացակայության պատճառով արտադրական շատ միավորումներ և ակադեմիական գիտահետազոտական կենտրոններ փակվեցին: Հիմնական պատճառն այն էր, որ դրանք չկարողացան հարմարվել շուկայական տնտեսության նոր պայմաններին, շատ մասնագետներ և գիտաշխատողներ մնացին առանց աշխատանքի: Նրանք էլ հենց համալրեցին այդ տարիներին թափ հավաքող անկախ հասարակական կազմակերպությունների շարքերը, որոնք հարմարվել էին նոր իրողություններին և Արևմուտքի «արտադրանք» լինելով՝ կարողացել էին կարգավորել գործերն արտասահմանյան ֆոնդերի հետ: Դրանցում էին հիմնականում կենտրոնացել փորձագետները: Թերևս, միակ գիտահետազոտական կենտրոնը, որը գործել է ԽՍՀՄ ժամանակաշրջանում և առայսօր շարունակում է իր գործունեությունը, Գիորգի Ծերեթելու անվան Արևելագիտության ինստիտուտն է՝ հիմնադրված 1960թ.:

Առաջին սերնդի հետազոտական կենտրոնների (1991-1996 թթ.) առանձնահատկությունը, որոնք շռայլորեն ֆինանսավորվում էին արևմտյան ֆոնդերի և պետությունների կողմից, այն էր, որ դրանք աջակցում էին Վրաստանի իշխանություններին դեմոկրատիայի զարգացման, խոսքի ազատության և մարդու իրավունքների պաշտպանության գործում: Կարևոր ուղղություններից մեկն էր նաև խաղաղարարությունը և հակամարտությունների լուծման հարցը: Այդ բոլոր կազմակերպությունների գործունեությունն ավելի շուտ ուղղված էր հասարակությանը, «իշխանություն-ժողովուրդ» փոխհարաբերությունների ստեղծմանը և հիմնականում իրադարձային միջոցառումների անցկացմանը, քան թե հետազոտական նախագծերի իրականացմանը:

Առաջին սերնդի հետազոտական կենտրոններից են՝ *Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (SRC, 1991)*, *Խաղաղության, դեմոկրատիայի և զարգացման կովկասյան ինստիտուտը (CIPDD, 1992)*, *«Կովկասյան տուն» մշակութային կապերի կենտրոնը (1993)*, *Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (1994)*, *Հակամարտությունների ուսումնասիրման և խաղաղարարության հետազոտման միջազգային կենտրոնը (ICCN, 1994)*, *Հանուն արդար ընտրությունների և դեմոկրատիայի միջազգային ընկերությունը (ISFED, 1995)*, *Ռազմավարական հետազոտությունների և զարգացման վրացական կենտրոնը (CSRDG, 1995)*:

Առաջին սերնդի հետազոտական կենտրոնների շարքում ուշագրավ է 1992թ. հիմնադրված *Խաղաղության, դեմոկրատիայի և զարգացման կովկասյան ինստիտուտի (CIPDD)* գործունեությունը: Ունի աշխատանքի 23-ամյա փորձ, երկրում առաջին հասարակական կազմակերպություններից է: Կազմակերպության աշխատանքի ուղղվածությունը, ինչպես և առաջին սերնդի բոլոր հասարակական կազմակերպություններինը, բավական լայն է. հետազոտություններից և վերլուծություններից մինչ հրապարակային միջոցառումներ և սեմինարներ: CIPDD-ն հեղինակություն է վայելում ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Կազմակերպության հիմնադիրն ու ներկայիս ղեկավարն է վրացի փիլիսոփա, քաղաքագետ Գիա Նոդիան: 2014թ. տվյալներով՝ ինստիտուտը Փենսիլվանիայի համալսարանի վարկանիշում զբաղեցրել է 150-րդ տեղն աշխարհի առաջատար կենտրոնների շարքում՝ ինչպես առանց ԱՄՆ-ի հաշվառման, այնպես էլ ԱՄՆ կենտրոնների հետ միասին: CIPDD-ն նաև զբաղեցնում է 5-րդ տեղը Կենտրոնական Ասիայի առաջատար կենտրոնների ցուցակում: Կազմակերպությունը սերտ կապեր ունի Վրաստանի նախկին ղեկավարության հետ: Իշխանափոխության հետ կապված՝ CIPDD գործունեության ակտիվությունը նվազել է, բայց դեռևս շարունակում է բավական արդյունավետ մնալ: Կազմակերպության բյուջեն 2014թ. կազմել է \$395 հազար, այն դեպքում, երբ 2010-ին այն կազմում էր \$645,700 հազ.: CIPDD¹ դոնորների և գործընկերների շարքում շատ են արտասահմանյան դեսպանությունները, կառավարությունները, հիմնադրամները և համալսարանները [1]:

Ուշագրավ է նաև *Հակամարտությունների և խաղաղարարության հետազոտության միջազգային կենտրոնի (ICCN)* փորձը, որը հիմնադրվել է 1994թ. վրացի հայտնի կոնֆլիկտաբան Գիորգի Խուցիշվիլու կողմից և ամերիկյան Ջոն Դ. և Քեթրին Տ. Մակարտուրների հիմնադրամի, Սթենֆորդի համալսարանի Միջազգային անվտանգության և սպառազինության հսկողության կենտրոնի աջակցությամբ: Այն երկրի առաջին հետազոտական կենտրոններից է, զբաղվում է հակամարտությունների լուծման և խաղաղարարության հետ կապված հարցերով: Այսօր ICCN-ը զբաղվում է նաև ռուս-վրացական հարաբերություններով և Միջազգային գործերի ռուսաստանյան խորհր-

¹ CIPDD-ն 2007-ից «PASOS» (Policy Association for an Open Society) ասոցիացիայի անդամ է, որի մեջ մտնում են 39 կազմակերպություն և 3 ասոցիացված անդամ ողջ աշխարհից:

դի հետ համատեղ կազմակերպում է ամենամյա երկկողմ հանդիպումներ երկու երկրների ներկայացուցիչների միջև¹ [2]:

Երկրի ազդեցիկ հասարակական կազմակերպություններից մեկն էլ *Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան է (GILA)*, որը հիմնադրվել է 1994թ.: Չնայած ունի իրավապաշտպան ուղղվածություն կամ, ինչպես ամերիկյան ձևով են ասում՝ Watchdog է, ասոցիացիան իրականացնում է նաև նեղ պրոֆիլի հետազոտություններ: Կազմակերպության հիմնադիրն է Վրաստանի խորհրդարանի ներկայիս ղեկավար Դավիթ Ուսուպաշվիլին (Վրաստանի Հանրապետական կուսակցության նախկին ղեկավարն է): Կազմակերպությունը համարվել է երկրի իշխանությունների կադրերի դարբնոցն ինչպես Էդուարդ Շևարդնաձեի օրոք, այնպես էլ 2012-ից հետո, երբ իշխանության եկավ «Վրացական երազանք» կոալիցիան: Կարելի է ասել, որ ասոցիացիայի գործունեությունն ուղղորդվում է Վրաստանի Հանրապետական կուսակցության կողմից (գրեթե բոլոր նախագահները կապ են ունեցել կուսակցության հետ), իսկ ղեկավարում է կազմակերպության հիմնական գործընկերն ու դոնորը՝ ԱՄՆ դեսպանությունը: GILA-ն մշտական ֆինանսավորման աղբյուր ունի, հիմնականում ամերիկյան լիբերալ ֆոնդերից, որոնք զգալի դեր են կատարում ԱՄՆ քաղաքականության մեջ: Իր ներկայացուցչություններն ունի երկրի բոլոր խոշոր շրջաններում, այդ թվում և Սամցխե-Ջավախքում, որտեղ զբաղվում է մարդու իրավունքների պաշտպանության ծրագրերով և տեղի բնակչության ինտեգրման հարցերով [3]:

Ժամանակի ընթացքում առաջին սերնդի հետազոտական կենտրոնների մեջ աստիճանաբար աչքի ընկավ կազմակերպությունների մի խումբ, որն իր գործունեության հիմնական ուղղությունը դարձրեց հետազոտություններ իրականացնելը: 1990-ականների կեսերից այդ կազմակերպությունների հիման վրա ստեղծվեցին նաև այլ կազմակերպություններ, որոնք կազմեցին *երկրորդ սերնդի* հետազոտական կենտրոնների (1996-2003) կորիզը: Երկրի ներքաղաքական գործընթացների առանձնահատկությունը (տնտեսության լճացում, էներգետիկ և քաղաքական ճգնաժամ և այլն), ինչպես նաև նրա արտաքին քաղաքական խնդիրները (հարավօսական և արխագական չլուծված հակամարտություններ) նպաստեցին վերլուծաբանական ուղղությունների զարգաց-

¹ Համատեղ գործունեությունն ուղղված է փորձագիտական հանդիպումների կազմակերպմանն ու վերլուծությունների պատրաստմանը:

մանը քաղաքացիական կազմակերպություններում: Այդ տարիներին, երբ նախագահում էր Էդուարդ Շևարդնաձեն (1995-2003), մանավանդ 1999-ից հետո (երբ Վրաստանը դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ), երկրում ուժեղացավ քաղաքացիական հատվածի դերը, բարձրացավ որոշ ՀԿ-ների հեղինակությունը: Արևմուտքի և ԱՄՆ աջակցությամբ ի հայտ եկան նաև նոր առաջնորդներ, որոնք հեղինակություն էին վայելում հասարակության շրջանում:

Երկրորդ սերնդի հետազոտական կենտրոններից են՝ *Վրաստանի առևտրային ասոցիացիան (1996)*, *Ազատության ինստիտուտը (1996)*, *Մարդու իրավունքների կենտրոնը (1996)*, *«Բազմազգ Վրաստան» համաքաղաքացիական շարժումը (1999)*, *Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամը (GFSIS, 1998)*, *Վրաստանի նոր տնտեսական դարձրը (2001)*, *Տնտեսական քաղաքականության հետազոտության կենտրոնը (EPRC, 2002)*, *Քաղաքականության ուսումնասիրման ինստիտուտը (IPS, 2002)*:

Նշյալ ժամանակաշրջանի համար հատկանշականը 1996թ. հիմնադրված *Ազատության ինստիտուտի* գործունեությունն է: Այն համարվում էր երկրի երրորդ նախագահ Միխայիլ Սաակաշվիլու կառավարության և նրա Միասնական ազգային շարժում (ՄԱՇ) կուսակցության կադրերի դարբնոցը: Այսօր կազմակերպությունը պասիվ է, իսկ վերլուծական գործունեություն հիմնականում իրականացնում է նրա ղեկավարը՝ հայտնի փորձագետ Լևան Ռամիշվիլին: Ժամանակին Ազատության ինստիտուտը շռայլ դրամաշնորհներ էր ստանում արևմտյան հիմնադրամներից և զբաղվում էր հետազոտություններ կատարելով (վերլուծում և գնահատում էր պետական քաղաքականության փոփոխությունները) և «մարդկային, տնտեսական ու ազգային ազատությանն ուղղված» աշխատանքով [4]:

Վրացական առավել հայտնի և հեղինակավոր հետազոտական կենտրոնը, որը կարելի է համարձակորեն «ուղեղային կենտրոն» անվանել, 1998թ. վրացի հայտնի դիվանագետ Ալեքսանդր Ռոնդելիի հիմնադրած *Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամն է (GFSIS)*: GFSIS-ը չի մտնում Փենսիլվանիայի համալսարանի կենտրոնների ցուցակում, բայց նրա գործունեության առանձնահատկությունը կապված է Վրաստանի արտաքին քաղաքականության, նրա ազգային անվտանգության սպառնալիքների և այլ հարցերի հետազոտությունների հետ: 2006-ից կազմակերպության շրջանակներում սկսվեց 10-ամյա մի նախագիծ: Դրա շրջանա-

կում էլ հիմնվեց *Վրաստանի անվտանգության վերլուծության կենտրոնը* (GFSIS, 2006-2016): GFSIS-ը բարձր հեղինակություն ունեւր Վրաստանի նախկին ղեկավարության շրջանում, բայց իր ազդեցությունն այսօր լիովին կորցրել է¹: Թե որքան է հիմնադրամի բյուջեն՝ հայտնի չէ, բայց, ըստ որոշ տվյալների, հասնում է մինչև տարեկան \$500 հազարի: GFSIS-ի միջազգային կապերը բավական լայն են, նրա դոնորներից են՝ Սորոսի հիմնադրամը (OSF-Georgia), RAND Corporation-ը, Էբերտի հիմնադրամը, Մարշալի կենտրոնը, USAID-ը, NED-ը, Stanford University-ն, ԱՄՆ դեսպանությունը և այլն [5]:

Տնտեսական ուղղվածությամբ աշխատող կազմակերպություններից է 2002-ին հիմնադրված *Տնտեսական քաղաքականության հետազոտության կենտրոնը* (EPRC): Այն Վրաստանի ակտիվ վերլուծական կենտրոններից է, զբաղվում է տնտեսական հարցերով: Կազմակերպության ղեկավարն է Դավիթ Չկադունան: Ամեն տարի Սթենֆորդի համալսարանի (ԱՄՆ) հետ համատեղ EPRC-ը Թբիլիսիում անցկացնում է «Գլոբալ առաջնորդների» համաժողով: 2014թ. տվյալներով՝ կենտրոնի բյուջեն կազմել է \$270 հազար (2013-ին՝ 214 հազար) [6]:

Ներքաղաքական ճգնաժամից և 2003թ. նոյեմբերին «վարդերի հեղափոխությունից» հետո երկրում իշխանափոխություն կատարվեց, եկավ նոր թիմ՝ այսպես կոչված «երիտասարդ բարեփոխիչներ»՝ Վրաստանի երրորդ նախագահ Միխայիլ Սասկաշվիլու, Զուրաբ Շվանիայի և Նինո Բուրջանաձեի գլխավորությամբ²: Այս քաղաքական գործիչները հայտնի էին ոչ միայն որպես ընդդիմադիրներ և նախկին նախագահ Շևարդնաձեի թիմի նախկին անդամներ, այլև որպես հայտնի ՀԿ-ականներ: *Երրորդ սերնդի* հետազոտական կենտրոնների գործունեության առանձնահատկությունն այն է, որ նրանց իշխանության գալով էապես թուլացավ երկրի քաղաքացիական հատվածը: Պատճառն այն էր, որ նրանց թիմի անդամների մեծամասնությունը կառավարական սեկտորից չէր: Նոր իշխանությունները, Արևմուտքի աջակցությամբ, սկսեցին կոռուպցիայի դեմ պայքարից, պետական ինստիտուտների բարեփոխումներից

¹ Հիմնադրամի փորձագետ Արչիլ Գեգեշիձեն 2013թ. նշանակվել է ԱՄՆ-ում Վրաստանի դեսպան, իսկ նրա գործընկեր Լադո Պապավան 2014-ին դարձավ Թբիլիսիի Զավախիշվիլու անվան պետհամալսարանի ռեկտորը:

² *Johnny Melikyan*, “Georgia looks west, Armenia east”, “Open Democracy-Russia” E-Journal, <https://www.opendemocracy.net/od-russia/johnny-melikyan/georgia-looks-west-armenia-east-EU-CU-NATO>, 03.09.2014.

և տնտեսության ազատականացումից: Այսօրվա լայնածավալ ռեֆորմների և պետության վերափոխման համար հարկավոր էր նաև հասարակության աջակցությունը: Եվ այդ ժամանակ, տնտեսական ռեֆորմներին զուգահեռ, ավելանում է այն հետազոտական կենտրոնների թիվը, որոնք մասնագիտանում էին տնտեսության և պետական կառավարման ոլորտներում:

Այդ շրջանի բացասական էֆեկտը դարձավ այն, որ պետությանը, ժողովրդի հավանությունը չվայելող ռեֆորմների անցկացման համար, հարկավոր էր բնակչության աջակցությունը, ուստի նոր ոչ կառավարական կազմակերպությունների ստեղծման անհրաժեշտություն առաջացավ: Միասնական ազգային շարժմանն օգնության եկան «նախկին» ու «նոր» գործընկերները», երկրի ակտիվ ՀԿ-ների (GoNGO – Government NGO) հիմնական մասը դարձավ ազդեցության կառավարամետ գործակալ:

Այդ տարիներին Վրաստանի ներքաղաքական օրակարգին ավելացավ նաև «նոր» արտաքին քաղաքականը. կառավարությունն արտաքին քաղաքական գերակայություն հռչակեց ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին երկրի ինտեգրումը:

Այս թեզիսը ներառված էր 2005թ. Վրաստանի խորհրդարանի ընդունած՝ երկրի ազգային անվտանգության առաջին հայեցակարգում¹: Դրանից հետո արդեն գոյություն ունեցող հետազոտական կենտրոններին ավելացան նաև նորերը, որոնք զբաղվում էին երկրի իշխանությունների արտաքին քաղաքական վեկտորի հանրահռչակմամբ: ՄԱՇ ստեղծած համակարգն ուժեղացրեց կապը պետության և քաղաքացիական հասարակության միջև՝ երկու կողմերին կադրերի շրջանառության հնարավորություն ընձեռեղով: Դա էլ հնարավորություն տվեց երկրին՝ անցնել քաղաքացիական հատվածի զարգացման հաջորդ փուլ:

Երրորդ սերնդի հետազոտական ինստիտուտներն են՝ *ՆԱՏՕ և ԵՄ գծով տեղեկատվական կենտրոնը (2005)*, *Եվրոպական նախաձեռնություն - Թբիլիսիի լիբերալ ակադեմիան (EI-LAT, 2006)*, *Քաղաքական ինստիտուտ - Տնտեսության միջազգային դպրոցը (ISET-PP, 2006)*, *Հանրապետական ինստիտուտը³ (2008)*, *Կովկասյան հետազոտությունների միջազգային դպրոցը (ISCS, 2009)*,

¹ Civil.ge: “Завершилась работа над Концепцией национальной безопасности Грузии”, 16.05.2005, <http://www.civil.ge/rus/article.php?id=8045>;

² Գործում է Թբիլիսիի Ջավախիշվիլու անվան պետհամալսարանին (ԹՊՀ) կից:

³ Վրաստանի Հանրապետական կուսակցության («Վրացական երազանք»-ի կոալիցիոն անդամ) «ուղեղային կենտրոնն» է:

Սոցիալական և տնտեսական հետազոտությունների կովկասյան ինստիտուտը (CIESR, 2009), Քաղաքականության վրացական ինստիտուտը (GIP, 2011):

Ինչպես վերը նշեցինք, իշխանության գալով՝ Միխայիլ Սաակաշվիլու թիմը որդեգրեց երկրի զարգացման՝ ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին ինտեգրվելու արտաքին քաղաքական ուղեգիծը: Այդ ժամանակ էլ՝ 2005թ., պետության աջակցությամբ հիմնվում է ՆԱՏՕ և ԵՄ գծով տեղեկատվական կենտրոնը: Ղեկավարն է Էլենե Թոգսաձեն: Գործում է Թբիլիսիում, բայց բազմաթիվ ծրագրեր է իրականացնում երկրի շրջաններում¹, որտեղ զբաղվում է Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման տեղեկատվական աջակցությամբ և այդ ուղղության քարոզչությամբ [7]:

Վրաստանի հետազոտական կենտրոնների զարգացման հերթական փուլը կապված էր իշխանափոխության և 2012թ. հոկտեմբերի խորհրդարանական ընտրություններում «Վրացական երազանքի» հաղթանակի հետ: Իշխանությունից ՄԱՇ հեռանալուց հետո արդեն նախկին որոշ պաշտոնյաներ, որոնք չէին «հայտնվել» երկրի իրավապահ մարմինների ձեռքում, անցան քաղաքացիական սեկտոր: Նրանց մի մասը միացավ գոյություն ունեցող հասարակական կազմակերպություններին, մյուսները ստեղծեցին նորերը: Նրանց նպատակն էր՝ քաղաքացիական հսկողություն սահմանել երկրի ղեկավարության հանդեպ և շարունակել պայքարը «բնակչության ուղեղների» համար արդեն նոր իրողությունների պայմաններում: Ի պատասխան՝ կառավարող «Վրացական երազանք» կոալիցիայի անդամները գործի դրեցին իրենց հետազոտական կենտրոնները: Այսպիսով, ի հայտ եկան *չորրորդ սերնդի* հետազոտական կենտրոնները (2012թ. առ այսօր), որոնք իրենց բնույթով տարատեսակ են և բազմապրոֆիլ: Դրանք գործում են միմյանց միջև (իշխանամետ և ընդդիմադիր) կոշտ մրցակցության պայմաններում: Պայքարը թեժացնում է ոչ միայն երկրի ներքաղաքական օրակարգի հանդեպ մտտեցումների տարբերությունը, այլև մրցակցությունն արտաքին քաղաքական ուղղությամբ: Այստեղ, չնայած հռչակվող արտաքին քաղաքական կողմնորոշիչները համընկնում են, բայց պայքարն ընթանում է արդեն ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման գաղափարին հավատարմության ցուցադրման համար, ինչպես նաև երկրի տարածքային ամբողջականության ապահովման

¹ 2015թ. մայիսին կենտրոնի աջակցությամբ Ախալքալաքում անցկացվել են ՆԱՏՕ օրեր:

ուղղությամբ: Միակ տարբերությունն արտաքին քաղաքական մոտեցումներում փոխհարաբերությունների հարցն է Ռուսաստանի հետ¹: Սակայն այստեղ ևս մոտեցումների տարբերությունը սահմանափակվում է միայն կողմերի հռետորաբանությամբ:

Նշենք, որ «Վրացական երազանքի» կառավարության անդամներ են դարձել նաև վերլուծական կենտրոնների ներկայացուցիչները: Հայտնի ռազմական փորձագետ Իրակլի Սեսիաշվիլին զբաղեցրել է Վրաստանի խորհրդարանի պաշտպանության և անվտանգության հարցերով կոմիտեի ղեկավարի պաշտոնը: Եվս մեկ վերլուծաբան *Սոցիալական և տնտեսական հետազոտությունների կոլկասյան ինստիտուտից (CIESR)*¹ Դավիթ Նարմանիան, զբաղեցրել է տարածքային զարգացման և ենթակառուցվածքի նախարարի, այնուհետև՝ Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնը: Վրացի դիվանագետ, Ռուսաստանում Վրաստանի նախկին դեսպան Զուրաբ Աբաշիձեն նշանակվել է Վրաստանի վարչապետի՝ ՌԴ-ի հետ փոխհարաբերությունների գծով հատուկ ներկայացուցչի պաշտոնում: Իսկ հայտնի փորձագետ, կոնֆլիկտաբան Իվալիան Խահինդրավան նշանակվել է Վրաստանի Անվտանգության խորհրդի քարտուղարի տեղակալ:

Չորրորդ սերնդի հետազոտական կենտրոններից են՝ *Համաշխարհային փորձը Վրաստանի համար (2012)*, *Վրաստանի ռեֆորմների ասոցիացիան (GRASS, 2012)*, *Ռազմավարական հետազոտությունների վրացական ինստիտուտը (GISS, 2012)*, *ԹՊՀ վերլուծության և կանխատեսումների կենտրոնը (2012)*, *«Քաղաքացի» ՀԿ-ն (2013)*, *Հասարակություն 20/20-ը (2014)*:

Նոր սերնդի հետազոտական կենտրոնների համար հատկանշական օրինակ է 2012թ. հիմնադրված Վրաստանի ռեֆորմների ասոցիացիան (GRASS): Կազմակերպությունն ստեղծվել է Վրաստանի ԱԳՆ ղեկավարի նախկին տեղակալ (Միխայիլ Սաակաշվիլու օրոք) Սերգի Կապանաձեի և փորձագետ Էլենե Խոշթարիայի կողմից: Կազմակերպությանն անդամակցել են Սաակաշվիլու կառավարության մի շարք նախկին պաշտոնյաներ: GRASS-ը հանդես է գալիս որպես think tank, որի գործունեության ոլորտն ընդգրկում է արտաքին և ներքին քաղաքականության, անվտանգության, հակամարտու-

¹ *Джонни Меликян*, “Внешняя политика Грузии после парламентских выборов в октябре 2012: взгляд из Армении”. Центральная Азия и Кавказ (Журнал социально-политических исследований), SA&CC Press, Швеция, 2014, Том 17, Выпуск 1, стр. 78-88.

նությունները միշտ չէ, որ հաշվի են առնում այս կազմակերպությունների կարծիքը, իսկ երբեմն էլ իրենք են նրանց թելադրում իրենց օրակարգը: Որոշ կազմակերպություններ, նման խնդիրների բախվելով, օգտագործում են դիվանագիտական շրջանակներում և Վրաստանից դուրս ունեցած իրենց կապերը, որպեսզի ճնշում գործադրեն երկրի ղեկավարության վրա՝ առաջ մղելով իրենց շահերն ու նախագծերը:

Արտաքին քաղաքականության մասին իրականացվող հետազոտությունները հիմնականում վերաբերում են ազգային անվտանգության խնդիրներին, երկրի տարածքային ամբողջականության ապահովման միջոցներին: Բացի այդ, տարածքային ենթակառուցվածքային նախագծերի և երկրի տարածքով տարանցման վերաբերյալ հետազոտություններն անդրադառնում են նաև Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրմանը:

Նշենք նաև մի քանի այլ հետևություններ.

1. Նկատվում է համալսարաններին կից հետազոտական կենտրոնների գործունեության ակտիվացում, բայց նրանց ակտիվության մակարդակը բավականաչափ բարձր չէ: 2012թ., օրինակ, Թբիլիսիի Ջավախիշվիլու անվան պետհամալսարանում ստեղծվեց *ԹՊՀ վերլուծության և կանխատեսումների կենտրոնը*: Ավելի վաղ՝ 2009թ., Իլիայի պետական համալսարանին կից ստեղծվեց Կովկասյան հետազոտությունների միջազգային դպրոցը, իսկ 2006թ. ԹՊՀ-ին կից հիմնադրվեց տնտեսության միջազգային դպրոցը (ISET), որը 2011-ից հիմնել է իր think tank-ը՝ *Տնտեսության միջազգային դպրոց-քաղաքականության ինստիտուտը*: Բուհերին աջակցում է Վրաստանի կառավարության ստեղծած Ռուսթավելու ֆոնդը¹:
2. Ազգային փոքրամասնությունների հետ կապված՝ վերջին տարիներին վրացական հետազոտական կենտրոններն այնքան էլ ակտիվ չեն, նրանց գործունեությունն ավելի շատ կենտրոնացած է երկրի հայ և ադրբեջանցի բնակչության՝ վրացական հասարակությունում ինտեգրման հնարավորությունների ստեղծման վրա: Հատկանշական է, որ *Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամի* Ախալքալաքի գրասենյակում, որը հիմնվել է Ֆինլան-

¹ Հիմնադրամն առաջին ազգային դոնորն է, որը ֆինանսավորել է Վրաստանի համար գերակայական հետազոտական նախագծեր երկրի ներսում:

ეკონომიკური კონსტრუქციის ფინანსური ადგილობრივი, ირანულიაგვილი
ენი კრავტრენი ანვიჯარ იასრინრავინტრ:

Ծանոթագրություններ

1. CIPDD - Caucasus Institute for Peace, Democracy and Development, www.cipdd.org
2. ICCN - International Center on Conflict and Negotiation, www.iccn.ge
3. GILA - Georgian Young Lawyers Association, www.gila.ge
4. Liberty Institute, http://liberty.ge/?page_id=460
5. GFSIS - Georgian Foundation for Strategic International Studies, www.gfsis.org
6. EPRC - Economic Policy Research Center, <http://www.eprc.ge>
7. Information Centre on NATO and EU, <http://www.natoinfo.ge>
8. GRASS - Georgian Reforms Associates, <http://grass.org.ge>
9. ISET – International School of Economics – Policy Institute (of TSU after Javakhishvili), <http://www.iset-pi.ge>.

«Գրաստանի ուղեղային կենտրոնները»

<p>N</p>	<p>Կենտրոնի անվանումը</p>	<p>Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)</p>	<p>Դոկտորներ և գործընկերներ</p>	<p>Օտարաբազմություններ</p>	
<p>1</p>	<p>Միջերկին համագործակցության և խորհրդատվությունների վերլուծական կենտրոն (ACICC-Analytical Center for Interethnic Cooperation and Consultations; ցտբոստաժբոսեր տանամթրածառոծոս ոծսւլւլժսցոցոծոս անաւլոժոցւթոո ցյոծթոո);</p>	<p>Հինասարկել Է 2012թ. հունվարի 12-ին Հինասարկան վայրը՝ Թբիլիսի, Վրաստան Կարգավիճակը՝ նշ առևտրային ուղեղային կենտրոն</p>	<p>1. Տեխնոլոգիա «Մարդու իրավունքների ախիտագիտ» (HUMRA – Human Rights Animation. Research Report). 2014թ. ապրիլ-մայիս</p> <p>2. Հետազոտություն «Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների շրջանային կազմակերպությունների կարիքների և խնդիրների վերհանում» (Դոկտոր Open Society Georgia Foundation), 2013թ. մարտ</p>	<p>1. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID) 2. European Commission 3. Minority Rights Group International 4. Open Society Georgia Foundation 5. United Nations Association of Georgia 6. International Foundation for Electoral Systems 7. ECMI 8. Euro-Asian Jewish Congress 9. Netherlands Helsinki Committee 10. Public Movement «Multinational Georgia» 11. Central Election Commission of Georgia 12. Civil Development Agency 13. SOCAR Georgia 14. UNDP</p>	<p>Հայկական հետազոտություններ ACICC առանձնահատկությունն այն է, որ զբաղվում է նաև Վրաստանի հայ համայնքի խնդիրների հետազոտմամբ: Վերջին հետազոտման աշխատանքը կատարվել է 2013թ.: Իրականացում է նաև բազմաթիվ վիճարարություններ (սեփականի, քննարկումներ և այլն)</p>

N	Կենտրոնի անվանումը	Շնչհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոկտրներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>բազմագնացության հարցերին գործնական մոտեցումների սշակում</p> <p>Ղեկավար՝ գործադիր տնօրեն Ազիթ Միրզան</p> <p>Կառուցվածք՝ 8 աշխատակից (ներառյալ «Արևելյան գործընկերության» ծրագրի 1 համակարգող)</p> <p>Հասցե՝ 0105, Հանրապետ. հրապ. 1, Տրիկիաի, Վրաստան Հեռ.՝ (+995 32) 242 16 66; Էլ. փոստ՝ info@acicc.ge; Կայքը՝ http://acicc.ge</p>			

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տիպակեր	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Հետազոտություններ	
2	<p>Վրաստանի ասոցիացիա</p> <p>(Atlantic Council of Georgia; საქართველოს ატლანტიკური საბჭო)</p>	<p>Հիմնադրվել է 1996թ.</p> <p>Հիմնադրման վայրը՝ Թբիլիսի, Վրաստան</p> <p>Կարգավիճակը՝ անկուսակցական, ոչ արևարային կազմակերպություն</p> <p>Գործունեության նպատակները և ուղղությունները՝</p> <p>ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման վերլուծական և հրատարակային ազակցություն:</p> <p>Հետազոտության թեևները բազմազան են՝ անվտանգության հարցերից մինչև տնտեսական անվտանգություն, այդպիսովևս կառավարում և ժողովրդագրական վերահսկողություն</p>	<p>Հետազոտություններ</p> <p>Ատլանտյան խորհուրդը USAID ֆինանսավանդակում աջակցությամբ իրականացրել է 8-ամսյա նախագիծ «Վրաստանի անվտանգության անվտոյի տեսության նախագիծ» (Georgia's Security Sector Review Project (GSSR) (2013-2014)</p> <p>Հրատարակումներ</p> <p>1. Անվտանգության անվտոյի հետազոտության նախագիծ «Վրաստանի ազգային անվտանգության կառուցվածքի տեսության և ռազմավարական մակարդակ» (2013)</p>	<p>Դոկտրինը և գործընկերները</p> <p>1. North Atlantic treaty organization (NATO)</p> <p>2. Atlantic Treaty Association (ATA) (ասոցիացիայի անդամ)</p> <p>3. Youth Atlantic Treaty Association of Georgia (YATA) (ասոցիացիայի անդամ)</p> <p>4. ԱՄՆ վիճագրային գաղափարական գործակալություն (USAID)</p> <p>5. Ռազմավարական և վիճագրային հետազոտությունների կենտրոն (CSIS)</p> <p>6. Իլիայի պետական համալսարան</p> <p>7. Կոնցադ Ադեհատների հիմնադրամ</p> <p>8. Եվրոպական տուն</p> <p>9. Վրաստանում Ռոմվիկիայի դեսպանություն</p>	<p>Աջակցում է վրացական ՀԳ-ների և փորձագետների Վրաստանի եկրպակման և Եվրատարածության ինտեգրման գործում</p>

N	Կենտրոնի անվանումը	Հնչեցնող տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոկուրենտներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
	<p>Ղեկավար՝ կառավարող խորհրդի նախագահ՝ Վասիլ Միխարուիձե</p> <p>գործադիր տնօրեն՝ Գեորգի Մուչաիձե</p> <p>Կառուցվածք՝ կառավարող խորհուրդ (11 անդամ); կառավարող խորհրդի նախագահ; գործադիր տնօրեն</p> <p>Հասցե՝ 0186, Ջուրա Նաղիրաձեի փ. 8, Թբիլիսի, Վրաստան Էլ. փոստ՝ info@acge.ge; Կայքը՝ http://acge.ge</p>	<p>2. Վրաց-գերմանական «Third Georgian-German Strategic Forum: Policy Recommendations and Observations» համաժողովի արդյունքների հրատարակում (2014)</p>	<p>1. ԵՄ ներկայացուցչությունը Վրաստանում</p>		
3	<p>Ռազմավարական հետազոտությունների վրացական ինստիտուտ</p>	<p>Հիմնադրվել է՝ 2012թ.</p>	<p>Զեկուցումներ 1. Georgia's progress and challenges on the path</p>	<p>1. ԵՄ ներկայացուցչությունը Վրաստանում</p>	

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտությունները և հրատարակումները (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
	(GISS - Georgian Institute for Strategic Studies: საქართველოს სტრატეგიული კვლევების ინსტიტუტი)	Հիմնադրման վայրը՝ Թբիլիսի, Գրաստան Կարգավիճակ՝ ոչ անհտրային, անկուսակցական think tank	Հետազոտությունները և հրատարակումները (վերջին 2 տարվա) to the EU approximation after the signature of Association Agreement. Հեղինակ՝ Թինա Գուլեթիանի (2015թ. ապրիլ)	2. ԱՄՆ միջազգային գաղթագման գործակալություն (USAID) 3. Զարգացման շվեդական գործակալություն (SIDA) 4. Վիշեգրադի հիմնադրամ 5. Դեմոկրատիայի եվրոպական հիմնադրամ 6. Գրաստանում Շվեդիայի դեսպանություն 7. Խաղաղություն, զարգացման և դեմոկրատիայի եվրոպական ինստիտուտ (CIPDD)	
	Պրոնոստիկայի և նպատակները և ուղղությունները. Ծառայել որպես ռեսուրս շահագրգիռ կարգերի համար՝ Գրաստանի և տարածաշրջանի արջն կանգնած քաղաքական, անվտանգային և արտաքին քաղաքական հարցերի ընկալման գործում: երկխոսության հարթակների ստեղծում և վերածական աշխատանք (վերլուծության, խորհրդատվությունների և մեկնաբանում-	2. Արևազգային երկաթուղի, ո՞վ է շահելու (The Abkhazia Railway: who wins?). Հեղինակ՝ Իրակլի Փոլշինի (2014թ. դեկտեմբեր)	3. Task Force report of the project: «V4 Supporting the Economic Integration of Georgia and Moldova with the EU» (2014թ. սեպտեմբեր) 4. The Research Report - «The Analysis of the Visa Liberalization		

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոկտրիներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
	<p>թյունների պատ- րաստում) անվտանգու- թյան և արտաքին քա- ղաքական հարցերով Հահագրգիռ կողմերի համար</p> <p>Հասարակական գործունեությունը՝ երկխոսության հարթակների ստեղծում (սեմինարներ, կոնֆերանսներ և համաժողովներ): աշխատանք երկխոսարարության հետ</p> <p>Ղեկավար՝ հիմնադիր նախագահ՝ Էկա Տկեշելաշվիլի</p> <p>փոխնախագահ (հիմնադիր)՝ Իրակլի Փոքշիժե հիմնադիր՝ Թոնիկե Գորդաձե</p>	<p>Process in Georgia: Moldova's Experience and Recommendation» Հեղինակ՝ Նին Սամվելիձե (2014թ. փետրվար)</p> <p>5. Caspian Region - A view from Georgia. Հեղինակ՝ Գիորգի Բարդիձե (2013)</p> <p>6. «New Political Reality: «The Occupied Territories and the Russia Factor». Հեղինակ՝ Էկա Տկեշելաշվիլի (2013);</p>			

N	Կենտրոնի անվանումը	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
	<p>Ընդհանուր տվյալներ</p> <p>հիմնադիր՝ Պավլոս Ավրամիակե</p> <p><u>Կառուցվածք</u>՝ հոգաբարձուների խորհուրդ (4 մարդ): նախագահ: փոխնախագահ: 6 աշխատակից</p> <p><u>Հասցե</u>՝ 0179, Բամիշվիլու փ. 2, Թբիլիսի, Վրաստան Հեռ.՝ +(99532) 224 04 15; Էլ. փոստ՝ office@griss.org.ge; <u>Կայքը</u>՝ http://www.griss.org.ge</p>			
4	<p><u>Քաղաքականության վրացական ինստիտուտ</u></p> <p>(Georgian Institute of Politics – GIP; საქართველოს პოლიტიკის ინსტიტუტი)</p>	<p>Հիմնադրվել է՝ 2011թ.</p> <p><u>Հիմնադրման վայրը</u>՝ Թբիլիսի, Վրաստան</p> <p><u>Կադրակազմակ</u>՝ նշ առնայլային,</p>	<p>*Աղյուսակներ և Վրաստանի ռազմավարական վերլուծություն» (հրատարակումներ)՝ Բաքվի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի՝ Վրաստանի Քաղաքական ինստի-</p>	<p>Դոնորներ</p> <ol style="list-style-type: none"> 1. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID) 2. OSF Think tank found 3. German Marshall Found (Black Sea Trust for Regional Cooperation)

N	Կենտրոնի անվանումը	Հնդիանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դեղքներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
	<p>անկուսակցական, հետազոտական, վերլուծական կազմակերպություն</p> <p>Տարծունեության նպատակները և ռադիոյությունները, դեմոկրատական ինստիտուտների կազմակերպչական հիմքի ամրապնդում; «արքունակտ կառավարման» գաղափարի իրագործում և զարգացում Վրաստանի քաղաքականության դիտարկման և հետազոտության միջոցով; քաղաքացիական հասարակության կառուցման և դեմոկրատական գործընթացների զարգացման գործին հասարակության մասնակցություն խթանում;</p>	<p>տուտի հետ համատեղ (Զաուր Շիրիև և Կորնելի Կակաչիա) (2014)</p> <p>«Վրաստանի արտաքին քաղաքականությունը, կայուն անվտանգության փնտրումներ» (2013)</p> <p>«Georgia After The Election: Foreign And Domestic Dilemmas», The Central Asia-Caucasus Analyst, the Johns Hopkins University's School of Advanced International Studies (01/09/2013 issue), Կորնելի Կակաչիա</p>	<p>4. Ռոբերտ Բոշի հիմնադրամ</p> <p>5. Միջազգային հանրապետական ինստիտուտ (IRI)</p> <p>6. Կոնրադ Ադենաուերի հիմնադրամ</p> <p>Գործընկերներ</p> <ol style="list-style-type: none"> 1. Վիեննայի քաղաքականության 2. Ավստրիայի Եվրոպայի և միջազգային հարաբերությունների գործերով դաշնային նախարարություն 3. Թբիլիսիի Զավախիշվիլու անվ. պետհամալսարան 4. Տարտուի համալսարան 5. Բաթումի Ռուսթավելու անվ. պետհամալսարան 		

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրապարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>գրադիում էն վերլուծական հոդվածների և հետազոտությունների պատրաստումամբ, անցկացնում են տարբեր միջոցառումներ և այլն</p> <p>Ղեկավար՝ գործադիր տնօրեն՝ Կորնելի Կակաչիա</p> <p>Կառուցվածք՝ հոգաբարձուների խորհուրդ (2 մարդ, դրկատը Մելանի Սալի, Քոլրի Վելթ): հետազոտողներ (6 մարդ) Հասցե՝ 0180, Ղաղխակիի փ. 2/213, Շքիլիսի, Վրաստան Էլ. փոստ՝ info@gip.ge: Կայքը՝ www.gip.ge</p>			

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
5	<p><u>Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամ</u></p> <p>(GFSIS - Georgian Foundation for Strategic International Studies;</p> <p>საქართველოს სტრატეგიისა და საერთაშორისო ურთიერთობების კვლევის ფონდი)</p>	<p><u>Հիմնադրվել է՝</u> 1998թ.</p> <p><u>Հիմնադրման վայրը՝</u> Թբիլիսի, Վրաստան</p> <p><u>Կարգավիճակ՝</u> ոչ կառավարական, ոչ ամենաբարձր նպատակներ</p> <p><u>Գործունեության նպատակները և ուղղությունները՝</u></p> <p>Նպաստել պետության քաղաքական որոշումների կայացման գործընթացի բարելավմանը՝ զիտական հետազոտությունների և վերլուծությունների, զիտավերլուծական կադրերի և քաղաքական գործիչ-</p>	<p>Վերջին երկու տարում՝ ավելի քան 30 հրատարակում, որոնցից են.</p> <ol style="list-style-type: none"> 1. Georgia Homeland Defense: Challenges and Perspectives. Expert Opinion, No. 6. Հեղինակ՝ Nodar Kharshiladze. (2013) 2. Georgia's Foreign Policy Challenges in the Medium Term. Հեղինակ՝ Archil Gegeshidze (2013) 3. Georgia-Russia: From Negative to Positive Uncertainty. Հեղինակ՝ Alexander Rondeli (2013) 4. Azerbaijan and Georgia: The Enduring Strategic Importance of the South Caucasus East-West Corridor. 	<p><u>Ավելի քան 40-ն են, բայց հիմնականները հետևյալներն են.</u></p> <ol style="list-style-type: none"> 1. U.S. Department of State 2. U.S. Embassy, 3. European Commission 4. EU Delegation in Georgia 5. British Embassy; 6. Swedish International Development Cooperation Agency (Sida) 7. Ministry of Foreign Affairs of Finland 8. Canadian International Development Agency (CIDA) 9. Swiss Agency for Development and Cooperation; 10. Open Society Georgia Foundation; 11. Friedrich Ebert Stiftung (FES) 12. RAND Corporation 	<p>GFSIS-ն չի մտնում Փենսիլվանիայի համալսարանի կենտրոնների ցուցակում</p> <p>GFSIS-ն բարձր հեղինակություն ունի Վրաստանի նախորդ իշխանության համար, բայց ազդեցությունը կորցրեց և չի վերականգնել ստասոր՝</p> <p>2006թ. սկսվեց 10-ամյա նախագիծ Վրաստանի անվտանգության սպանալիքների ուսումնասիրման վերաբերյալ: Նախագիծ շրջանակում հիմնվեց «Վրաստանի անվտանգության վերլուծության կենտրոնը» (GSAC - Georgian Security Analysis Center);</p>

† Հիմնադրամի փորձագետ Արչիլ Գեգեշիձեն 2013թ. նշանակվել է ԱՄՆ-ում Վրաստանի դեսպան, իսկ նրա գործընկեր Լադո Պապայան 2014թ. դարձել է Թբիլիսիի Զավթիչվիլու անվ. պետական լրատվականի ղեկավար:

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>ների պատրաստումն վերջում (ազգնականական հարցերի ոլորտում):</p> <p>նախաձեռնում է Վրաստանի ազգային անվտանգության հնարավոր պահանջները և արտադրում է խորհրդատվություններ երկրի ղեկավարությանը:</p> <p>հիմնվում է արտաքին քաղաքականության և տնտեսության, տարածաշրջանային անվտանգության ոլորտների ռազմավարական հետազոտությունների վրա:</p> <p>հրատարակում է տեղեկագրեր, վերլուծական հրատարակումներ, հետազոտական գեկույցներ՝ ստացվող և էլեկտրոնային ձևով</p>	<p>Հեղինակ՝ David J. Smith (2014)</p> <p>5. Behind the Ukrainian Crisis. Հեղինակ՝ Giorgi Gvinadze (2014)</p> <p>6. European Union-Georgia Political Association: Scope and Ambition. Expert Opinion #26. Հեղինակ՝ Kakha Gogolashvili (2014)</p> <p>7. Iran And Georgia – Relations Could Be Closer. Հեղինակ՝ Alexander Rondeli (2014)</p> <p>8. Georgia: Buffer or NATO Ally? Հեղինակ՝ Tornike Turmanidze (2015)</p>	<p>13. Graduate Institute of International Studies, Geneva:</p> <p>14. Brookings Institution</p> <p>15. Caucasus Policy Institute, King's College, London</p> <p>16. Center for International Security and Cooperation, Stanford University</p> <p>17. EU Institute for Security Studies</p> <p>18. George C. Marshall European Center for Security Studies</p> <p>19. US Atlantic Council</p> <p>20. SAIS/Johns Hopkins University</p> <p>21. Eurasia Partnership Foundation:</p> <p>22. European Centre for Minority Issues</p> <p>23. Turkish Cooperation and Coordination Agency</p>	<p>საქართველოს უსაფრთხოების ანალიზის ცენტრი</p>

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>Նաև կազմակերպում է հրատարակային քննարկումներ, սեմինարներ, կոնֆերանսներ, թրեյնինգներ և դպրոցներ</p> <p>Ղեկավար՝ Տնօրեն՝ Ալեքսանդր Ռոնդելի՝</p> <p>Կառուցվածք՝ հոգաբարձուների խորհուրդ; աշխատակիցներ՝ 10 մարդ</p> <p>Հասցե՝ 0108, Չիբաձեի փ. 3ա, Թրիլիսի, Վրաստան Հեռ.՝ +(995 32) 247 35 55; Էլ. փոստ՝ gfsis@gfsis.org Կայքը՝ www.gfsis.org</p>		<p>Հիմնարկի բյուջեն, որոշ տվյալներով, տատանվում է տարեկան \$500-1 մլն-ի սահմաններում</p>	

՝ Ալեքսանդր Ռոնդելին վարձանվել է աղյուսակի կազմման պահին: Նրա հաջորդի անունը դեռ չի եղել:

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոկտրներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>Ընդհանուր տվյալներ</p> <p>հասարակության միջև; իրականացնում է հետազոտություններ արտաքին քաղաքականության ոլորտում; աջակցում է քաղաքացիական հասարակության կայացմանը; տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մոնիթորինգ</p> <p><u>Ղեկավար՝</u> գործադիր տնօրեն՝ Էկա Ուրուշաձե</p> <p><u>Կառուցվածք՝</u> խորհուրդ (5 մարդ); աշխատակիցներ՝ 17 մարդ</p> <p><u>Հասցե՝</u> Դեղիսի 1-ին կրթ. Տճ, Թբիլիսի, Վրաստան Հեռ.՝ +(995 32) 239 90 19;</p>			

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դանդեր և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p><u>Էլ. փոստ</u>՝ office@csrdg.ge <u>Կայքը</u>՝ www.csrdg.ge</p>			
7	<p><u>ՆԱՏՕ և ԵՄ գծով տեղեկատվական կենտրոն</u> (Information Centre on NATO and EU; 6xժԵԼԵՍ ԳՆ ՅՅԹՐՅԱՅՑԹԹԻՐՈՅ ՁԵՆԱԾԵԾ ՆԱՐԵՑՐՈՒԹՅՈՒՆ (ՅԵԾՅԹՈ)):</p>	<p><u>Հիմնադրվել է</u>՝ 2005թ. <u>Հիմնադրման վայրը</u>՝ Թբիլիսի, Վրաստան <u>Մասնագետները</u>՝ Ջուրջիդի Թելավի Բաթում Բուրախա</p>	<p>Գրեթե բոլոր ծրագրերի ունեն տեղեկատվական բաղադրիչ և հաշվարկի ված են Վրաստանի եվրոպական և եվրատանտյան ինտեգրման նպատակով</p>	<p>Հիմնական ցանկերը Վրաստանի կառավարությունն ու Վրաստանում ՆԱՏՕ գրասենյակին են</p>	<p>Աշտակում է նաև 2010-ից Ախալքալաքում գործող «ՆԱՏՕ և ԵՄ» տեղեկատվական կենտրոնին» («Քաղաքացիական կրթությունը կրթական պետության համար» ՀԿ շրջանակում), որը զբաղվում է եվրոպական և եվրատանտյան կառույցներին ինտեգրման գաղափարի քարոզչությամբ</p>
		<p><u>Կարգավիճակ</u>՝ հանրային հրավումքի իրավաբանական անվան (հիմնվել է Վրաստանի Կախագահ Մ. Սամկաշվիլի թիվ 3#752, 2005թ. սեպտեմբերի 19 հրամանի համաձայն)</p>			<p><u>Գործունեության նպատակները և ուղղությունները</u>՝</p>

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>Ընդհանուր տվյալներ</p> <p>աջակցություն՝ Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացին; աշխատում է երկրի ամբողջ տարածքում՝ զբաղվելով Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման տեղեկատվական աջակցությամբ և այդ ուղղության քարտեշությամբ (սեմինարներին, թրեյնինգներին, դասախոսություններին և այլ միջոցներով)</p> <p>Ղեկավար՝ տնօրեն՝ Էլեն Գոցաձե</p> <p>Կառուցվածք՝ 12 աշխատակից</p> <p>Հասցե՝ 0501, Գուդիաշվիլու փ. 7, Թբիլիսի, Վրաստան</p>			

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ (Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարան): Հեռ.՝ +(995 32) 297 16 17 Կայքը՝ http://www.natoinfo.ge	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոկտրինը և գործընկերները	Ծանոթագրություններ
8	Եվրասիայի ինստիտուտ (Eurasian Institute: ევრაზიის ინსტიტუტი):	Հիմնադրվել է՝ 2009թ. Հիմնադրման վայրը՝ Թբիլիսի, Վրաստան Կարգավիճակ՝ ոչ սահմանափակ իրավաբանական անձ	Միջոցառումներ Կոնֆերանս «Արևելյան կրոնական կազմակերպությունները Վրաստանում և դրանց քաղաքական նպատակները» (2013թ. ապրիլ)	Գործընկերները 1. «Վրաստան և աշխարհ» գործակալություն 2. «Գրուզին-ֆորմ» 3. Լև Գուրլիովի անվ. կենտրոն 4. Կովկասագետների գիտական ընկերություն	Հիմնադրվել էր իրենց կենտրոնը համարում են ամերիկյան think tank-երի վրացական անալոգը Ինտսիտուտը շրջանակներում գործում է «Ժողովրդական շարժում» համուն ռուս-վրացական երկխոսության և համագործակցության նախագիծը
		Գործունեության նպատակները և ուղղությունները՝ վերականգնումն է՝ ռուս-վրացական հարաբերությունները և դրանց վերածությունն ու գործնական աջակցությունը: Վրաստանի սոցիալ-			

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոկտրներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>Քաղաքական խնդիրների և արտաքին քաղաքականության մոնիթորինգ և վերլուծություն:</p> <p>վերլուծական հոդվածների պատրաստում:</p> <p>հարցազրույցներ պարբերականներին:</p> <p>կլոր սեղաններ, սեմինարներ:</p> <p>տպագիր նյութերի (գրքեր, տեղեկագրեր) հրատարակում:</p> <p>սցիլոգիական հարցումների և հետազոտությունների իրականացում</p> <p>Ղեկավար՝ Գուլբասաթ Ռեյսիլսաևե</p> <p>Կառուցվածք՝ 6 աշխատակից</p>			

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոկտրիներ և գործընկերներ	Ծանոթագրություններ	
9	<p>Քաղաքականության ուսումնասիրությունների ինստիտուտ</p> <p>(Institute for Policy Studies – IPS;</p> <p>ԼՍԾԽԳՆԱԾՐԵԾԻՐՈՅԾՅՈՅ ԶՐԵԼՈՒԹՅՈՅՈՍ</p> <p>օճևԹՈՒԹՅՈՒ):</p>	<p>Հասցե՝ Կոստավայի փ. 21, 3-րդ հարկ Թբիլիսի, Վրաստան Հեռ.՝ +(995 32) 293 27 89; Էլ. փոստ՝ geurasia@geco@gmail.com Կայքը՝ http://geurasia.org/</p>	<p>Հիմնադրվել է՝ 2002թ.</p> <p>Հիմնադրման վայրը՝ Թբիլիսի, Վրաստան</p> <p>Կարգավիճակ՝ ոչ կառավարական կազմակերպություն</p>	<p>Պաշտոնական կայքում հրատարակումների մասին տեղեկություն չկա</p> <p>Ինստիտուտի ծրագրերի մասին ամենաթարմ տեղեկությունները վերաբերում են 2011-2012թթ.</p> <p>«Ընտրագնազնվածի պրոֆիլը. հարցման արդյունքներ» (“ԵՐԵՅԵՆԹՐԵՆԻՍԻ ԶՐԵԿՏԻՎՈՒՄ ԳԵՂՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻՆԵՐԻ”):</p>	<p>Պաշտոնական կայքում դոկտրիների մասին տեղեկություն չկա</p>	<p>IPS – PASOS-ի (Բաց հասարակության ռազմավարական ստուգիչացիա) հիմնադիր անդամ</p> <p>Փենսիլվանիայի համալսարանի վարկանիշով (2015թ.) գբատ էցրել է 8-րդ հորիզոնականը</p> <p>Կենտրոնական Ազիայի արաջատար կենտրոնների շարքում</p>

N	Կենտրոնի անվանումը	Հնդիանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>ապահովում:</p> <p>ընթացիկ իրավիճակի վերլուծություն, ինչպես նաև ապահովում սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունքներով:</p> <p>աջակցություն գիտահետազոտական աշխատանքների զարգացմանը:</p> <p>գործունեություն ուղղված միջազգային և ապրածաշրջանային համագործակցությանը՝ տարածաշրջանի տնտեսական զարգացման նպատակով:</p> <p>իրականացնում է հետազոտություններ ազգային և տարածաշրջանային տարածաշրջանի տնտեսական զարգացման հարաբերությունների վերաբերյալ,</p> <p>խորհրդատվություն տնտեսական և սոցիալ-</p>	<p>3. <u>GIZ</u></p> <p>4. <u>Eurasia Partnership Foundation</u></p> <p>5. <u>National Association of Local Authorities of Georgia</u></p> <p>6. <u>The National Endowment for Democracy (NED)</u></p> <p>7. <u>Civil Development Agency (CIDA)</u></p> <p>8. <u>SIDA</u></p> <p>9. <u>Deutsche Akademische Austauschdienst (DAAD)</u></p> <p>10. <u>Delegation of the European Union to Georgia</u></p> <p>2013թ. CIESR – Մոնիայական և տնտեսական հետազոտությունների կովկասյան ինստիտուտը NED-ից (National Endowment for Democracy) ստացել է \$31,895</p> <p>դրամաշնորհ տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ քաղաքացիական հասարակությանը հաշվետվողականության</p>	<p>վին հետազոտողներից է</p>	

N	Կենտրոնի անվանումը	Հնդիանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>Հնդիանուր տվյալներ</p> <p>լական քաղաքականության հարցերի վերաբերյալ;</p> <p>կրթական ծրագրերի նախաձեռնում տևողությունը քննարկում;</p> <p>գրքերի, պարբերական հետազոտությունների հրատարակում;</p> <p>աջակցություն ԶԼՄ-ի և ինտերնետի միջոցով գիտելիքների փոխանցման գործին;</p> <p>այս ամենի հիման վրա իրականացվում է խորհրդատվություն բարձր շահագրգիռ անձանց և մարմիններին, որոնք մասնակցում են քաղաքական որոշումների կայացմանը քաղաքականության, տնտեսության և սոցիալական քաղաքականության ոլորտներում</p>		<p>Դոնորներ և գործընկերներ</p> <p>ծրագրերի իրագործման համար</p>	

N	Կենտրոնի անվանումը	<p>Շտեխանուր տվյալներ</p> <p>Ղեկավար՝ գործադիր տնօրեն՝ Թեմուր Թորոյիսալա</p> <p>Կառուցվածք՝ 8 հիմնադիրներ տնօրենների խորհուրդ՝ 4 անդամ խորհրդի նախագահ՝ յուլիանո, պրոֆեսոր Միլոն Գեգելաշվիլի գիտխորհուրդ՝ 8 անդամ</p> <p>Հասցե՝ 0171, Բ.Աբաշիձեի փ. 43/15, Թբիլիսի, Վրաստան</p> <p>Հեռ.՝ +(995 32) 272 90 21; Էլ. փոստ՝ info@cest.org; Կայքը՝ www.cest.org</p>	Հետազոտություններ և հրապարակումներ (վերջին 2 տարվա)	Ղեկավարներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
29	<p>Համաշխարհային փորձը՝ Վրաստանի համար</p> <p>(WEG - World Experience)</p>	<p>Հիմնադրվել է՝ 2012թ.</p> <p>Հիմնադրման վայրը՝ Թբիլիսի, Վրաստան</p>	<p>Վերջին 2 տարվա հոդվածները</p> <p>1. Energy Community Membership of Georgia (31.01.2015)</p>	<p>Գործընկերներ</p> <p>1. United Nations Development Program (UNDP -Georgia) 2. United States Agency for International Development</p>	

N	Կենտրոնի անվանումը	Շնորհանոթ տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
	<p>for Georgia; Ձեռնարկը ընդգրկում է (և չի ընդգրկում):</p>	<p>Կարգավիճակ. ոչ կարավարական կազմակերպություն, անկան ուղեղային կենտրոն (think tank);</p> <p>Գործունեության նպատակները և ուղղությունները. աջակցություն վրացական հասարակությանը դեմոկրատիայի զարգացմանը, հիմնական ազատ շուկայի, եվրոպական չափորոշիչների ընդունման վրա;</p> <p>իրականացնում է պոլիտիկայի գոտիների հետազոտություն, վերլուծություններ (վշակումներ են երգեհակայի և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում);</p> <p>իրագրում ինտերնետի</p>	<ol style="list-style-type: none"> 2. Assessment of Developments in Georgian Energy Sector In 2014 (15.01.2015) 3. Energy Potential of Timber Resources in Georgian Forests (20.08.2014) 4. Problems in the Energy Sector of Georgia and the Ways of Improvement (19.11.2013) 5. Energy Sector Requires Immediate Reforms (26.03.2013) 6. Greenhouse Gas emissions from Hydropower Reservoirs (17.02.2013) 7. Dunning-Kruger Effect – Ignorant of Own Ignorance (2.01.2013) 	<ol style="list-style-type: none"> 3. Վրաստանի էներգետիկայի նախարարություն 4. International Resources Group 5. Eastern Partnership Civil Society Forum 6. Վերակառուցման և զարգացման էվրոպական բանկ (EBRD) 7. Ilia State University 	

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տեխնիկական նկարագիր:	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Հոտորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>վիճարկ:</p> <p>կիրթություն (նպատակային ուսումնական կուրսերի, սեմինարների և գործնական պարապմունքների կազմակերպում ուսանողների, սանսագետների, պեոծառարողների համար):</p> <p>հանրային բանավեճեր</p> <p>Ղեկավար՝</p> <p>Խորհրդի նախագահ, հիմնադիր և էկոլոգիական հետազոտությունների տեօրեկ Մեղգար Չելիճե</p> <p>Կառուցվածքը՝</p> <p>Խորհրդատվական Խորհուրդ՝ 5 անդամ</p> <p>Խորհուրդ՝ 5 անդամ</p> <p>10 աշխատակից</p> <p>Հասցե՝</p> <p>0179, Պալլաշվիլուր փ. 5,</p>			

N	Կենտրոնի անվանումը	Տարիանույր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>Թբիլիսի, Վրաստան Հեռ.՝ +(995 32) 210 24 52; Էլ. փոստ. weg@weg.ge; Կայքը. http://weg.ge</p>			
30	<p>Տնտեսական քաղաքականության հետազոտության կենտրոն (EPRC - Economic Policy Research Center; ՋրճԻԹԻՅՈՒՆ 33ԸՂՅԾԾԾԾ ՅՐԸԹԾԾԾԾ):</p>	<p>Հիմնադրվել է՝ 2002թ. Հիմնադրման վայրը՝ Թբիլիսի, Վրաստան Կարգավիճակ՝ նշ պետական, ոչ անտարալին հետազո- տական կենտրոն, զբաղվում է տնտեսա- կան խնդիրներով</p>	<p>Հրատարակումներ՝ 1. Two Years in Government: Georgian Dream's performance Review (2015թ. հունիս) 2. Assessing the Effectiveness and Efficiency of e-Services in Georgia (2015թ. մայիս) 3. Focus on Russia: Georgia under Russian Expansionism and Financial Crisis (2015թ. ապրիլ) 4. FOCUS ON ARMENIA: Eurasian Customs Union Crawling Closer to Georgia (2014թ.</p>	<p>Դոնորներ և գործընկերներ 1. OSGF 2. OSI – Open Society Foundations, Think Tank Fund 3. USAID 4. USAID EWMI 5. US Embassy Georgia 6. GIZ 7. Eurasia Partnership Foundation 8. SIDA 9. UNDP 10. Economist Intelligence Unit 11. Institute of Economic and Social Studies 12. Interfaculty Institute for Central and Eastern Europe – Freiburg University 13. TI - Georgia 14. Georgian Young Lawyers'</p>	<p>EPRC-ը Վրաստանի ակտիվ վերածական կենտրոններից է, որը զբաղվում է տնտեսական խնդիրներով, Մթենֆորդի համալսարանի (ՄՄՆ) հետ համատեղ անցկացնում է «Գլոբալ արաջնայրների» ֆորում թբիլիսիում</p>

N	Կենտրոնի անվանումը	Համառոտ տվյալներ	Հետազոտությունները և հրատարակումները (վերջին 2 տարվա)	Դոկտրինը և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>օրբեկալիվ հետազոտություններով և վերլուծություններով:</p> <p>քաղաքացիական հասարակության ինստիտուտների, քաղաքացիական հաստատությունների և ՋԼՄ պոտենցիալի ուժեղացում՝ տնտեսական քաղաքականությանն աղտիվ մասնակցության համար:</p>	<p>5. REGULATORY IMPACT ASSESSMENT GEORGIAN LAW ON SECURITIES MARKET (2014թ. սեպտեմբեր)</p> <p>6. Anti-Crisis Stimulus Package for Economic Recovery (2014թ. օգոստոս)</p> <p>7. Monitoring and Efficiency Analysis of the Rural Aid Program and Regional Projects Fund (2014թ. սեպտեմբեր)</p> <p>8. Socio-economic programs of political parties (Armenia) (2014թ. օգոստոս)</p> <p>9. Socio-economic</p>	<p>Association</p> <p>15. ISET PI - ISET Policy Institute</p> <p>2014թ. տվյալներով՝ EPRC Բյուջեն կազմել է \$ 270 հազ. (\$214 հազ. 2013թ.)</p>	

N	Կենտրոնի անվանումը	Հնդիանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>Ղեկավար՝ Խալսագան Ղալիթ Չկարուս գործադիր տնօրեն՝ Նինա Եվգենիևա</p> <p>Կառուցվածք՝ 10 աշխատակից</p> <p>Հասցեն՝ 0175, Պալիաշվիլու փ. 85/24, 1-ին շենք, 4-րդ հարկ, Թբիլիսի, Վրաստան</p> <p>Հեռ.՝ +(995 32) 220 73 05; Էլ. փոստ՝ info@eprc.ge; Կայքը՝ http://www.eprc.ge</p>	<p>programs of political parties (2014թ. օգոստոս); (Azerbaijan)</p>		
31	<p>Նորարարությունների և բարեփոխումների կենտրոն (IRC - Innovations and Reforms Center; ინოვაციებისა და რეფორმების ცენტრი);</p>	<p>Հիմնադրվել է՝ 2002թ.</p> <p>Հիմնադրման վայրը՝ Թբիլիսի, Վրաստան</p> <p>Կարգավիճակ՝ ոչ կառավարական</p>	<p>Հրատարակումներ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. «Recommendations on immigration» (2015) 2. «Immigration to Georgia» (2015) 3. «Guidelines on Personal Data Protection Issues» 	<p>Դոնորներ և գործընկերներ</p> <ol style="list-style-type: none"> 1. International Center for Migration Policy Development (ICMPD) 2. United Nations High Commissioner for Refugees in Georgia (UNHCR) 3. EU Delegation in Georgia 	

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>կազմակերպություն</p> <p>Ջորժիենության նյաստաները և ռադիոթյունները՝ աջակցություն նորաքաղաքական մտեցումների և քարեփոխումների իրականացմանը:</p> <p>Լինել ուժեղ քաղաքացիական դեմակատար՝ հաջակցություն դեմահաստակյան գործընթացների և օրինակաւորւթյան:</p> <p>աշխատում է նախ անձնական տվյալների անվտանգության ուղղությամբ:</p> <p>կիրառում է տեղեկատվական տեխնոլոլոլաներ օրենքի գերակայության, պետական կառավարման թափանցիկության և արդյունավետ կառավարման հասնելու</p>	<p>4. Monitoring Report on Implementation of the Law of Georgia «on Personal Data Protection» in the Ministries of Georgia (2013)</p> <p>5. «Readmission study in Georgia» (2013)</p> <p>6. Monitoring Report on Implementation of the Agreement between the European Union and Georgia on the Facilitation of the Issuance of Visas (2013)</p>	<p>4. European Network on Statelessness</p> <p>5. International Organisation for Migration - Georgia</p> <p>6. Danish Refugee Council</p> <p>7. Management Systems International</p> <p>8. International Foundation for electoral Systems</p> <p>9. Ministry of Justice of Georgia</p> <p>10. Public Service Development Agency</p> <p>11. Consular Department of the Ministry of Foreign Affairs</p> <p>12. Ministry of Internal Affairs</p> <p>13. Ministry of Internally Displaced Persons from the Occupied Territories, Accommodation and Refugees of Georgia</p>	

N	Կենտրոնի անվանումը	Շտաբի անուր տվյալներ	Հեռագրադասություններ և հրավարականներ (վերջին 2 տարվա)	Դռնօրներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>Խամար: աջակցում է բաղաբա- ցկառության և միգրացիայի ուղրտի ընթացիկ բարե- փոխումներին: իրավական միջավայրի բարելավմանը: պետծառայողների որա- կավորման մակարդակի բարձրացմանը</p> <p>Ղեկավար գործաղիր տնօրեն՝ Նաստ Գագինիձե (3 տարով)</p> <p>խորհրդի նախագահ՝ Մարիամ Չուբուրիձե</p> <p>Կառուցվածք խորհուրդ՝ 7 անդամ 14 աշխատակից</p> <p>Հասցե 0160, Սաբուրթալուի փ. 32, թբիլիսի, Կրաստան Հեռ.՝ +(995 32) 255 20 01;</p>			

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տիպակերտ Էլ. փոստ՝ info@irc.ge : Կայքը՝ http://irc.ge	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Ծանոթագրություններ
32	<p>Վրաստանի քարեփոխումների ասոցիացիա</p> <p>(Georgian Reforms Associates – GRASS; საქართველოს რევოლუციის ასოციაცია):</p>	<p>Հիմնադրվել է՝ 2012թ. հոկտեմբերին</p> <p>Հիմնադրման վայրը՝ Թբիլիսի, Վրաստան</p> <p>Կարգավիճակ՝ անկուսակցական, ոչ կառավարական գիտահետազոտական (think tank) և իրավապաշտպան կազմակերպություն</p>	<p>GRASS-ն ընդդիմախոսում է երկրի իշխանություններին իր «Factcheck» նախագծի վիճարկ (վիճի վերլուծական գրառումներ), որտեղ ստացիացիայի փորձագետները ստուգում և հետազոտում են երկրի ղեկավարության յուրաքանչյուր հայտարարություն Վրաստանի պրոպագնդիստական և տնտեսության վերաբերյալ</p>	<p>1. Open Society Foundation</p> <p>2. Open Society Think Tank Fund (OTTF)</p> <p>3. Visegrad Fund</p> <p>Մտերծվել է Վրաստանի ԱԳՆ նախկին փոխարտգործնախարար Էլենե Խոշթարիայի կողմից (Միխայիլ Սաակաշվիլու օրոք)</p> <p>Անդամների թվում կան Սաակաշվիլու նախկին կառավարության վիշադ ֆունկցիոներներ</p>
	<p>Պրոծուկտային կայտարարումները և ռադիոթյունները՝ հետազոտում և վերլուծում է պետական քաղաքականությունը, խորհրդատվություն է տրամադրում պետական քաղաքականու-</p>	<p>Հրատարակումներ՝ (Policy papers)</p> <p>1. Analyzing Ways to Promote Research in Social Sciences in Georgia's Higher Education Institutions.</p>		

N	Կենտրոնի անվանումը	Շնչհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոկտրներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>թյան, անվտանգության, հակամարտությունների և պետական կառավարման բարեփոխումների ոլորտներում:</p> <p>2013-14թթ. գերակա են համարվել հետևյալ ոլորտները՝ արտաքին քաղաքականություն, անվտանգություն, գաղթված տարածքներ և հարաբերությունների կարգավորման գործընթաց, ազգային փոքրամասնություններ և բնակչության խոցելի շերտեր, կրթություն, եվրատանտյան ինտեգրացիա և այլն:</p> <p>գրավում է երկրի ղեկավարության և հասարակության միջև քաղաքական բաց բանավեճեր նախաձեռնելով, կազմակերպում է փակ հանդիպումներ</p>	<p>Authors: Sergi Kapanadze, Meri Maghlakelidze, Giorgi Tskhadiaia, Alexander Tarkhan-Mouravi, Khatuna Martskvishvili, Ketevan Mukhiguli, Ekaterine Basilaia, Mary Gabashvili, Darejan Dvalishvili (01-08-2014)</p> <p>(Policy Briefs)</p> <p>1. A new stage in the relations between Georgia and Russia: necessity to form an antiannexation strategy (14-11-2014)</p> <p>2. Amendments in the Immigration Policy and challenges resulting from it (17-12-2014)</p> <p>3. The Geopolitical</p>		

N	Կետարների անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտությունները և հրատարակումները (վերջին 2 տարվա)	Դեմոստրներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>Քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների վիթի</p> <p>Chatham House ռեզիմոյ: հրատարակում է վերլուծական տեղեկագրեր պետական քաղաքականության կարևոր թեմաներով, անում է առաջարկություններ, խորհրդատվություն: ակտիվ աշխատանք ԶԼՄ-ի և սոցիալիզմի հետ իր հետազոտությունների և կարծիքի տարածման համար</p> <p>Ղեկավար՝ համահիմնադիրներ՝ Մերգի Կապանաձե և Էլենե Խոշթարիա</p> <p>Կառուցվածք՝ հիմնադիրներ՝ 12 սարյոց 8 աշխատակից</p>	<p>Context of the Abkhaz Crisis and its Implications. Helen Khosharia (23-09-2014)</p> <p>4. Alternatives to Durable Housing Solutions: Privately Accommodated IDPs in Georgia Policy Paper. Dali Khomeriki, Sergi Kapanaдзе, Giorgi Tskhadava (01-03-2014) և այլն</p>		

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p><u>Հասցե՝</u> 0194, Միգլիկի փ. #27, Թբիլիսի, Վրաստան <u>Հեռ.</u> +(995 32) 230 90 25; <u>Էլ. փոստ՝</u> grass@grassgroup.org; <u>Կայքը՝</u> http://grass.org.ge</p>			
33	<p>«Կովկասյան տուն» վշակութային կապերի կենտրոն (Cultural relations Center "Caucasian House"; კულტურულ ურთიერთობათა ცენტრი "კავკასიური ხახლი");</p>	<p><u>Հիմնադրվել է՝</u> 1993թ. <u>Հիմնադրման վայրը՝</u> Թբիլիսի, Վրաստան <u>Կարգավիճակ՝</u> վշակութային-կրթական, խաղաղարար կենտրոն, ոչ կառավարական կազմակերպություն <u>Գործունեության նպատակները և ուղղությունները</u> աշխատանք է իրականացնում հետևյալ</p>	<p>1. Վրաստանը, Ռուսաստանը և Հյուսիսային Կովկասը օպտիմալ քաղաքականության որոնումներում 2. Հետազոտություն՝ «Եվրասիականության թերահավաստությունը վրացական հասարակական քաղաքական սպեկտրում» «Կովկասյան տան» «Ուկրաինա. ճգնաժամի հարթանաբում երկխոսության միջոցով» ծրագրի շրջանակում</p>	<p>1. Open Society – Georgia Foundation (OSGF) 2. European Foundation HORIZON 3. Swiss foundation ANDROSORBIS 4. Heinrich Böll Foundation</p>	<p>Կենտրոնն սկսել է իրականացնել <u>“Ukraine – Out of the Crisis through Dialogue”</u> ծրագիրը (2015) ռուս-ուկրաինական հաշտեցման վերաբերյալ, մինչ այդ ակտիվացրել էր <u>“Georgian-Russian Dialogue for Peace and Cooperation”</u> նախագիծը (2011)</p>

N	Կենտրոնի անվանումը	Ընդդիմուք տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոկտրինը և գործընկերներ	Օստրաքացություններ
		<p>ծրագրերի շրջանակում.</p> <ol style="list-style-type: none"> 1. Վշակություն ծրագիր 2. Կովիկայան հեռագրատությունների ծրագիր 3. Խաղաղարարության և ազգային փոքրամասնությունների ինտեգրման ծրագիր <p><u>Ղեկավար՝</u> Խորհրդի նախագահ՝ Նաիրա Գելաշվիլի գործադիր տնօրեն՝ Գևորգի Կանաշվիլի</p> <p><u>Կառուցվածք՝</u> գերագույն նստաշրջան՝ 4 մարտ խորհուրդ՝ 4 մարտ 16 աշխատակից</p> <p><u>Հասցե՝</u> Թաբիսեի փ. 20, Թբիլիսի, Վրաստան</p>	<p>հրատարակվել է 4 նոր հրատարակում</p> <ol style="list-style-type: none"> 1. Ուկրաինա-Ռուսաստան. երկկողմ հարաբերությունների զարգացման սցենարի վերալիցքավորում 2. Տնտեսական բարեփոխումներ. շուկայի ազատականացումն ընդդեմ սոցիալական պատասխանատվության. Վրաստանի փորձը՝ որպես դաս Ուկրաինայի համար 3. Ղրիմի և Դոնբասի բնակչության հետ հարաբերությունների հաստատման Ուկրաինայի ռազմավարությունը: Վրաստանի փորձը՝ դաս Ուկրաինայի համար 4. Ռուս-ուկրաինական 		

N	Կենտրոնի անվանումը	Ընդհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>Հեռ.՝ +(995 32) 293 62 93; Էլ. փոստ՝ info@caucasianhouse.ge; Կայքը՝ www.caucasianhouse.ge</p>	<p>հայկամբարությունը. լարվածության թուլացման պոտենցիալը. վերլուծական աշխատանքների ժողովածու</p>		
34	<p>Մոցիական գիտությունների կենտրոն (CSS - Center for Social Sciences; სოციალურ მეცნიერებათა ცენტრი);</p>	<p>Հիմնադրվել է 2003թ. Հիմնադրման վայրը՝ Թբիლისի, Կրասսის Կարգավիճակ՝ նշ առևտրային, ոչ կարավարական կազմակերպություն</p>	<p>1. Two Years of the Dream Georgian Foreign Policy During the Transition; 2. Environmental Sustainability of Georgian Economic Policies in 2004-2013. Ia Eradze (2014թ. հունիս) 3. A Historical Review of Drug Related Affairs in Georgia. Elene Japaridze (2014թ. ապրիլ) 4. Drugs, Gender and Stereotypes. Elene Japaridze (April 2014) 5. The comparative analyses of Men and</p>	<p>Դոնորներ 1. Open Society Foundations 2. Open Society Georgia Foundation 3. Delegation of the European Union to Georgia 4. United Nations Population Fund 5. International Charity Foundation Cartu 6. International Foundation for Electoral Systems 7. Embassy of the United States in Georgia 8. Academic Swiss Caucasus Net (ASCN) 9. Heinrich Boell Foundation 10. Eurasia Partnership Foundation 11. Kvinna Till Kvinna</p>	

N	Կենտրոնի անվանումը	Հեղինակուր տիպակերպ	Հետազոտությունները և հրատարակումները (վերջին 2 տարվա)	Գտնորները և գործընկերները	Ծանոթագրություններ
	<p>գիտական ցանցում՝ անցիալական գիտությունների պրոֆեսիոնալ և էթիկական ստանդարտների ստեղծման համար: աջակցություն գիտական հետազոտությունների և դասավանդում փաստական տիպակերպի հիման վրա:</p> <p>ակադեմիական, կիրառական և կազմակերպչական գիտական հետազոտություններ սոցիալական գիտությունների ոլորտում: հրատարակչական գործունեություն: կոնֆերանսներ և խոսեցումներ միջազգային գիտական ցանցում: հրատարակչական գործունեություն, որը ներառում է ակադեմիական գիտական գրականության և պայքարական</p>	<p>Women with drug use problems: Elene Japaridze (2014թ. ապրիլ)</p> <p>6. Georgia Through a Glass, Darkly, Stephen Jones (2013թ. նոյեմբերի 18)</p> <p>7. How European Are We? Explaining Georgia's Westward Aspiration, Salome Minesashvili (2013թ. նոյեմբերի)</p> <p>8. Gender Attitudes and Perceptions among Young People in Georgia, Japaridze Elene, Zhghenti Nina, Barakia Maia, Amashukeli Mariam (2013թ. հունիս)</p> <p>9. Concept of Happiness and Happiness in Georgia: Perceptions and Correlates of</p>	<p>12. Westminster Foundation for Democracy</p> <p><u>Գործընկերներ</u></p> <p>1. Department of Politics and International Relations, University of Oxford</p> <p>2. Rutgers, the State University of New Jersey Mount Holyoke College</p> <p>3. American Chamber of Commerce in Georgia</p> <p>4. Georgian Institute of Public Affairs</p> <p>5. International Institute for Education Policy, Planning and Management</p> <p>6. 42 Article of the Constitution</p> <p>7. Ivane Javakishvili Tbilisi State University</p> <p>8. International Black Sea University</p>		

N	Կենտրոնի անվանումը	Շնչհանուր տվյալներ	Հետազոտություններ և հրատարակումներ (վերջին 2 տարվա)	Դոնորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
		<p>ների հրատարակում; թարգմանչական գործունեություն; տվյալների էլեկտրոնային շտեմարանի ստեղծում սցիպական գիտությունների ոլորտում աշխատող հետազոտողների և մասնագետների համար;</p> <p>միջդիսցիպլինար հետազոտությունների անցկացում և այլն</p> <p>Ղևկավար՝ Մակր (Մանանա) Միկաբերիձե՝ գործադիր տնօրեն՝ Թամար Քունցուրիա՝ խորհրդի նախագահ՝ Նիլ Մակֆարլեն</p> <p>Կատուցվածք՝ միջազգային խորհրդատվական խորհուրդ՝ 3 մարդ</p>	<p>Reported Overall Happiness. Lia Tsuladze, Marine Chitashvili, Nani Bendeliani, Luiza Arutinovi (2013թ. հունիս)</p>		

N	Կենտրոնի անվանումը	Հետազոտությունները և հրատարակումները (վերջին 2 տարվա)	Դոկտորներ և գործընկերներ	Ծանոթագրություններ
	<p>Բաղիանուր տվյալներ</p> <p>Խորհուրդ՝ 6 մարդ աշխատակիցներ՝ 10 մարդ</p> <p>Հասցե՝ 0179, Պալլազվիլու փ. 33, Թբիլիսի, Վրաստան Հեռ.՝ +(995 32) 229 00 95; Էլ. փոստ՝ contact@ucss.ge; Կայքը՝ www.ucss.ge</p>			

ԱՂԲԵՋԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Անուշավան Բարսեղյան՝

Հետազոտական կենտրոնների կամ, ինչպես ընդունված է հաճախ անվանել՝ «ուղեղային կենտրոնների» (ՈւԿ) առաջացման և զարգացման միտումներն անմիջականորեն կապված են երկրի ներքին քաղաքական և տնտեսական կառուցվածքի, ներքաղաքական կայունության և հասարակական պահանջի հետ: Հաշվի առնելով նախկին խորհրդային հանրապետություններում դրանց ձևավորման գործում արևմտյան կազմակերպությունների որոշիչ դերը՝ կարող ենք արձանագրել, որ նշված երկրներում ոչ պետական վերլուծական կենտրոնների ստեղծումն ու դրանց գործունեության հիմնական ուղղություններն առավելապես պայմանավորված են արտաքին ազդակներով:

Ադրբեջանում, ելնելով ներքին օրենսդրության պահանջներից, ոչ պետական վերլուծական կենտրոնները հիմնականում գրանցվում են որպես ոչ կառավարական հասարակական կազմակերպություններ:

1994-1996թթ. գրանցվել են առաջին նմանատիպ կենտրոնները, 2001 թվականից նկատվել են գործընթացի ակտիվացման միտումներ, ինչի արդյունքում 2006թ. գրանցված ՀԿ-ների թիվը հասել է 548-ի¹:

Մինչ 2007թ. Ադրբեջանում գործող ՈւԿ-ները հիմնականում բախվում են ընդհանուր դժվարությունների, որոնք պայմանավորված են երկրի առանձնահատկություններով և նպատակային կերպով ստեղծված չեն այդ կենտրոնների աշխատանքներն արգելակելու համար:

¹ «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ-խորհրդական:


¹ AZƏRBAYCANDA ARAŞDIRMA VƏ BEYİN MƏRKƏZLƏRİ. FƏRHAD MƏMMƏDOV, TAHİRƏ ALLAHYAROVA, Bakı 2013:

Իրավիճակը սկսում է փոխվել 2007թ., երբ ԱՀ նախագահի կողմից հաստատվում է Ադրբեջանի Հանրապետության ոչ կառավարական կազմակերպությունների պետական աջակցման հայեցակարգը, այնուհետև ստեղծվում են Ադրբեջանի նախագահին կից Ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման պետական խորհուրդը և առաջին պետական ՈւԿ-ները՝ ԱՀ նախագահին առնթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը և ԱՀ Էկոնոմիկայի և արդյունաբերության նախարարության Տնտեսական բարեփոխումների գիտահետազոտական ինստիտուտը (այն հիմնադրվել է դեռևս խորհրդային տարիներին (1964թ.) և ներկա ձևով վերակազմավորվել արդեն 2007թ.):

ԱՀ իշխանությունները երկրի ներսում գործող հետազոտական-փորձագիտական կենտրոնները վերահսկելու, ինչպես նաև դրանք քարոզչական նպատակներով օգտագործելու համար մի կողմից վերոնշյալ խորհրդի կողմից անցկացվող մրցույթների միջոցով ֆինանսավորում են ՀԿ-ներին, մյուս կողմից՝ օրենսդրական փոփոխություններով խոչընդոտներ հարուցում արտերկրյա դրամաշնորհներ ստանալու ճանապարհին: Ամեն ինչ արվում է կենտրոնների ֆինանսական կախվածությունը պետությունից մեծացնելու նպատակով: Քաղաքացիական հասարակության զարգացումը խթանելու անվան տակ 2014թ. «ՀԿ-ների մասին օրենքում» իրականացված փոփոխությունների արդյունքում արտերկրյա այն կազմակերպությունները, որոնք ցանկություն կհայտնեն Ադրբեջանի տարածքում դրամաշնորհային մրցույթներ անցկացնել, նախապես պետք է թույլտվություն ստանան ԱՀ պատկան մարմիններից, որոնք կորոշեն կոնկրետ մրցույթի հայտարարման նպատակահարմարությունը: Այն ՀԿ-ները, որոնք, այնուամենայնիվ, կստանան դրամաշնորհներ արտերկրից, պարտավոր են ապահովել առավելագույն թափանցիկություն և որոշակի պարբերականությամբ ֆինանսական հաշվետվություն ներկայացնել պետական մարմիններին:

ՈւԿ-ների արտերկրյա ֆինանսական հոսքերի կրճատմանն ուղղված հնգամյա քաղաքականությունից հետո նույնիսկ կենտրոնների ֆինանսավորման համամասնությունը 2012թ. տվյալներով ունի հետևյալ տեսքը¹.

¹ Այս և զեկույցի հետագա դիագրամները կազմվել են Ֆ.Մամեդովի գրքում բերված տվյալների հիման վրա:



Ինչպես է պատկերը փոխակերպվել 2014թ. մի շարք իրավապաշտպանների ձերբակալությունից, միջազգային կազմակերպությունների աշխատանքներն ակնհայտորեն խոչընդոտելուց և որոշ տեղական ՀԿ-ների փակվելուց հետո՝ դեռ պարզ չէ:

2014-ից ՀԿ-ներն արհեստական դժվարությունների են հանդիպում նույնիսկ նոտարական գրասենյակներում, որտեղ պետք է հաստատվեն դրամաշնորհային պայմանագրերի թարգմանությունները: Որոշ բանկեր հրաժարվում են անգամ ՀԿ-ների համար հաշիվներ բացել:

Նկատի ունենալով Ադրբեջանի Ու Կ-ների վրա վերահսկողություն հաստատելու համար իրականացվող նպատակային քաղաքականությունում վերոհիշյալ՝ ԱՀ նախագահին կից Ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման պետական խորհրդի առանցքային դերակատարումը՝ առանձին ներկայացնենք այն:

ԱՀ նախագահին կից Ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման պետական խորհուրդ

Խորհուրդը ստեղծվել է 2007թ. դեկտեմբերի 13-ին ԱՀ նախագահի հրամանագրով: Այն, որպես հատուկ մարմին, համակարգում է ոչ կառավարական կազմակերպությունների հետ պետության փոխգործակցությունը: Գտնվում է Բաքվում, պաշտոնական կայքէջը՝ www.cssn.gov.az, որը ներկա պահին ան-

հասանելի է: Կառույցի նախագահն է ԱՀ Միլի մեջլիսի պատգամավոր Ազալ Գուլիևը, կառավարման խորհրդի բոլոր 11 անդամներին (որոնց թվում 8-ը՝ ՀԿ-ների, 3-ը՝ պետական մարմինների ներկայացուցիչներ) նշանակում է ԱՀ նախագահը՝ 4 տարի ժամկետով:

Ֆորմալ առումով խորհուրդը կոչված է հասարակության մեջ ձևավորել փոխհարաբերությունների նոր մոդել, արդիականացնել քաղաքացիական հասարակության ինստիտուտները, նպաստել քաղաքացիական նախաձեռնությունների աճին, խրախուսել ՀԿ-ների գործունեությունն ազգային շահերի պաշտպանության ոլորտում, ֆինանսավորել պետության և հասարակության համար կարևոր ծրագրեր և նախագծեր:

Հիմնական նպատակներն են արտերկրում և միջազգային կազմակերպություններում Լեռնային Ղարաբաղի հակամարտության առնչությամբ Ադրբեջանի «արդարացի» դիրքորոշման քարոզչության իրականացումը, «ադրբեջանիզմի» գաղափարախոսության տարածումը, միջազգային հանրությանն Ադրբեջանի ինտեգրման աջակցումը, արտերկրում և միջազգային կազմակերպություններում գործող ՀԿ-ների հետ համագործակցության խորացումը:

Խորհրդի նախագահ Ա.Գուլիևի ներկայացրած 2014թ. հաշվետվության համաձայն, հաշվետու տարում իրականացվել է 386 նախագիծ, այդ թվում՝ 640 թրեյնինգ, 287 սեմինար, տպագրվել է 23 գիրք, նկարահանվել 8 ֆիլմ, ստեղծվել 5 կայքէջ՝ ընդհանուր առմամբ ծախսելով մոտ \$3.75 մլն (ադրբեջանական ՀԿ-ների կախվածությունն արտերկրյա ֆինանսավորումից թուլացնելու նպատակով խորհրդի ղեկավարությունը 2014թ. դիմել է ԱՀ կառավարությանը՝ հատկացվող ֆինանսական միջոցները մի քանի անգամ ավելացնելու խնդրանքով): 2008-2014թթ. խորհուրդն իրականացրել է մոտ \$38,4 մլն-ի ծրագրեր:

Եվրոպական մի շարք քաղաքների համալսարաններում ստեղծվել են ԼՂ հակամարտությունը ներկայացնող անկյուններ, որոնք տարածում են միակողմանի ադրբեջանամետ տեղեկատվություն հիմնախնդրի պատմության, լուծման ուղիների և հայկական կողմի «ոչ կառուցողական» դիրքորոշման մասին: 2014թ. ընթացքում ադրբեջանական ոչ կառավարական կազմակերպությունների միջոցով 13 երկրներում իրականացվել է 27 նախագիծ,

որոնց միջոցով փորձ է արվել ներկայացնել «խոջալուի ցեղասպանության» մասին աղբյուրաբանական «ճշմարտությունը»:

2014թ. կառույցի անցկացրած դրամաշնորհային մրցույթի Միջազգային համագործակցություն բաժինը ներառում է հետևյալ կետերը.

1. Հյուսիսային Ամերիկայում և ԵՄ երկրներում Լեոնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված միջոցառումների իրականացում:
2. Համագործակցություն աղբյուրաբանական լոբբինգ իրականացնող արտասահմանյան ոչ կառավարական կազմակերպությունների հետ:
3. Աղբյուրաբանի վերաբերյալ լրատվության տրամադրում արտերկրյա ՋԼՄ-ին:
4. Լեոնային Ղարաբաղի թեմայով ստեղծված կայքէջերի թարմացում և թարգմանություններ տարբեր լեզուներով:
5. «Աղբյուրաբանի դեմ ուղղված «ցեղասպանությունների» և «հայկական ահաբեկչության» թեմայով արտերկրյա լսարանների համար տեսանյութերի և գրաֆիկական նյութերի պատրաստում: Արտասահմանյան ճանաչված մշակութային և արվեստի գործիչների, մարզիկների և այլ ազդեցիկ անձանց մասնակցությամբ այս թեմաներով կարճ հոլովակների և երաժշտական տեսագրությունների պատրաստում օտար լեզուներով:
6. ԼՂ հակամարտության պատմության վերաբերյալ օտար լեզուներով էլեկտրոնային աուդիոգրքերի շտեմարանների ստեղծում, դրանց հարմարեցում և թողարկում շարժական սարքերի (հեռախոս, պլանշետ) համար:
7. ԼՂ հակամարտության և աղբյուրաբանների դեմ «հայերի իրագործած ցեղասպանությունների» ուսումնասիրության նպատակով արտերկրյա հետազոտողների և ուսանողների կրթաթոշակային ծրագրերի իրագործում:
8. Աղբյուրաբանի միջազգային դիրքերի ուժեղացման նպատակով արտերկրյա ազդեցիկ ՋԼՄ ներկայացուցիչներից, ազատ լրագրողներից և ակտիվ բլոգերներից բաղկացած խմբերի Աղբյուրաբան այցերի կազմակերպումը ներառող ծրագրերի իրականացում¹:

¹ www.e-qht.az

Խորհուրդն ամեն տարի ֆինանսավորում է օտարերկրյա տասնյակ կազմակերպությունների (2014թ. մոտ 30), որոնց հետ համագործակցության հիմնական ուղղությունների թվում, բացի վերը նշված հարցերից, մտնում են նաև Ադրբեջանը որպես հանդուրժողականության երկիր՝ միջմշակութային երկխոսության հաջող օրինակ ներկայացնելը (այս համատեքստում հաճախ կազմակերպվում են հանդիպումներ օտարերկրացի ուսանողների և երիտասարդ փորձագետների հետ), ինչպես նաև իսլամաֆոբիայի, քսենոֆոբիայի և ռասիզմի դեմ պայքարը: Վերջին հարցի հրատապությունը բացատրվում է ՌԴ տարածքում ադրբեջանցիների նկատմամբ «ռասիզմի» հաճախակի դրսևորումներով, ինչի դեմ պայքարելու նպատակով խորհուրդը փորձում է համագործակցել ՌԴ քաղաքացիական հասարակության կառույցների հետ:

Միաժամանակ, խորհուրդը փորձում է հնարավորինս փակ պահել իրենց հետ համագործակցող օտարերկրյա կառույցների մասին տեղեկատվությունը, առաջին հերթին, հայկական հնարավոր հակազդեցությունից խուսափելու համար:

Խորհրդի միջազգային կապերի ուսումնասիրությունը վկայում է թուրքական կառույցների հետ սերտ համագործակցության մասին: Դրա հիմքում դրված է Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված «հայկական քարոզչության» դեմ համատեղ պայքարը, և որպես հակակշիռ՝ «Խոջալուի ցեղասպանությունը» միջազգային հանրությանը ներկայացնելը: Այս նպատակով խորհրդի և Ստամբուլի առևտրային պալատի աշխատանքային խմբին վերապահված է ՀԿ-ների ներգրավվածության ապահովումը:

Արտերկրյա ՀԿ-ների աջակցման ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող Թուրքիայի Եվրասիական տնտեսական համագործակցության ասոցիացան (ԵՏՀԱ, EkoAvrasya) նույնպես ակտիվորեն գործում է ադրբեջանական քարոզչական տիրույթում՝ Անկարայում միջազգային գիտաժողովներ կազմակերպելով ԼՂ հակամարտության և «Խոջալուի ցեղասպանության» վերաբերյալ: Նույն ծրագրով ֆինանսավորվում է նաև Թուրքիայի Եվրասիական քաղաքացիական հասարակության համագործակցության ասոցիացիան, որի ղեկավարն է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր, ԱԶԿ հիմնադիր անդամ, քաղաքագետ, Թուրքիայի Ազգային անվտանգության ակադեմիայի շրջանավարտ Իսմայիլ Սաֆին:

Փորձագիտական շրջանակների հետ համագործակցության համատեքստում Թուրքիայի Միջազգային հարաբերությունների և ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (TURKSAM) հետ համատեղ 2014թ. նոյեմբերին Բյուսեյում անցկացվել է լուսանկարների ցուցահանդես «Ղարաբաղ. օկուպացիայից առաջ և հետո» թեմայով: TURKSAM-ը թուրքական խոշոր ուղեղային կենտրոն է՝ հայտնի Թուրքիայի ազգայնական շրջանակների և Թուրքիայի հատուկ ծառայությունների հետ իր կապերով, ինչպես նաև հակահայկական ակտիվ գործունեությամբ, նախագահն է Մինան Օզանը:

Եվրոպական կառույցների հետ համագործակցության շրջանակներում խորհրդի կողմից ֆինանսավորվում են.

1. Ֆրանսիական Միջազգային ռիսկերի վերլուծության և կանխատեսման կենտրոնը (Centre d'analyse et de prvision des risques internationaux, CAPRI)
2. Իտալական «Classis-Project» և «Epoke» ՀԿ-ները
3. Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևյան կենտրոնը (DCAF)
4. Մեծ Բրիտանիայի Բիրմինգհեմի համալսարանի Ռուսաստանի, Եվրոպայի և Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնը (GRESS) և Կովկասի ու Կենտրոնական Ասիայի հետազոտական խումբը
5. Բեռլինի ազատ համալսարանը (Freie Universitet Berlin)
6. Կանանց իրավունքների պաշտպանության միջազգային լիգան և այլն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանում գործող վերլուծական կենտրոնների գործունեությունը, հետազոտական ուղղությունները, իրականացվող ծրագրերը և նույնիսկ արտաքին համագործակցությունը մեծապես կախված են լինելու պետական շրջանակների հետ նրանց փոխգործակցությունից և իշխանության առաջնահերթություններից:

Ու Կ-ների դասակարգումը

Ադրբեջանում գործող վերլուծական կենտրոնները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝

1. պետական կենտրոններ,
2. ոչ կառավարական կազմակերպություններ:

Կան նաև կուսակցապատկան հետազոտական կենտրոններ, սակայն, հաշվի առնելով ԱՀ բազմակուսակցական քաղաքական դաշտի կայացածության ցածր մակարդակը, հարկ չենք համարում առանձին անդրադառնալ դրանց:

Ադրբեջանական բուհերից հետազոտական կենտրոններ ունեն ԱՀ նախագահին կից կառավարման ակադեմիան, Բաքվի պետական համալսարանը, Ադրբեջանի պետական տնտեսագիտական համալսարանը և «Կովկաս» համալսարանը, ընդհանուր թվով՝ մոտ 8:

Պետական կենտրոններ

Հետազոտական կենտրոններ (բաժիններ, վարչություններ, դեպարտամենտներ) գոյություն ունեն ԱՀ Արտաքին գործերի, Ֆինանսների, Հարկային, Կապի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, Աշխատանքի և սոցիալական պաշտպանության, Սպորտի և երիտասարդության հարցերով նախարարությունների և Կենտրոնական բանկի կազմում, սակայն դրանց գործառութային պարտականությունները սահմանափակվում են նեղ մասնագիտական ոլորտներով և առավելապես ուղղված են նախարարությունների աշխատանքների կազմակերպմանն ու համակարգմանը:

Ներկայացնենք պետական պատկանելություն ունեցող այն կառույցները, որոնք աչքի են ընկնում ուղեղային կենտրոնների չափանիշներին համապատասխան գործունեությամբ:

1. Ադրբեջանի Հանրապետության նախագահին առընթեր

Ռազմավարական հետազոտությունների կենտրոն

ԱՀ նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (ՌՀԿ) հիմնադրվել է 2007թ. նոյեմբերի 12-ին ԱՀ նախագահ Ի.Ալիևի հրամանագրով: Այն պետական ոչ առևտրային կազմակերպություն է: Վարչական կենտրոնը գտնվում է Բաքվում: Կայքէջը՝ www.sam.az (ադրբեջաներեն և անգլերեն լեզուներով), ներկայացված է Facebook, Twitter սոցիալական ցանցերում և YouTube-ում:

ՌՀԿ-ն ստեղծվել է ԱՀ բարձրագույն ղեկավարությանը համաշխարհային քաղաքականության, անվտանգության, պետակաշինության, տարածաշրջանային քաղաքատնտեսական գործընթացների և այլ ոլորտների վերա-

բերյալ գիտավերլուծական տեղեկատվության, խորհրդատվությունների, կանխատեսումների տրամադրման, ինչպես նաև ԱՀ-ում իրականացվող ռազմավարական հետազոտությունների համակարգման նպատակով: ՌՀԿ գործունեության տարեկան ծրագիրը հաստատվում է ԱՀ նախագահի կողմից:

Կանոնադրության համաձայն, ՌՀԿ գործունեության առաջնահերթություններն են.

- Միջազգային քաղաքական հարցերում ռազմավարական խորհրդատվություն իրականացնելու նպատակով նախանշել ԱՀ ռազմավարական շահերն արտաքին և ներքին քաղաքականության մեջ:
- Օտարերկրյա պետությունների հետ ԱՀ ռազմավարական շահերին համապատասխան հարաբերությունների կառուցման և ընդլայնման նպատակով մշակել նոր մոտեցումներ:
- Ապահովել ԱՀ զարգացման ռազմավարության վերլուծությունը նոր գլոբալ մարտահրավերներին համապատասխան (նոր տեխնոլոգիաներ, էներգետիկ անվտանգություն, ահաբեկչություն, միջազգային ֆինանսական և տնտեսական համակարգեր, ժողովրդագրություն, առողջապահություն և այլն):
- Արտերկրում ԱՀ քաղաքական դրական իմիջի ստեղծումն ու ամրապնդումը, այդ թվում ԶԼՄ-ով նյութերի տարածումը:
- Մշտադիտարկել երկրում և արտերկրում ընթացող քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումները մշակույթի, կրոնի և դավանանքի հարցերում վերլուծություններ իրականացնելու, դրանցով պայմանավորված հնարավոր փոփոխությունները և ռիսկերը հարևան երկրներում կանխատեսելու նպատակով:
- Ուսումնասիրել տարածաշրջանային հարցերը, հարևան երկրների հետ երկկողմ հարաբերությունները:
- Ուսումնասիրել ԱՀ-ում ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության հետ կապված իրավիճակը և քաղաքական էլիտայի ձևավորման գործընթացը:
- Ուսումնասիրել ԱՀ իշխանությունների և հասարակության միջև հարաբերությունների փոփոխությունները:
- ԱՀ արտաքին և ներքին քաղաքականության վերաբերյալ բնակչության տարբեր խմբերի տեսակետներին ծանոթանալու համար անցկացնել սոցիոլոգիական հարցումներ:

- Տարբեր քաղաքական հիմնախնդիրների (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի, դրա քաղաքական, տնտեսական և իրավական ասպեկտների) լուծման նպատակով ներկայացնել փորձագիտական առաջարկություններ:
- Ուսումնասիրել միջկրոնական հարաբերությունները ԱՀ-ում և նրա սահմաններից դուրս, տալ փորձագիտական գնահատականներ և կանխատեսումներ:
- Ուսումնասիրել կրոնական և էթնիկ հանդուրժողականության մակարդակը ԱՀ-ում, ադրբեջանական սփյուռքի կյանքի տարբեր ասպեկտները և հանդես գալ համապատասխան առաջարկություններով:
- Պատրաստել նորմատիվ ակտեր և գիտական շրջաբերականներ, ԱՀ արտաքին և ներքին քաղաքական ձեռքբերումների հիման վրա կազմակերպել քարոզչություն:
- Հետազոտական աշխատանքներում և ինովացիոն գործընթացներում ներգրավել երիտասարդներին:

ՌՀԿ-ն ղեկավարել են.

1. Էլիան Նուրիևը (2008-2011թթ., ներկայումս Արտաքին քաղաքականության գերմանական խորհրդի հրավիրված փորձագետ):
2. Գ.Փաշաևան, 2011-2012թթ.՝ որպես ղեկավարի պաշտոնակատար, ներկայումս՝ տնօրենի տեղակալ:

2012թ. մայիսի 31-ին կենտրոնի տնօրեն է նշանակվել Ֆարհադ Մամեդովը, որը մինչև 2009թ. ԱՀ նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության և տեղեկատվական ապահովման բաժնի աշխատակից էր:

ՌՀԿ աշխատանքներն ի պաշտոնե համակարգում է ԱՀ նախագահի աշխատակազմի քաղաքական վերլուծության և տեղեկատվական ապահովման բաժնի վարիչը: 2014թ. մայիսին նշված պաշտոնը զբաղեցնող Էլնուր Ասլանովը պաշտոնազրկվեց Թուրքիայի գյուլենական շարժման կողմից հավաքագրված լինելու մեղադրանքով: Ի դեպ, վերջինս համարվում է այդ շարժմանը հարող ԱՀ ամենաբարձրաստիճան պաշտոնյան: Թուրքական լրատվամիջոցների համաձայն, Անկարայի կողմից Ադրբեջանին փոխանցված ԱՀ «գյուլենական» պաշտոնյաների ցուցակում, բացի Է.Ասլանովից,

նշված է եղել նաև Ֆարհադ Մամեդովի անունը, որին, սակայն, հաջողվեց խուսափել պաշտոնանկությունից:

ՌՀԿ կառուցվածքը.

1. Ներքին քաղաքականության բաժին, ղեկավար՝ փ.գ.թ. Թահիրա Ալլահյարովա:
2. Արտաքին քաղաքականության բաժին, ղեկավար՝ ք.գ.թ. Ռովշան Իբրահիմով:
3. Տնտեսական վերլուծության և գլոբալ խնդիրների բաժին, ղեկավար՝ տ.գ.դ. Վուսալ Քաշիմլի:

Ընդհանուր թվով ՌՀԿ-ում աշխատում է 19 գիտաշխատող, այդ թվում՝ գիտությունների 3 դոկտոր, 8 թեկնածու:

Կենտրոնը քաղաքականության, պատմության, իրավունքի, միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների, տնտեսության թեմաներով վերլուծական հոդվածների մրցույթներ է անցկացնում, որոնց մասնակցում են մեծ թվով դիմորդներ աշխարհի մոտ 100 երկրներից:

ՌՀԿ-ն հրատարակում է «AZERBAIJAN FOCUS», «SAM մեկնաբանություններ», «Ռազմավարական վերլուծություն», «SAM արձագանք» պարբերականները: Կենտրոնի փորձագետները դասախոսություններ են կարդում Ադրբեջանի 7 բուհերում:

Կենտրոնի կողմից գրքերի հրատարակման ակտիվ ժամանակաշրջանը սկսվում է 2010-ից: Ստորև ներկայացնենք գործունեության ամբողջ ընթացքում հրատարակված առավել ուշագրավ գրքերը, որոնք կազմում են ընդհանուր թվաքանակի մոտ 80%-ը:

1. «Ադրբեջանի քաղաքական կուսակցությունները. ընտրություններ», Թահիրա Ալլահյարովա, Ֆարհադ Մամեդով, Բաքու, 2010թ.:
2. «Հվ.Կովկաս. տարածքային ամբողջականությունը և պայքարն իշխանության համար», Դավիդ Վելիև, ղեկավար՝ Արագ Ասլանլի, թուրքերեն, QafqazSAM-ի հետ համատեղ, Անկարա, 2011թ.:
3. «Ռուս-ադրբեջանական հարաբերությունները 20 տարվա ընթացքում», հոդվածների ժողովածու, ռուսերեն, Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (РИСИ) հետ համատեղ, Բաքու, 2011թ.:

4. «Պարսից ծոցի երկրների համագործակցության խորհուրդ. իրավիճակը և զարգացման հեռանկարները», Գյուլնարա Մամեդովա, Ռամիզ Ռահմանով, ադրբեջաներեն, Բաքու, 2011թ.:
5. «Իրանա-հայկական հարաբերությունները. աշխարհաքաղաքական իրողություններն ընդդեմ քաղաքական նկրտումների», Վուսալ Քաշիմլի, Զաուր Սիրիև, Զուլֆիյա Ալիևա, ադրբեջաներեն, Բաքու, 2011թ.:
6. «Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունները վերջին 20 տարիներին. հաջողություններ և հնարավորություններ», հոդվածների ժողովածու, ադրբեջաներեն, Ադրբեջանի և Թուրքիայի գործարարների միության ֆինանսավորմամբ, Բաքու, 2011թ.:
7. «Ադրբեջան. ճանապարհի դեպի անկախություն», հոդվածների ժողովածու, ռուսերեն, Բաքու, 2012թ.:
8. «Ռուսաստանի և Թուրքիայի դերը Հվ.Կովկասի անվտանգության համակարգում», հոդվածների ժողովածու (հեղինակների թվում է նաև Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի խորհրդի նախագահ Ստեփան Գրիգորյանը), Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի (РИСИ) հետ համատեղ, Բաքու, 2012թ.:
9. «Ադրբեջան-Թուրքիա. բարեկամություն, եղբայրություն և ռազմավարական գործընկերություն», Զավիդ Վելիև, Ռեզատ Ռեսուլու, Քենան Ասլանլի, թուրքերեն, Ադրբեջանի և Թուրքիայի գործարարների միության ֆինանսավորմամբ, Անկարա, 2012թ.:
10. «Ճշմարտությունը Ղարաբաղյան հակամարտության միջերի մասին», Օլեգ Կուզնեցով, ռուսերեն, Մոսկվա, 2013թ.:
11. «Հավաքական հիշողություն. ինչպես են կազմվում, պահպանվում և արտահայտվում հավաքական պատկերացումներն անցյալի մասին», Ռաուֆ Գարազյոզով, ռուսերեն, Բաքու, 2013թ.:
12. «Պատմությունից մինչև մեր օրերը. Թուրքիայում բնակվող ադրբեջանցի թյուրքերը», Այգուն Աթար, Սեբահաթին, Շիմսիր, թուրքերեն, Անկարա, 2013թ.:
13. «Կովկասի ծագող աստղը» (Ի.Ալիևի մասին է), խմբագրակազմը՝ Հաջրի Erhan-ի ղեկավարությամբ, թուրքերեն, Թուրքիայի Աթաթյուրքի անվան մշակութային կենտրոնի հետ համատեղ, Անկարա, 2013թ.:

14. «Ադրբեջանի հետազոտական և ուղեղային կենտրոնները», Թահիրա Ալլահյարովա, Ֆարհադ Մամեդով, ադրբեջաներեն, Բաքու, 2013թ.:
15. «Չինաստանն ադրբեջանցիների աչքերով», Ֆ.Մամեդով, ռուսերեն, ադրբեջաներեն, Բաքու, 2013թ.:
16. «Հայաստանի տնտեսության վերլուծությունը», ՌՀԿ Տնտեսական վերլուծության և գլոբալ խնդիրների բաժին, ռուսերեն, Բաքու, 2013թ.:
17. «Տնտեսական արդիականացում», Վուսալ Քաշիմլի, ադրբեջաներեն, Բաքու, 2014թ.:

ՌՀԿ-ն համագործակցության հուշագրեր է ստորագրում նմանատիպ արտերկրյա կենտրոնների հետ: Ստորև ներկայացված ցանկը և կենտրոնի անցկացրած միջազգային միջոցառումների համադրությունը վկայում են, որ ոչ բոլոր դեպքերում են կազմված հուշագրերը վերածվում գործնական փոխգործակցության:

1. Թուրքիայի ԱԳՆ Ռազմավարական հետազոտությունների կենտրոն, 2011թ.:
2. Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների կենտրոն (РИЦИ), 2011թ.:
3. Իտալիայի քաղաքական հետազոտությունների միջազգային ինստիտուտ, 2011թ.:
4. Միջազգային կապերի արգենտինական խորհուրդ, 2011թ.:
5. Հունաստանի Մեծուլյան միջազգային հետազոտությունների կենտրոն (ICBSS), 2011թ.:
6. Վարշավայի համալսարանի քաղաքական հետազոտությունների կենտրոն, 2011թ.:
7. "Stratfor" ԱՄՆ հետազոտական կենտրոն, 2011թ.:
8. Իսլամաբադի քաղաքական գիտահետազոտական ինստիտուտ, 2012թ.:
9. Ղազախստանի նախագահին կից Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2012թ.:
10. Ղրղզստանի Ազգային ինստիտուտ, 2012թ.:
11. Իսլամական համաժողովի «Խոջալու-իրավական վերուծություն» երիտասարդական ֆորում, 2012թ.:
12. Ֆինլանդիայի Ալեքսանդրյան ինստիտուտ, 2012թ.:

13. Միջազգային հետազոտությունների ֆրանսիական ինստիտուտ (IFRI), 2012թ.:
14. Ուկրաինայի նախագահին կից Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտ, 2012թ.:
15. Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական ֆոնդ, 2012թ.:
16. Ցեղասպանությունների և զանգվածային սպանությունների միջազգային կանխարգելում, 2012թ.:
17. Ռուսաստանի քաղաքական հետազոտությունների կենտրոն (ПИР-Центра), 2012թ.:
18. Չինաստանի Արդի միջազգային հարաբերությունների ակադեմիա, 2012թ.:
19. Չինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիա, 2013թ.:
20. Իրաքի Ռազմավարական հետազոտությունների կենտրոն, 2013թ.:
21. Կորեայի միջազգային տնտեսական քաղաքականության ինստիտուտ, 2013թ.:

Գործընկերներ են հանդիսանում նաև Մեծ Բրիտանիայի Ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, (IISS), Կոնրադ Ադենաուերի ֆոնդը, Մոսկվայի «Քարնեգի» կենտրոնը: ՌՀԿ-ի կողմից հռչակված արտերկրյա գործընկերների թիվը հասնում է 35-ի:

Ներկայացված տարեկան հաշվետվությունների համաձայն, կենտրոնի փորձագետների կողմից մեկ տարվա ընթացքում հրապարակվում են 100-ի հասնող վերլուծական տեղեկանքներ, 150-ից ավելի հոդվածներ, իրականացվում են 50-ից ավելի միջոցառումներ (գիտաժողովներ, կլոր սեղաններ, քննարկումներ, մեծ մասը՝ Ադրբեջանում), որոնց մասնակցում են մեծ թվով արտերկրյա փորձագետներ և գիտնականներ, 100-ից ավելի գործուղումներ մոտ 30 երկիր:

Հատկապես կարևորվում է Լատինական Ամերիկայի երկրների ուղեղային կենտրոնների հետ կապերի զարգացումը տեղի հայկական Սփյուռքի ուժեղ դիրքերը թուլացնելու նպատակով: Կարևոր ուղղություններ են նաև Թուրքիան և Բալկանները:

2014թ. անցկացված միջոցառումներից կարելի է առանձնացնել «Ադրբեջան-Կենտրոնական Ասիա. փոխհարաբերություններ, զարգացում, համա-

գործակցություն, ընդհանուր մարտահրավերներ», «Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա. եռակողմ տարածաշրջանային քաղաքականությունը և դաշինքի հեռանկարը», «Ադրբեջանա-թուրքական հարաբերությունների քաղաքական և անվտանգային կողմերը», «Ադրբեջան-Թուրքիա. տնտեսական փոխհարաբերությունների ազդեցությունը տարածաշրջանի տնտեսական ապագայի վրա», «Սումգայիթյան իրադարձություններ. պատմական հիշողություն և պատմական պատասխանատվություն», «Ադրբեջանի և Բելառուսի փոխհարաբերությունները» թեմաներով գիտաժողովները, որոնք անցկացվել են Բաքվում և ապահովել բավական ներկայացուցչական մասնակցություն շահագրգիռ երկրների կողմից:

Նույն ժամանակահատվածում արտերկրյա գիտաժողովներ են անցկացվել Թուրքիայում (կազմված է եղել երկու մասից. «ԼՂ հիմնախնդիրը 1828-ից մինչ մեր օրերը. ժողովրդագրական գործընթացներ և վարչական փոփոխություններ» և «Հայաստան-Ադրբեջան, ԼՂ վեճը աշխարհաքաղաքական շահերի համատեքստում», Թուրքիայի Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնի (ԵՈՒԿ, AVIM) հետ համատեղ), Պակիստանում («Քաշմիրը և Լեռնային Ղարաբաղը. լուծումների որոնում»), Հունաստանում, Խորվաթիայում, Մոնտենեգրոյում, Գերմանիայում, Չինաստանում, Քուվեյթում և ԱՄԷ-ում:

ՌՀԿ հետազոտությունների հիմնական թեմաներից մեկը հայ-ադրբեջանական հակամարտությունն է: Կարող ենք փաստել, որ այս դեպքում հետազոտական գործունեությունը բացառապես պայմանավորված է քարոզչական առաջնահերթություններով:

Նշված գործունեությունը ներառում է հետևյալ հինգ ուղղությունները.

1. Հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում. իրականացվում է միջազգային իրավական ակտերի, նմանօրինակ խնդիրների վերաբերյալ փաստաթղթերի փորձաքննություն, տարբեր լեզուներով հրատարակվում են գրքեր և ժողովածուներ, զարգացվում են կապերն արտասահմանյան գործընկերների հետ, արտերկրյա մասնագետների համար տեղեկատվական բազա ստեղծելու նպատակով հրատարակվում և տարածվում են փաստաթղթերի նոր ժողովածուներ, որոնոցում զետեղվել են միջազգային կազմակերպությունների կողմից հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ մինչ այժմ ընդունված փաստաթղթերը:

2. ԼՂ «ադրբեջանական համայնքին» գործուն աջակցություն ցուցաբերելը, կարևոր և հեղինակավոր միջազգային միջոցառումներում նրա ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելը: ՌՀԿ-ն փորձում է միջազգային մակարդակում հասնել այն բանին, որ ԼՂ բնակչությունն ասելով հասկանան նախնառաջ ադրբեջանցիների, և դա մտնի հասարակական շրջանառության մեջ, իսկ բնակչությունների որոշակի փուլում նրանք ներգրավվեն որպես իրավահավասար կողմ:
3. Պայքար «հայկական քարոզչամեքենայի» դեմ: Այս ուղղությամբ հիմնական ջանքերն ուղղված են արտերկրյա գործընկերների հետ համագործակցության հաստատմանը: Թուրքական AVIM կենտրոնի հետ հաստատված գործակցության արդյունքում հրատարակվում է «Հայկական հետազոտություններ» անունը կրող ամսագիրը:
4. Աշխատանքներ, որոնք ուղղված են հայ-ադրբեջանական հակամարտությունը որպես «սառեցված հակամարտություն» ներկայացնելու դեմ, քանի որ այդպիսի հակամարտությունները, ըստ ադրբեջանական կողմի, որպես կանոն, դուրս են մնում միջազգային հանրության ուշադրությունից, աստիճանաբար փոխվում է դրանց նկատմամբ վերաբերմունքը, բնակչությունները կորցնում են նախկին ինտենսիվությունը և, ի վերջո, խնդրի լուծմանն ուղղված քայլերն անորոշ ժամանակով հետաձգվում են: Այս համատեքստում ուսումնասիրվում են Եվրոպայի նմանօրինակ էթնոտարածքային հակամարտությունները:
5. Ոչնչացնել իբր հայկական կողմից ստեղծված «ադրբեջանցիների և հայերի միասին ապրելու անհնարինության» մասին քաղաքական առասպելը:

ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի ներկայացրած աշխարհի ուղեղային կենտրոնների տարեկան վարկանիշային սանդղակի համաձայն, 2014թ. ՌՀԿ-ն 123-րդն է աշխարհի առաջատար ՈւԿ-ների, 44-րդը՝ Կենտրոնական Ասիայի ՈւԿ-ների, 51-րդը՝ լավագույն քարոզչություն իրականացնող ՈւԿ-ների, 26-րդը՝ կառավարության հետ կապված լավագույն ՈւԿ-ների, 56-րդը՝ ամենալավ կառավարում ունեցող ՈւԿ-ների ցանկում:

**2. ԱՀ էկոնոմիկայի և արդյունաբերության նախարարության
Տնտեսական բարեփոխումների գիտահետազոտական ինստիտուտ
(ISRER, <http://www.ier.az/>)**

Գործունեության հիմնական ուղղությունը սոցիալ-տնտեսական է: Հիմնական նպատակը ԱՀ սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության գիտական հիմնավորումն է, տնտեսական բարեփոխումների իրականացումը, այդ թվում՝ ռազմավարության և մարտավարության գիտական հիմքերի մշակումը: Տարեկան բյուջեն կազմում է 700 հազ. ԱՀ մանաթ (\$896 հազ.), հիմնական աշխատակազմի թիվը հասնում է 80-ի (որի մոտ կեսը՝ հետազոտողներ), պայմանագրային աշխատողները մոտ մեկ տասնյակ են:

Ունի գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող 6 բաժին.

- Մակրոտնտեսական հետազոտություններ
- Գործարարության զարգացում և տարածաշրջանային խնդիրներ
- Նաֆթային սեկտորի զարգացում
- Կայուն զարգացման խնդիրներ
- Վիճակագրություն և վերլուծություն
- Կրթություն և համակարգում:

Համագործակցություն. Երկրի ներսում. ԱՀ տուրիզմի ինստիտուտ, Բաքվի պետական համալսարան, Պետական կառավարման ակադեմիա, Ավիացիայի ազգային ակադեմիա, ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտ:

Արտերկրյա. Զինաստանի սոցիալական գիտությունների ակադեմիա, Տնտեսագիտության ինստիտուտ, Հվ.Կորեայի միջազգային տնտեսական քաղաքականության ինստիտուտ, Ղազախստանի տնտեսական հետազոտությունների ինստիտուտ, Հունգարիայի համաշխարհային տնտեսության ինստիտուտ, Մոլդովայի տնտեսագիտության, ֆինանսների և վիճակագրության ինստիտուտ, ՌԴ ԳԱԱ կենտրոնական տնտեսա-մաթեմատիկական ինստիտուտ, Թուրքիայի Մարմարայի և Գազի համալսարաններ, Ուկրաինայի տնտեսական հետազոտությունների և քաղաքական խորհրդատվությունների ինստիտուտ:

Դոնորներ. Թուրքիայի զարգացման և համագործակցության միջազգային գործակալություն (TIKA), Թուրքիայի զարգացման նախարարություն, Միջազգային համագործակցության գերմանական ասոցիացիա (GIZ),

Համաշխարհային բանկ, Զարգացման ասիական բանկ, Զարգացման իսլամական բանկ, ՄԱԿ զարգացման ծրագիր, Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն (OECD):

Ըստ պաշտոնական կայքէջի՝ ներկայումս ինստիտուտում իրականացվում է 26 գիտահետազոտական ծրագիր:

Տարեկան մեկ անգամ հրատարակում է գիտական հոդվածների ժողովածու, վերջինը՝ 2013թ.:

Կենտրոնն ունի համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացման փորձ ինչպես ադրբեջանական, այնպես էլ արտերկրյա համապատասխան կառույցների հետ:

Ոչ կառավարական կենտրոնների դասակարգումն ըստ հետազոտական ուղղությունների (ոլորտների)

Ոչ կառավարական կազմակերպությունները (հիմնականում ՀԿ-ներ), որոնք գործում են այս դաշտում, անհամեմատ շատ են պետական կենտրոններից և ավելի բազմազան իրենց հետազոտական ուղղություններով:

Ադրբեջանում որպես ՈւԿ-ներ գործող ոչ կառավարական կազմակերպությունները կարելի է դասակարգել ըստ հետազոտական հետևյալ ուղղությունների.

- Սոցիալ-տնտեսական հետազոտություններ
- Հասարակական-ներքաղաքական հետազոտություններ
- Արտաքին քաղաքական և տարածաշրջանային հետազոտություններ
- Ռեզմական և անվտանգային ոլորտի հետազոտություններ:

Այս բաժանումը կրում է պայմանական բնույթ, քանի որ կենտրոնների գործունեության ուղղությունները որոշ դեպքերում սերտորեն փոխկապակցված են, և հնարավոր չէ դրանք ամբողջությամբ սահմանազատել:

Սոցիալ-տնտեսական հետազոտություններով զբաղվող կենտրոններ

Ադրբեջանի դեպքում, երբ գործ ունենք քաղաքական ավտորիտար կառավարման և տնտեսությունում արտերկրյա խոշոր կապիտալի ներգրավվածության հետ, կայացած վերլուծական ոչ պետական կառույցները հիմնականում տնտեսական հետազոտություններ են իրականացնում:

Այս ոլորտն ամենաշատ ներկայացվածությունն ունի նաև ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի վարկանշային զեկույցներում. 2014թ. Ադրբեջանը ներկայացնող 11 կենտրոնից 7-ը գործունեություն է ծավալում սոցիալ-տնտեսական հետազոտությունների ոլորտում (տե՛ս Աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Թիվ	Կենտրոնի անվանումը	Կայքէջը	Կենտրոնի ղեկավարը	Հիմնադրման տարեթիվը
1	Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոն (Center for Economic and Social Development, CESD)	www.cesd.az	Վուգար Բայրամով	2005թ.
2	Տնտեսական հետազոտությունների կենտրոն (Economic Research Center, ERC)	www.erc.az	Գալիբ Թողրուլ	1999թ.
3	Հանրային ֆինանսների մշտադիտարկման կենտրոն (Public Finance Monitoring Center, PFMC)	www.pfmc.az	Քենան Ասլանլի	2003թ.
4	Գործարարության զարգացման հիմնադրամ (Entrepreneurship Development Foundation, EDF)	www.edf.az	Սաբիթ Բադիրով	1994թ.
5	«Ուլուչայ» Սոցիալ-տնտեսական նորարարական կենտրոն (“Uluchay” Social-Economic Innovation Center)	www.uluchay.org	Մայիս Սաֆարով	1995թ.
6	Ազգային բյուջետային խումբ (National Budget Group, NBG)	www.nbg.az հասանելի չէ		

Թիվ	Կենտրոնի անվանումը	Կայքէջը	Կենտրոնի ղեկավարը	Հիմնադրման տարեթիվը
7	Տնտեսական նորարարական կենտրոն (Economic Innovation Center, EIC)		Սուհամադ Թալիբլի	2002թ.
8	Տնտեսական և սոցիալական հետազոտությունների կենտրոն (Center for Economic and Social Research)	www.cssn.gov.az	Հիքմետ Հաջիգադե	1994թ.
9	Գլոբալ տնտեսական հետազոտությունների կենտրոն (Global Economic Researches Center, GERC)	www.qiam.icando.ws	Նովրուզ Գուլիև	2003թ.
10	Տնտեսական ռեսուրսների ուսումնասիրություն ՀԿ (Study of Economic Resources Public Union)	www.ser-az.org հասանելի չէ	Ռուսլան Աթալիջիև	2009թ.
11	Սոցիալ-տնտեսական հետազոտությունների կենտրոն (Socio-Economic Research Center)	www.siar.az	Ազադ Ալիև	2001թ.
12	Ազատ սպառողների միություն (Free Consumers Union)	www.consumeraib.com	Այուբ Հուսեյնով	1996թ.
13	«Գենդերը և մարդու իրավունքները» հետազոտական միություն (“Gender and Human Rights” Research Union)	-	Ռենա Միրզազադե	1997թ.

Թիվ	Կենտրոնի անվանումը	Կայքէջը	Կենտրոնի ղեկավարը	Հիմնադրման տարեթիվը
14	Սոցիալական նախաձեռնությունների կենտրոն ՀԿ (Public Union for Social Initiatives Center)	www.fikir.ffi.az անհասանելի է	Սանան Նաջաֆով	2006թ.
15	Կասպիական էներգետիկայի հետազոտությունների կենտրոն (The Caspian Energy Research Center)	www.khazar.org		
16	Նավթի հետազոտությունների կենտրոն (Center for Oil Studies)		Իլիամ Շաբան	2003թ.

Առավել մանրամասն ներկայացնենք նշված ցանկի թիվ 1 կենտրոնը, որն իրավամբ կարող է համարվել նաև Ադրբեջանի լավագույն ուղեղային կենտրոնը:

***Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոն
(Center for Economic and Social Development, CESD)***

Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոնը հիմնադրվել է 2005թ. Արևմուտքում ուսում ստացած տնտեսագետներ Վուգար Բայրամովի, Էլչին Ռաշիդովի, Զաուր Մամադովի և Ֆաինա Հանիֆանի կողմից: Վարչական կենտրոնը գտնվում է Բաքվում, պաշտոնական կայքէջն է՝ www.cesd.az:

Կենտրոնի նախագահն է Վուգար Բայրամովը, որը 2003-2004թթ. աշխատել է Սենտ Լուիսի վաշինգտոնյան համալսարանում, որպես նախագահող կամ բանախոս մասնակցել է բազմաթիվ արտերկրյա միջազգային գիտաժողովների ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում, Կանադայում, Հնդկաստանում, Ռուսաստանում և այլուր: Վ.Բայրամովը տնտեսություն և ֆինանսներ է դասավանդում Ադրբեջանի պետական տնտեսագիտական համալսարանում:

CESD-ը նպատակադրված է խթանել ժամանակակից սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների վերաբերյալ իրականացվող գիտահետազոտական

աշխատանքները, տնտեսական և սոցիալական քաղաքականության հարցերով խորհրդատվություն ներկայացնել կառավարությանը, բարձրացնել սոցիալ-տնտեսական խնդիրների մասին հասարակության տեղեկացվածությունը, զարգացնել համագործակցությունը պետական կառույցների, ՀԿ-ների և ուսումնական հաստատությունների միջև:

Հետազոտական հիմնական ուղղություններն են.

- Մակրոտնտեսական քաղաքականություն
- Գենդերային զարգացում
- ԱՀ տնտեսական մրցունակություն և տնտեսական աճ
- Սոցիալական քաղաքականություն
- Պետական սեկտորի բարեփոխումներ
- Ֆինանսական համակարգ, հարկային քաղաքականություն
- Էներգետիկա, հեռահաղորդակցություն և տրանսպորտ
- Մուտք ԵՄ, տարածաշրջանային համագործակցություն, արտաքին տնտեսական կապեր:

Կենտրոնի ընթացիկ նախագծերից կարելի է առանձնացնել.

- Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի մասնակցությամբ Կենտրոնական Ասիայի երկաթգծի կառուցման մշտադիտարկումը:
- ԱՀ-ում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ իրականացվող «Նավթային եկամուտների նկատմամբ հանրային վերահսկողության ավելացում» նախագիծը:

Իրականացվել է Ադրբեջանում նավթային տենդերների մշտադիտարկումը, որը ֆինանսավորվել է ԱՄՆ հիմնադրամների կողմից:

Մեծ թիվ են կազմում նավթային ոլորտի հետ կապված նախագծերը, որոնք ֆինանսավորվում են արտերկրից:

CESD-ը պարբերաբար անցկացնում է սեմինարներ, գիտաժողովներ և սիմպոզիումներ սոցիալ-տնտեսական թեմաներով, հետազոտական աշխատանքներով փոխանակումներ է իրականացնում արտերկրյա այլ կենտրոնների հետ:

Կենտրոնը, հաստիքային աշխատակազմից զատ, հետազոտական աշխատանքներում ակտիվորեն ներգրավում է կամավորների, որոնց թիվը (որը

սովորաբար մոտ է 60-ի) բարձրանում է ամառային քննաշրջանի ժամանակահատվածում: Համագործակցում է նաև Խաղաղության կորպուսի հետ (ԱՄՆ) և ընդունում է Ֆուլբրայթի դպրոցում սովորողներին:

Մերտ կապեր ունի ՋԼՄ-ի, Ադրբեջանի տարածքում գործող 24 կազմակերպությունների, ֆինանսական հիմնադրամների և դոնորների, ոլորտի գրեթե բոլոր հետազոտական ինստիտուտների հետ:

Հանդիսանում է հետևյալ միջազգային կազմակերպությունների անդամ. PASOS, CIVICUS World Citizen's Alliance, Global Development Network, NIS-PAcee, International Studies Association, Global Integrity, Parliamentary Network on the World Bank, Task Force on Financial Integrity and Economic Development.

Կենտրոնի ֆինանսների և կառավարման ոլորտի պետական քաղաքականության հարցերով պատրաստած 4 խորհրդատվական աշխատանքները 2011թ. հավանության են արժանացել ԱՀ կառավարության կողմից: 2009թ. կենտրոնը մշակել է երկրում առաջին հակաճգնաժամային ռազմավարությունը, որը լայնորեն քննարկվել է տեղական ՋԼՄ-ում և ընդունվել ԱՀ կառավարության կողմից: Պատրաստած բազմաթիվ փաստաթղթեր օգտագործվում են Կենտրոնական եվրոպական համալսարանի քաղաքական հետազոտությունների կենտրոնում: Հատկանշական է, որ ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի վարկանշային սանդղակի քաղաքականության բնագավառում լավագույն զեկույց պատրաստած ՈւԿ-ների շարքում CESD-ը զբաղեցնում է 24-րդ հորիզոնականն իր «Մաքսային միությանը միանալու մասին. Ադրբեջանի ռազմավարության ձևավորումը» աշխատությունով:

CESD-ը երկրի տնտեսական ընդհանուր մթնոլորտը բարելավելու նպատակով համագործակցում է նաև գործարար շրջանակների հետ: Փորձում է խթանել կանանց ներգրավվածությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացում:

Կենտրոնը ներառված է «ուղեղային կենտրոնների» գրեթե բոլոր տեղեկատուներում, ադրբեջանական առաջին կենտրոնն է, որ ներառվել է «Նիրայի» համաշխարհային տեղեկատուում:

Առաջատար դեր է խաղում Ադրբեջանում տարածաշրջաններին տրամադրվող միջոցների արդյունավետության գնահատման մեջ: Չնայած փորձագետների ոչ այնքան մեծ թվին, վերջիններս պարբերաբար հրավիրվում են պետության կողմից հանրային ծախսերը մշտադիտարկելու և գնահատելու համար:

Պետական մարմինների հետ համագործակցության և պետական քաղաքականության վրա ազդեցության ցուցիչներն, ըստ ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի, նույնպես բավական բարձր են:

Կենտրոնը տեղ է զբաղեցնում ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի 2014թ. վարկանշային զեկույցի 16 սանդղակներում (տե՛ս Աղյուսակ 1)՝ այդպիսով լինելով ադրբեջանական ՈւԿ-ներից ամենահաճախ հիշատակվողը:

Հասարակական և ներքաղաքական հետազոտություններ

Քաղաքական դաշտի զարգացածության ոչ բավարար մակարդակը, քաղաքական այլակարծության նկատմամբ կիրառվող ճնշումները և ֆինանսական խնդիրները, որոնք նշված պատճառներով ավելի ցայտուն են քաղաքական հետազոտություններով զբաղվող կենտրոնների դեպքում, ամեն կերպ արգելակում են այս ուղղվածության ՈւԿ-ների զարգացումը:

Հաշվի առնելով նաև արտերկրյա դոնորների հետաքրքրությունն Ադրբեջանում մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության և համապետական ընտրությունների նկատմամբ՝ նման կենտրոնների համար ուժեղ մրցակիցներ են դառնում նաև իրավապաշտպան ՀԿ-ները:

Հասարակական և ներքաղաքական հետազոտությունների ուղղությամբ առավել ակտիվ գործունեությամբ աչքի ընկնող կենտրոնները ներկայացված են *Աղյուսակ 2-ում*.

	Անվանումը	կայքէջը	ղեկավարը	Հետազոտական ուղղությունները	Հիմն.
1	Հումանիտար հետազոտությունների ընկերակցություն (Society for Humanitarian Research)	www.humanrights-az.org հասանելի չէ	Ավազ Հասանով	Մարդու իրավունքներ Կոնֆլիկտների կարգավորում Միգրացիա Ինտեգրացիոն գործընթացներ	1997թ.
2	Ադրբեջանի ֆուտուրոլոգների ընկերակցություն (Society of Azerbaijani Futurologists)	www.futurestudies.az	Ռեյհան Հուսեյնով	Ապագա սցենարների կանխատեսում	2006

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

	Անվանումը	կայքէջը	ղեկավարը	Հետազոտական ուղղությունները	Հիմն.
3	Կրթական նորարարությունների կենտրոն (Center for Innovations in Education, CIE)	www.cie.az	Էլմինա Կազիմ-զադե	Կրթական քաղաքականություն	2004թ.
5	Ժողովրդավարական ընտրությունների աջակցման կենտրոն (Support Center for Democratic Elections)		Չինգիզ Դադաշով	Մարդու իրավունքներ Հասարակության իրազեկում	2005թ.
6	Քաղաքական տեխնոլոգիաների կենտրոն (Political Technology Center)	www.cpt.az հասանելի չէ	Վալի Ալիբեյով	Մոցիալ-քաղաքական հարցեր	1999թ.
	Սփյուռք և լոբբի ռազմավարական հետազոտությունների կենտրոն (“Diaspora and Lobby” Center for Strategic Studies)	www.zaur-aliyev.info/	Զաուր Ալիև	Ադրբեջանական սփյուռք Լոբբինգ Աշխարհաքաղաքականություն Ազգային խնդիրներ Միջ. հարաբերություններ	2001թ.
7	Իսլամի, ժողովրդավարության և մարդու իրավունքների կենտրոն (Center for Islam, Democracy and Human Rights)	www.heritage-azerbaijan.com հասանելի չէ	Այթեկին Իմրանովա	Մարդու իրավունքներ Ժողովրդավարության զարգացում Ազատ և արդար ընտրություններ	1998թ.

	Անվանումը	կայքէջը	ղեկավարը	Հետազոտական ուղղությունները	Հիմն.
8	Ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն (Azerbaijan National Center for Strategic Studies)	www.statmyweb.com	Նաթիգ Միրի	Սոցիալական քաղաքականություն	2009թ.
	Արդի սոցիալական գործընթացների ուսումնասիրության «Արեաթ» կենտրոն ("AREAT" Center for Research of Modern Social Processes)	www.gender-az.org	Ալի Աբասով	Սոցիալական, քաղաքական, տնտեսական, ռազմական, մշակութային, գենդերային, քաղաքացիական հարցեր	1998թ.
9	Ազգային և միջազգային հետազոտությունների կենտրոն (Center for National and International Studies, CNIS)	www.cnis-baku.org	Լեյլա Ալիևա	Տարածաշրջանային հակամարտություններ, անվտանգություն, նաֆթ և քաղ., արտ. և ներքին քաղ. Հնէաբանություն և պատմություն Հուշարձանների պահպ. Բնապահպանական խնդիրներ	
10	Երիտասարդական գիտահետազոտական աջակցության ընկերակցություն	www.azgead.az	Մամադալի Բաբաջի	Երիտասարդությանը վերաբերող պետական քաղաքականություն, գիտահետազոտական աշխատանքների խրախուսում	2010թ.

Նշված կենտրոններից միայն Կրթական նորարարությունների կենտրոնն է ներգրավված ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի 2014թ. զեկույցում:

Արտաքին քաղաքական և տարածաշրջանային հետազոտություններ

Այս ոլորտի առաջին կենտրոնները հիմնադրվել են 1999թ., իսկ դրանց ստեղծման ամենակտիվ փուլը կարելի է համարել 2005-2008թթ. ժամանակահատվածը:

Ներկայումս այս ոլորտում կարելի է հաշվել 8 կենտրոն (տե՛ս Աղյուսակ 3), որոնք իրենց գործունեությամբ կարող են ընդգրկվել Ադրբեջանի «ուղեղային կենտրոնների» դասակարգմանը նվիրված ուսումնասիրություններում: Քաղաքական հետազոտություններով զբաղվող կենտրոնները հաճախ համատեղում են ներքին և արտաքին, այդ թվում նաև տարածաշրջանային քաղաքականության ուսումնասիրությունները, հետևաբար դրանց տարանջատումը նույնպես կրում է պայմանական բնույթ:

1. Կովկասի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ISSC, www.ca-c.org) հիմնադրվել է 1999թ., հիմնադիրը և ներկա ղեկավարն է տնտեսագիտության դոկտոր Էլդար Իսմայիլովը: Վերջինս 2011թ. իր ելույթներից մեկում կարծիք է հայտնել, որ Ղարաբաղյան հակամարտության հետևանքով Ադրբեջանին հասցվել է \$60.1 մլրդ-ի վնաս:

Ինստիտուտն իր հիմնական նպատակն է համարում Կովկասի աշխարհաքաղաքական, սոցիալական և տնտեսական գործընթացների խորքային ուսումնասիրությունը, որը պետք է նպաստի Կովկասի երկրների և ժողովուրդների սոցիալ-քաղաքական և տնտեսական զարգացմանը: Հետազոտական գործունեությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով.

- Կովկասի երկրաքաղաքականության պատմություն (геоистория Кавказа)
- Տարածաշրջանային աշխարհաքաղաքական և տնտեսական գործընթացներ
- Տարածաշրջանային անվտանգություն
- Պետականաշինությունը կովկասյան երկրներում
- Կովկասյան երկրներում տնտեսական զարգացման հիմնախնդիրները
- Տարածաշրջանի ինտեգրացիոն գործընթացները
- Տարածաշրջանի զարգացման սոցիալ-մշակութային խնդիրները

- Միջէթնիկական հարաբերությունները Կովկասում:

Փորձագիտական մակարդակով խորությամբ ուսումնասիրվող կոնկրետ թեմաների մասին պատկերացում կազմելու համար ներկայացնենք ինստիտուտի հրապարակած գրքերի ոչ ամբողջական ցանկը.

- «Կասպիական տարածաշրջանի երկրաքաղաքական պատմությունը և արդի աշխարհաքաղաքականությունը», 2002թ., Պարվին Դարաբադի:
- «Կենտրոնական Կովկասը և Վրաստանի տնտեսությունը», 2004թ., Թեյմուրազ Բերիձե, Էլդար Իսմայիլով, Վլադիմիր Պապավա:
- «Կովկասի անվտանգությունը և ԱՀ զարգացման կայունությունը», 2004թ., Ջանաթեան Էյվազով:
- «Հարավարևմտյան Կովկասի դեմոկրատական հանրապետությունները», 2004թ., Այդին Գաջին:
- «Հավաքական հիշողության մետամորֆոզները Ռուսաստանում և Կենտրոնական Կովկասում», 2005թ., Ռաուֆ Կարազյոզով:
- «Ադրբեջանի հետկոնֆլիկտային տարածքների վերականգնման հայեցակարգային հիմքերը», 2010թ., Նազիմ Մուզաֆֆարի («Կովկասը և գլոբալիզացիան» հանդեսի գլխավոր խմբագիր) և ISSC տնօրեն Է.Իսմայիլով: Գիրքը լույս է տեսել ադրբեջաներեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Հեղինակներն Ադրբեջանի «օկուպացված» տարածքների վերադարձը համարում են զուտ ժամանակի հարց և գրքում կենտրոնանում են «օկուպացիայի վերացումից» հետո այդ տարածքների վերականգնման ձևերի և միջոցների հետ կապված հարցերի վրա:
- «Պայքար Անդրկովկասի համար (1917-1921թթ.)», 2010թ., Ֆիրուզ Կազեմզադե:
- «Կենտրոնական Եվրասիա. աշխարհաքաղաքական վերիմաստավորում», 2010թ., Է.Իսմայիլով Վ.Պապավա:

2. Ռազմավարական հետազոտությունների և միջազգային հարաբերությունների կովկասյան կենտրոնը (QAFSAM) հիմնադրվել է 2006թ. (գրանցվել է 2008թ.), հիմնադիրներ՝ Արագ Ասլանլի (ներկա ղեկավար) և Նազիմ Ջաֆարով, կայքէջը՝ www.qafsam.org:

Հիմնական առաքելությունը. իրականացնել խոր հետազոտություններ արտաքին քաղաքականության և անվտանգային քաղաքականության ոլորտ-

ներում, աջակցել ժողովրդավարության զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, մանրակրկիտ ուսումնասիրել և վերլուծել տարածաշրջանում և աշխարհում ընթացող քաղաքական, տնտեսական և ռազմական գործընթացները, տարբեր հարցերի շուրջ տալ կանխատեսումներ: *Պատրաստում է կարճ զեկույցներ, որոնք տրամադրվում են ԱՀ ԱԳՆ-ին, ԱՀ դեսպանատներին, պետական այլ կառույցների, ինչպես նաև որոշ ոչ պաշտոնական կազմակերպությունների և անձանց:*

Իրականացվող հիմնական նախագծերը.

- Տարածաշրջանային և գլոբալ քաղաքական, տնտեսական գործընթացների մասին տարեկան և ամսական զեկույցներ,
- Աշխարհաքաղաքականությունը Հվ. Կովկասում
- ԵՄ-ը և Հվ. Կովկասը
- «Ղարաբաղյան հակամարտություն. խաղաղության հնարավորությունները և ռիսկերը» (որպես գիրք հրատարակվել է Թուրքիայում)
- Ռուս-իրանական հարաբերությունները (հետազոտություն)
- Թուրք-իսրայելական հարաբերությունները (հետազոտություն)
- Ռուսաստանի քաղաքականությունը Կովկասում (հետազոտություն)
- Ադրբեջանի և Թուրքիայի ռազմական կապերը (հետազոտություն):
- «Ղարաբաղյան հակամարտությունը. որտեղ է ճանապարհը» (հոդվածաշարի հրապարակում թուրքական ԶԼՄ-ով):

5 տարվա ընթացքում տպագրվել են 200 գիրք, զեկույց, հոդված, իրականացվել մոտ 50 գիտահետազոտական նախագիծ:

3. «Կովկաս» Էթնոսոցիալական հետազոտությունների կենտրոնը (QESAM) հիմնադրվել է 2006թ. Յադուր Յադուրովի և Էլշան Հաջինի կողմից, ներկայիս ղեկավարն է Վաֆա Հասանովան, կայքէջը՝ www.qesam.org:

Կենտրոնի հետազոտությունները ներառում են Կովկասյան տարածաշրջանի սոցիալական, քաղաքական, տնտեսական, ռազմական, անվտանգային, մշակութային հարցերին առնչվող խնդիրները:

Առանձնանում է Հայաստանի ուղղությամբ իրականացվող հետազոտական աշխատանքների ծավալով. ունի «Հայաստանի Հանրապետություն» բաժին, որն իրականացնում է հետևյալ նախագծերը.

- «ՀՀ-ն՝ Հվ.Կովկասում անջատողականության աջակից». նախագծի շրջանակներում անցկացվում են գիտաժողովներ, հրատարակվում են գրքեր (այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետություն») և զեկույցներ: Պետական քաղաքականության աջակցման նպատակով կազմված զեկույցներն ուղարկվում են պատկան մարմիններին:
- «Վրաստանի հայ համայնքի հնարավորությունները». քարոզվում է այն գաղափարը, որ Հայաստանի քաղաքական գաղափարախոսության հաջորդ թիրախը Ջավախքն է:
- «Հայաստանի ներքին զարգացումների և հայկական գործոնի ուսումնասիրություն»
- «Հայաստանի պետական մարմինների և ոչ կառավարական կազմակերպությունների էթնիկ պատկերը»:

4. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (Ադրբեջան) (Caucasus Research Resource Center (CRRC))

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների CRRC ծրագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում 2003թ. հիմնադրված ռեսուրսների և ուսուցման կենտրոնների ցանց է, որի նպատակն է խթանել հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականության վերլուծությունը Հարավային Կովկասում, կայքէջը՝ www.crcc.az:

Նյու Յորքի «Քարնեգի» կորպորացիայի և «Եվրասիա համագործակցություն» հիմնադրամի համագործակցությամբ գործող ծրագիրը կոչված է ապահովել հետազոտական ռեսուրսների մատչելիությունը, զարգացնել հետազոտական կարողությունները և ընդլայնել հասարակական գիտությունների հետազոտողների և քաղաքական գործիչների միջև երկխոսությունն ու համագործակցությունը: Ադրբեջանի կենտրոնի ղեկավարն է Գյուրսել Ալիևը: Կենտրոնի տարեկան բյուջեն բաժանվում է հետևյալ համամասնությամբ. *տեխնիկական՝ \$7.789, հետազոտական՝ 28.700, գրքեր՝ 10.000, կրթաթոշակներ՝ 25.500, գիտաժողովներ և շնորհանդեսներ՝ 15.850:*

Կենտրոնի կողմից իրականացվող նախագծեր.

- ԱՀ խորհրդարանի պատգամավորի օգնականների ուսումնասիրություն (USAID ֆինանսավորում)

- ԱՀ սոցիալական պաշտպանության և սոցիալական ինտեգրացման խնդիրների ուսումնասիրություն (ֆինանսավորումը՝ ԵՄ կառույցներ)
- Ադրբեջանի և Հայաստանի ԶԼՄ-ում լուսաբանվող հիմնական հարցեր (միջազգային համագործակցության շրջանակներում)
- ԱՀ իրավական և դատական համակարգի ուսումնասիրություն
- Ադրբեջանի և Վրաստանի առևտրատնտեսական համագործակցություն:

Կենտրոնական խնդիրն է նաև ուղեղային կենտրոնների միջև ցանցային համագործակցության ձևավորումը և զարգացումը:

CRRC դոնորներ՝

- «Քարնեգի» կորպորացիա, Նյու Յորք
- Խազարի համալսարան (Khazar)
- Համաշխարհային բանկ
- Արժույթի միջազգային հիմնադրամ (International Monetary Fund)
- Միացյալ ազգեր, Ադրբեջան
- Շվեդական միջազգային զարգացման համագործակցություն (Swedish International Development Cooperation)
- Բաց հասարակության հիմնադրամներ՝ Think Tank հիմնադրամ (Open Society Foundations Think Tank Fund)
- Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն (ԱՄՆ ՄԶԳ):

Գործընկերների շրջանակն ավելի լայն է:

5. «Ժամանակակից զարգացում» ՀԿ (Թուրք-խալամական աշխարհ) գիտահետազոտական կենտրոնը որպես ՀԿ հիմնադրվել է 2008թ., սակայն 2011-ից գործում է որպես միջազգային կազմակերպություն, ներկա անունը ստացել է 2012թ., ղեկավարվում է համակարգող խորհրդի կողմից, կայքէջը՝ sluturk.info:

Հիմնական նպատակներն են թուրք-խալամական աշխարհում աշխարհաքաղաքական, դավանանքային, գաղափարախոսական, սոցիոլոգիական, տնտեսական, իրավունքի, մշակութային, սոցիալական հարցերի ուսումնասիրությունը, կրթական ոլորտներում համագործակցության խորացումը,

ազգային պետական գաղափարախոսության, հայրենասիրության, ազգային և բարոյական արժեքների, *թուրք-իսլամական գաղափարախոսության տարածումը, դրանց ընդգրկումը կրթական ծրագրերում*: Առաջնահերթություն է համարում *ԱՀ և Թուրքիայի ռազմավարական շահերի տեսանկյունից երկկողմանի և իսլամական աշխարհի հետ բազմակողմանի կապերի զարգացման հեռանկարների ուսումնասիրումը, դրանց հետագա խորացման համար առաջարկություններ ներկայացնելը*:

Կենտրոնը տարեկան անցկացնում է միջինը 2-3 գիտաժողով:

2006-2008թթ. հրատարակել է «Երկխոսություն 21 դար» (Dialog-XXI օսր) ամսագիրը, 2008-ից՝ «Թուրքական աշխարհ» (Türk Eli) պարբերականը, որի վերջին համարը, ըստ կենտրոնի կայքէջի, լույս է տեսել 2012թ. դեկտեմբերին:

Ներգրավված է ակտիվ քարոզչական աշխատանքներում, պատմության դասագրքերի պատրաստման և մշտադիտարկման գործընթացներում, համագործակցում է ԱՀ նախագահին կից Ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման խորհրդի հետ, ինչի արդյունքում կազմվել են «Հայրենասիրական զգացումների և քաղաքացիության ամրապնդում» և «Ազգային պատմության դասագիրք. ազգային ինքնագիտակցություն և ազգային շահեր» գրքերը, «Ինչպիսին պետք է լինի պետական գաղափարախոսությունը» հայեցակարգը և ուղարկվել են համապատասխան մարմիններին:

Քարոզչական աշխատանքներն իրականացվում են նաև Facebook սոցիալական ցանցի միջոցով:

Կենտրոնը գրքեր և զեկույցներ է պատրաստել Կովկասի աշխարհաքաղաքականություն, տնտեսական ճգնաժամ և թուրքական աշխարհ, հայ-թուրքական արձանագրություններ, Չանաքկալեի ճակատամարտում Թուրքիայի հաղթանակ, Իրանի հյուսիսային մասում թուրքական ինքնության զարթոնք, ույգուրյան թուրքեր, կոմունիզմի նոր սպառնալիք, ՋԼՄ դերը գաղափարախոսական պայքարում, կրոնը և աթեիզմը, իսլամի տարբեր ուղղությունները և դրանց ազդեցությունը հասարակության վրա թեմաներով:

Կապեր ունի պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, ՋԼՄ-ի, համալսարանների, գիտական հիմնարկների, դիվանագիտական կորպուսի հետ, *ներկայացուցչություններ ունի Վրաստանում, Ստրասբուրգում, Թուրքիայում և Ռուսաստանում*:

6. «Ռեզիոն» միջազգային վերլուծական կենտրոն

«Ռեզիոն» միջազգային վերլուծական կենտրոնը (նախկինում հայտնի է եղել «ժողովրդավարական բարեփոխումների հասարակություն» - DIUC անվամբ) հիմնադրվել է 1999թ., նոր անվանումը ստացել է 2012թ., հիմնադիրն է Ռազի Նուրուլանը (ներկայումս՝ կենտրոնի ավագ փորձագետ), կայքէջը՝ www.rbam.org, ունի նաև ֆեյսբուքյան էջ:

Կենտրոնը, որպես եվրաինտեգրման ջատագով, իր հիմնական առաքելությունն է համարում ադրբեջանական հասարակության և ամբողջ տարածաշրջանի եվրաինտեգրման ու ժողովրդավարության զարգացման, հետազոտական աշխատանքների միջոցով հասարակության ազատականացման և բարեփոխումների խթանումը, քաղաքականության հարցերով խորհրդատվությունների տրամադրումը:

Աղյուսակ 3

	Անվանումը	Կայքէջը	Ղեկավարը	Հիմն.
1	Կովկասի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ	www.ca-c.org	Էլլար Իսմայիլովը	1999թ.
2	Ռազմավարական հետազոտությունների և միջազգային հարաբերությունների կովկասյան կենտրոն	www.qafsam.org	Արագ Ասլանլի	2006թ.
3	«Կովկաս» էթնոսոցիալական հետազոտությունների կենտրոն	www.qesam.org	Վաֆա Հասանովա	2006թ.
4	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն	www.crrc.az	Գյուրսել Ալիև	2003թ.
5	Ժամանակակից զարգացում ՀԿ (Թուրք-իսլամական աշխարհ) գիտահետազոտական կենտրոն	www.uluturk.info հասանելի չէ	Կոլեգիալ ղեկավարում	2008թ.
6	«Ռեզիոն. Միջազգային վերլուծական կենտրոն	www.rbam.org	Ռազի Նուրուլան	1999թ.
7	Միջազգային հարաբերությունների հետազոտական կենտրոն	www.bmam-az.org	Ռուֆիգ Գոնագով	2006թ.
8	Tursam ռազմավարական հետազոտությունների կենտրոն	www.tursam.org	Ահմադ Շահիդով	2014թ.

Պնտրվեք. Եվրոպայի խորհուրդ, Եվրոպայի երիտասարդական հիմնադրամ, Հակամարտությունների ուսումնասիրման կենտրոն (CSRC), Ադրբեջանում Մեծ Բրիտանիայի, Կանադայի և Նորվեգիայի դեսպանություններ, International Alert միջազգային բարեգործական ընկերություն, Հոլանդիայի Ալֆրեդ Մոզերի հիմնադրամ, ԱՄՆ Ալբերտ Էյնշտեյնի ինստիտուտ:

Ռազմական և անվտանգային ոլորտի հետազոտություններ

Ադրբեջանում գոյություն ունի ռազմական և անվտանգային ոլորտի հետազոտություններ իրականացնող 3 կենտրոն:

1. «Ատլաս» գիտահետազոտական կենտրոնը հիմնադրվել է 2005թ., գրանցված չէ, ղեկավարն է Էլիան Շահինօղլուն, կայքէջը՝ www.icmal.az:

Շահինօղլուն հայտնի է հակաիրանական և ծայրահեղ թուրքամետ դիրքորոշմամբ: Հետազոտությունների հիմնական ուղղություններն են անվտանգության ոլորտը, ԼՂ հակամարտության վերաբերյալ քաղաքական փաստաթղթերի կազմումը, կարգավորման գործընթացին և բանակցություններին հետևելը, այս թեմայով գրքերի հրատարակումը և «կյոք սեղանների» կազմակերպումը: Բյուջեն ձևավորվում է նվիրատվություններից: Մերտ կապեր են ձևավորվել կենտրոնի և Թուրքիայի «21 դար թուրքական ինստիտուտի»¹, «Կովկաս» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի և Կիևի Մերձավորարևելյան հետազոտությունների կենտրոնի միջև: «Ատլասի» ղեկավարն աչքի է ընկնում ակտիվ գործունեությամբ, պարբերաբար հյուրընկալվում է ՆԱՏՕ շտաբ-բնակարանում, հետազոտական գործունեության հիմնական թեմաներն են ԼՂ հակամարտությունը, Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունները, Վրաստանի հետ ռազմավարական հարաբերությունների առավելությունները, Ռուսաստանի դերը Հվ.Կովկասում, հնարավոր փոփոխությունները Իրանում և «Հվ.Ադրբեջանում», Ադրբեջանի ռազմական հայեցակարգը: Նրա հեղինակած վերջին գիրքը՝ «От Майдана к Майдану», նվիրված է ուկրաինական զարգացումներին: Գործուն կապերը պետական մարմինների հետ բացակայում են, չգրանցված լինելու պատճառով չի կարո-

¹ Հայտնի է որպես ազգայնամոլական ուղղվածության ՈւԿ, որը սերտորեն համագործակցում է Ազգայնական շարժման և Ժողովրդահանրապետական կուսակցության, ինչպես նաև Թուրքիայի ազգային հետախուզական ծառայության հետ: Բնաստիտուտի նախագահ Ումիթ Օզդաղը հեղինակն է «Հայերի հոգեբանական պատերազմն աշխարհում և Թուրքիայում» աշխատության (2009թ.):

ղանում մասնակցել ԱՀ նախագահին կից Ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման պետական խորհրդի դրամաշնորհային մրցույթներին:

2. Եվրասիական անվտանգության և ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (ATSAM) հիմնադրվել է 2006թ., հիմնադիրներն են Հաթեմ Ջաբարլին (ներկա ղեկավար), Իլհամ Հասանովը և Էլմիրա Մամեդովան, կայքէջը՝ www.atsam.org:

Կենտրոնն իրականացնում է հիմնարար հետազոտություններ անվտանգային և ռազմական ոլորտներում, կազմակերպում է գիտաժողովներ, սիմպոզիումներ: Ստեղծման օրվանից իրականացվել է 200 հետազոտական նախագիծ: Կենտրոնի հիմնական միջազգային գործընկերներն են Թուրքիայի «21 դար թուրքական ինստիտուտը», Թուրքիայի միջազգային հետազոտությունների «Եվրասիական հիմնադրամը»: ԱՀ նախագահին կից Ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման խորհրդի օգնությամբ ստեղծում է իր նոր կայքէջը՝ www.qerbiazerbaycan.com:

3. Ռազմական վերլուծությունների հետազոտական կենտրոնը (HATM) ստեղծվել է 2008թ., հիմնադիրներն են Յաշար Ջաֆարլին (ներկա ղեկավար), Իլդիրիմ Մամեդովը և Ջասուր Մամեդովը, կայքէջը՝ www.milaz.info (ադրբեջանական լրատվամիջոցների տարածած տեղեկատվության համաձայն, այն նախկինում ենթարկվել է հաքերային հարձակումների):

Հիմնական ուղղություններն են անվտանգային և ռազմական հետազոտությունները, ոլորտի գործընթացների վերլուծությունը, մեկնաբանումը և կանխատեսումները: Իրականացված ուշագրավ նախագծերից կարելի է նշել «Տարածաշրջանի երկրների ռազմական հայեցակարգերը. կայունություն, թե՞ հակամարտության սպառնալիք» թեմայով կատարված հետազոտությունը:

Մինչև 2014թ. Ադրբեջանում գործում էր ռազմական և անվտանգային ոլորտի հետազոտություններ իրականացնող ևս մեկ կառույց՝ «Դոկտրինա» ռազմական հետազոտությունների կենտրոնը (հիմնադրվել էր 2005թ.), որը ղեկավարում էր Ջասուր Մամեդովը (Սումերիլի):

Պաշտպանության և անվտանգային ոլորտներում ուսումնասիրություններ կատարելուց բացի, կենտրոնը խթանում էր ռազմական լրագրության զարգացումը:

Վերջինս իրականացրել էր հետևյալ նախագծերը.

- Ադրբեջանի զինված ուժերի համապատասխանեցումը ՆԱՏՕ չափանիշներին, իրավիճակի մշտադիտարկում (2007);
- Ադրբեջանի պաշտպանության և անվտանգության ոլորտի բարեփոխումները (2008);
- Պաշտպանության և անվտանգության ոլորտներում Ադրբեջանի կորուստների մշտադիտարկում (2003-2011թթ.);
- Ադրբեջանի ռազմական ծախսերը և դրանց արդյունավետությունը (2005-2011թթ.);
- Ադրբեջան-ՆԱՏՕ համագործակցությունը ռազմական փաստաթղթերի համատեղ կազմման ոլորտում (2005-2011թթ.);
- Անվտանգության իրավիճակը Հարավային Կովկասում (2005-2011թթ.);
- Ադրբեջան-Հայաստան շփման գծում տիրող իրավիճակի ուսումնասիրություն և պատերազմի հավանականությունը (2005-2011թթ.);
- Զինձառայողների սոցիալական բարեկեցությանն ուղղված օրենսդրական առաջարկությունների պատրաստում:

Ադրբեջանի Ոչ կառավարական կազմակերպությունների աջակցման խորհրդի ֆինանսավորմամբ «Դոկտրինան» իրականացրել էր հետևյալ նախագծերը.

- ՆԱՏՕ նոր ռազմավարական հայեցակարգը, անդամ երկրների գործընկերության նոր քաղաքականությունը:
- Կասպից ծովի անվտանգային խնդիրների ուսումնասիրություն, Ադրբեջան-ԱՄՆ հարաբերությունները և հեռանկարները:

2014թ. Ադրբեջանում իրավապաշտպան կազմակերպությունների և այլախոհների նկատմամբ սկիզբ առած ճնշումների պատճառով կենտրոնի ղեկավար Ջասուր Մամադովը (Մումերիևի) մեկնել է արտերկիր (վերջինիս գտնվելու վայրը հայտնի չէ, ըստ շրջանառվող լուրերի՝ գտնվում է Բեռլինում) և ստեղծել «Խազար» ռազմական հետազոտությունների ինստիտուտը: Նշված ճնշումները Ջ.Մամադովի համար հատկապես վտանգավոր են դարձել, երբ 2014թ. հայ-ադրբեջանական շփման գծում լարվածության առաջացման արդյունքում հրավիրված խորհրդակցության ընթացքում ԱՀ նախագահի աշ-

խատակազմի ղեկավար Ռամիգ Մեհթիևը խիստ քննադատության է ենթարկել ռազմական ոլորտի փորձագետներին՝ մեղադրելով նրանց ռազմական գաղտնիքներ հրապարակելու մեջ, սպառնալով նրանց պատժել: Դրանից հետո ճնշումներն ահագնացել են:

Կենտրոնն իր առաջնահերթությունն է համարում ԱՀ անվտանգության և պաշտպանության ոլորտներում մարդու իրավունքների վիճակի մշտադիտարկումը, որը ներառում է զինծառայողների սոցիալական ապահովության հարցերը, ՋՈւ ուժերի հաշվետու լինելը խորհրդարանի և հասարակության առջև, ռազմական ծախսերի թափանցիկությունը, գորամասերում քրեական հանցագործությունների հետաքննությունը, մարտական և ոչ մարտական կորուստները, զորակոչը, կոռուպցիայի և կաշառակերության դեպքերը: Ջ.Մամադովը գտնում է, որ չնայած ռազմական և անվտանգության ոլորտին հատկացվող մոտ \$4 մլրդ-ին, այս ոլորտներում գոյություն ունեն լուրջ պրոբլեմներ մարդու իրավունքների հետ կապված:

Մույն ինստիտուտի անունից հրապարակված զեկույցում Ադրբեջանի ռազմական ղեկավարությունը խիստ քննադատության է ենթարկվում այդ թվում նաև հասարակությունից ԱՀ ՋՈւ իրական կորուստների թիվը թաքցնելու համար: Ջեկույցի հեղինակ(ներ)ը, հիմնվելով հայ-ադրբեջանական հակամարտության ռազմաքաղաքական սեփական վերլուծության վրա, եզրակացնում է(են), որ մոտակա 3-5 տարիներին լայնամասշտաբ պատերազմական գործողություններ չեն լինի:


Ոչ կառավարական կենտրոնների համեմատական վերլուծությունն ըստ հետազոտական ուղղությունների (ոլորտների)

Ոչ կառավարական կենտրոնների համեմատական վերլուծության հիմնական չափորոշիչներից մեկը համարելով ֆինանսական հատկացումները՝ դիտարկենք կենտրոնների տարեկան բյուջեները՝ միջինացված ըստ ոլորտների¹:

Հաշվի առնելով, որ նշված թվերը ոչ կառավարական կազմակերպությունները ներկայացրել են ի պատասխան ԱՀ նախագահին առընթեր

¹ Այս և մյուս աղյուսակների կազմման համար հիմք են հանդիսացել «Ադրբեջանի հետազոտական և ուղեղային կենտրոնները» (Թ.Ալլահյարովա, Ֆ.Մամադով, ադրբեջաներեն, Բաքու, 2013թ.) գրքում առկա տվյալները:


Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի կատարած ուղղակի հարցման, չպետք է բացառել ՀԿ-ների կողմից ֆինանսական հոսքերը պետական մարմնից թաքցնելու հավանականությունը: Որոշակի վերապահումներով հանդերձ, տարեկան միջին բյուջեների համամասնությունն ըստ ոլորտների, ընդհանուր առմամբ, արտացոլում է իրական պատկերը:




Բերված գծապատկերից երևում է, որ սոցիալ-տնտեսական ոլորտի հետազոտություններում մեկ կենտրոնի կողմից ներդրված գումարները կրկնապատիկ գերազանցում են երկրորդ տեղում գտնվող հասարակական-քաղաքական հետազոտություններով զբաղվող կենտրոնների միջին տարեկան բյուջեն: Եթե սրան էլ գումարենք, որ սոցիալ-տնտեսական հետազոտություններով զբաղվող ՈւԿ-ներն ավելի մեծ հնարավորություններ ունեն արտաբյուջետային ֆինանսական հոսքեր ապահովել միջազգային գործընկերներից, ապա պատկերը կամբողջանա: Այսպիսով, սոցիալ-տնտեսական հետազոտություններ իրականացնող կայացած ոչ կառավարական կենտրոնները ֆինանսապես գտնվում են ավելի ամուր հիմքերի վրա, ինչը ՈւԿ-ների զարգացման համար ստեղծում է նպաստավոր պայմաններ:

Արտաքին համագործակցության գնահատման համար որպես ցուցիչ ընտրվել են արտերկրյա գործընկերների և գործուղումների միջինացված թվերը, որոնց համաձայն, սոցիալ-տնտեսական ոլորտի մասնագետներն անհամեմատ շատ են մասնակցում արտերկրյա միջոցառումների, ինչը վկայում է մյուս ոլորտների մասնագետների համեմատ արտերկրում նրանց պահանջվածության մասին:


Արտաքին համագործակցություն



Գործունեության ակտիվությունը և արտադրանքը



Համագործակցությունը պետական մարմինների հետ



Աղբրեջանակալան հետազոտողական կենտրոններիը ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի 2014թ. զեկուցումը

Թիվ ¹	Աղբրառակի անվանումներ	Կենտրոնների անվանումներ																		
		CESD	SAM	CRRG	FMA	EDF	ERC	CIE	PFMC	NBG	Prioritet	ATTA								
1/2	Առաջատար Ու Կ-ներ (առանց ԱՄՆ-ի)	63																		
2/3	Առաջատար Ու Կ-ներ (ԱՄՆ-ը ներառյալ)	132	123																	
3/8	Կենտրոնական Ազիայի Ու Կ-ներ	1	44	3	15	28	29													
4/15	Տնտեսական ներքին քաղաքականության Ու Կ-ներ	78																		
5/16	Կղթական արդար	28						47												
6/17	Բներգետիկայի և բնական պաշարների քաղաքականություն	15																		
7/22	Միջազգային գարգացում	42																		
8/23	Միջազգային տնտեսական քաղաքականություն	50																		
9/26	Թարիմնեցիություն և արդյունավետ կառավարում								33											
10/27	Լավագույն քարոզչության Ու Կ		51				46			75										
11/28	Ամենամեծ շահույթ ստացող Ու Կ																			27
12/29	Կառավարության հետ կապված լավագույն Ու Կ		26																	
13/30	Այլ կենտրոնների հետ ինտերոպերիտալ լավագույն համագործակցություն	5																		
14/31	Ամենաբարձր կառավարում ունեցող Ու Կ	7	56																	
15/34	Քաղաքականության բնագավառում լավագույն զեկույց պատրաստած Ու Կ	24																		
16/36	Լավագույն ցանցային Ու Կ																			51
17/40	Մոնիթորինգային ցանցերը լավագույն օգտագործող Ու Կ	26																		
18/41	Լավագույն դիտարկում իրականացնող Ու Կ						61													
19/42	Լավագույն միջազգային կապեր ունեցող և հասարակության ներգրավում ապահովող Ու Կ	27																		
20/46	Պետական քաղաքականության վրա ազդեցություն ունեցող Ու Կ	25																		
21/47	Պետական ծրագրերի աջակցման քաղաքականությունը հայտնի Ու Կ	38																		
22/49	\$5 մլն-ից պակաս տարեկան բյուջե ունեցող լավագույն Ու Կ	7																		

¹ Նշված թվերն ունեն հետևյալ նշանակությունը. տույն արդուակիի հերթակալան համարը/ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի 2014թ. զեկույցի համապատասխան անվանմամբ արդուակիի հերթակալան համարը:

Ծանոթագրություններ

1. CESD (Center for Economic and Social Development) - Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոն
2. SAM (Center for Strategic Studies) - ԱՀ նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների կենտրոն
3. CRRC (Caucasus Research Resource Center) - Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
4. FMA (Free Minds Association) - Ազատ մտքերի ասոցիացիա
5. EDF (Entrepreneurship Development Foundation) - Ձեռներեցության զարգացման հիմնադրամ
6. ERC (Economic Research Center) - Տնտեսական հետազոտությունների կենտրոն
7. CIE (Center for Innovations in Education) - Կրթական նորարարությունների կենտրոն
8. PFMC (Public Finance Monitoring Center) - Հանրային ֆինանսների մշտադիտարկման կենտրոն
9. NBG (National Budget Group) - Ազգային բյուջետային խումբ
10. Prioritet
11. ATTA (Azerbaijan Think Tank Alliance) - Ադրբեջանի ուղեղային կենտրոնների դաշինք:

ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի 2014թ. գեկույցի համաձայն, Ադրբեջանում գոյություն ունի 14 ուղեղային կենտրոն, որոնցից 11-ը ներգրավված է վարկանշային աղյուսակներում: Կազմված այդպիսի 49 աղյուսակից Ադրբեջանը ներկայացված է 22-ում: Հատկանշական է, որ ներառված որոշ կենտրոններ աչքի չեն ընկնում հրապարակային արդյունավետ գործունեությամբ, և նրանց ընդգրկումը վարկանշային աղյուսակների բարձր հորիզոնականներում տարակուսանք է առաջացնում: Հակառակ դրան, անտեսված է ԱՀ Էկոնոմիկայի և արդյունաբերության նախարարության Տնտեսական բարեփոխումների գիտահետազոտական ինստիտուտը, որը պետական լուրջ ֆինանսավորման արդյունքում ունի տարածաշրջանային կենտրոնների համեմատ մեծ փորձագիտական կազմ և իրականացնում է երկու տասնյակից ավելի տնտեսական հետազոտական նախագծեր:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

*Արեստակես Միմավորյան**

Թուրքիայում ռազմավարական հետազոտական կենտրոնների¹ (ՌՀԿ) համակարգային զարգացումը սկսվել է 1960-ական թթ.: Կարելի է ասել, որ մերձավորարևելյան տարածաշրջանի երկրների շարքում Թուրքիան Իսրայելի հետ միասին ունի ամենահին հետազոտական կենտրոնները²: Դրանցում բազմաթիվ ոլորտների և ուղղությունների կողքին հետազոտվում են նաև հայաստանյան ՌՀԿ-ների զարգացման առանձնահատկությունները, տիպաբանությունը, ռազմավարական առաջնահերթությունները և այլն³:

ՌՀԿ-ների հիմնադրման բուռն շրջանի սկիզբ կարելի է համարել 2002թ., երբ իշխանության եկավ Արդարություն և զարգացում կուսակցությունը: Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումներով, նոր հակամարտություններով, տարաբնույթ ճգնաժամերով և այլ խնդիրներով պայմանավորված, ինչպես նաև գործնական քաղաքականության և ակադեմիական գիտության միջև գոյություն ունեցող խոչընդոտները հաղթահարելու, որոշում կայացնողների վրա ազդեցություն գործելու նպատակով վերջին տասնամյակում ձևավորվել են բազմաշերտ հարցերով զբաղվող նոր որակի նեղ մասնագիտացված փորձագիտական-վերլուծական հաստատություններ: Թուրքական ՌՀԿ-ների բուն գործառույթն է՝ հանդես գալ զաղափար-առաջարկու-

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար:

¹ «Ուղեղային կենտրոն» եզրույթի թուրքական համարժեքը շրջանառության մեջ է դրվել 1990-ական թթ. կեսերին: Մինչ այդ չկար ընդհանուր ավանում, անգամ արևմտյան «Think-thank» եզրույթով: Թուրքական անվանումներն են düşünce kuruluşlar - մտավոր կառույցներ, düşünce merkezleri - մտավոր կենտրոններ, Stratejik Araştırmalar Merkezi - Ռազմավարական հետազոտությունների կենտրոն և այլն:

² Eric C. Johnson, “Policy Making Beyond the Politics of Conflict: Civil Society Think Tanks in the Middle East and North Africa”, in Think Tanks and Civil Societies: Catalysts for Ideas and Action, eds. James G. McGann and R. Kent Weaver, (New Jersey: Transaction Publishers, 2000), p. 339-340.

³ Oya Eren, Ermenistan’da think-thank’lar, Hasan Ali Karasar, Hasan Kanbolat, «Avrasya’da Stratejik Düşünce Kültürü ve Kuruluşları», 2012, s. 11-23.

թյուններով, մշակել ազգային անվտանգության խնդիրներից բխող ռազմավարական ծրագրեր, զարգացում ապահովող տեսլականներ, կատարել քաղաքական և ռազմական նշանակության կանխատեսումներ, և որ ամենակարևորն է՝ դրանք հասցնել որոշում կայացնողներին:

Եթե մինչև ԽՍՀՄ փլուզումը արտաքին քաղաքականության «գաղափարների շուկայում» կային հատուկենտ ՌՀԿ-ներ, որոնք զբաղվում էին այս ոլորտի խնդիրների հայեցակարգային և ռազմավարական տեսլականների վերամշակմամբ և որոշում կայացնողների վրա ունեին թույլ ազդեցություն, ապա այսօր, գործնական քաղաքականության իրականացման նպատակով, պետական մարմիններն ու այլ քաղաքական դերակատարներ սկսել են օգտվել նրանց մշակումներից և վերլուծություններից, հատկապես արտաքին քաղաքականության և անվտանգության ոլորտում: Մյուս կողմից՝ ՌՀԿ-ները մասամբ իրենց ներդրումն են ունենում Թուրքիայի դիվանագիտական ջանքերի զարգացման և ամրապնդման գործում: Նշենք նաև, որ Թուրքիայի դեկավար այրերն ավելի հաճախակի են սկսել այցելել և դասախոսություններով հանդես գալ ՌՀԿ-ներում, ինչը դառնում է այս ոլորտի գործունեության անբաժանելի մասը¹:

Պետական պաշտոնյաներին «մտավոր աջակցություն» ցուցաբերելու և «ուղեղային կենտրոնների» հետ միջազգային համագործակցության կամուրջներ հիմնելու նպատակով հաճախակի են դարձել պետական պատվիրակությունների կազմում թուրք փորձագետների այցելություններն արտասահմանյան երկրներ: Վերջին տարիներին թուրքական քաղաքական դեկավարությունը բազմիցս հրապարակավ շեշտել է «ուղեղային կենտրոնների» նշանակությունն ու դերը ոչ միայն արտաքին քաղաքականության ոլորտում, այլև ընդհանրապես²:

Թուրքիայի ՌՀԿ-ներն այսօր ուսումնասիրում են բազմաթիվ բնագավառներ՝ քաղաքագիտականից մինչև սպորտային, իսկ համացանցային և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, գիտակրթական ձեռքբերումների հետ միասին մատչելի դարձավ նաև տեղեկատվություն ստանալը,

¹ Türkiye'nin yönünü tartışmak bilgisizlik,

<http://www.hurriyet.com.tr/gundem/12861769.asp> (5 Kasım 2009).

² Hasan Kanbolat, Prime Minister Erdoğan and Turkish think tanks,

http://www.todayszaman.com/columnist/hasan-kanbolat/prime-minister-erdogan-and-turkish-think-tanks_307437.html (February 18, 2013)

ինչն առաջ բերեց նաև տեղեկատվական հոսքերի ընդգրկուն տիրույթ: Եվ շատ դեպքերում կենտրոնները հիմնվեցին այդ տիրույթում եղած տեղեկատվական նյութի հայթայթման, մշակման, վերահսկման և վերլուծման համար, որն, ի դեպ, առնչություն ուներ ազգային անվտանգության բաղադրիչ հանդիսացող, 21-րդ դարում աննախադեպ մեծ ծավալների հասնող տեղեկատվական պատերազմների հետ: Սակայն նման կառույցների հիմնումը միայն վերոհիշյալ գործոնների հետ չէր կապված. դրանց ի հայտ գալուն նպաստում էին նաև աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումները:

Թուրքական վերլուծական շրջանակները ՌՀԿ-ների զարգացումը պայմանավորում են այն հանգամանքով, որ համալսարանները չեն կարողացել գնահատական տալ Թուրքիայում տեղի ունեցող ռազմական հեղաշրջումներին և արտաքին քաղաքականության զգայուն հարցերին: Եվ իսկապես, համալսարաններում գիտահետազոտական աշխատանքը հաճախ սահմանափակվում է տեսական և մեթոդական խորհրդատվությունների տրամադրումով, ինչը համահունչ չէ իրական քաղաքական զարգացումներին: Մինչդեռ պաշտոնատար անձինք, ընթացիկ քաղաքական խնդիրներում կենտրոնանալու պատճառով, ի վիճակի չեն եղել համակարգել և մշակել այնպիսի արդյունավետ մեթոդներ, որոնք ուղղված կլինեին գլոբալ քաղաքական խնդիրների լուծմանը: Այդ և դրանցից ածանցված այլ խնդիրների համակարգային լուծման պահանջարկը փորձեցին իրականացնել առաջին հերթին մասնավոր սեկտորին պատկանող և ապա պետական կառույցներին կից գործող հետազոտական հաստատությունները:

Զնայած թուրքական գիտական և մերձգիտական շրջանակներում գերիշխում է այն տեսակետը, թե ՌՀԿ-ները համեմատաբար նոր երևույթ են Թուրքիայի քաղաքական և հասարակական կյանքում, այդուհանդերձ, դրանք ձևավորվել են անցյալ դարի երկրորդ կեսին, երկար ճանապարհ են անցել և այսօր ձեռք են բերել «թինկ-թանկ»-ին բնորոշ աշխատանքային ոճ՝ յուրօրինակ նախատիպ դառնալով հետագա տարիներին ստեղծված ՌՀԿ-ների համար: Հատկապես Թուրքիայի արտաքին քաղաքականության ոլորտում վերլուծական կենտրոնների համակարգային զարգացումը սկսվել է անցյալ դարի 70-ական թթ., այն բանից հետո, երբ հանվեց երկրի արտաքին քաղաքականության ուղեգծի վերաբերյալ հասարակական տարբեր շերտերի՝ քննարկումներ իրականացնելու տասնամյակներ տևած ոչ պաշտոնական արգելքը:

ՌՀԿ-ների զարգացումն ընթացել է երեք հինական փուլով.

- 1960-1991թթ.
- 1991-2002թթ.
- 2002թ. մինչև մեր օրերը:

Առաջին փուլ՝ 1960-1991թթ.

«Առաջին սերնդի» թուրքական կենտրոններն ի հայտ են եկել 1960-ական թթ. սկզբին՝ պայմանավորված Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքական կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխություններով, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքում ընթացող արաբա-իսրայելական պատերազմներով, Թուրքիայի ռազմական հեղաշրջումներով, ԵՄ-Թուրքիա հարաբերություններով, հետագայում՝ Կիպրոսյան խնդրով:

Այս փուլի համար կարելի է առանձնացնել հետևյալ գործոնները.

1961թ. ընդունված նոր սահմանադրությունը: 1950-ական թթ. Թուրքիայում չկային սահմանադրական և քաղաքական բավարար նախադրյալներ, որոնք կնպաստեին պետությունից անկախ գործող ՌՀԿ-ների ստեղծմանը: Պետությունը չէր ստեղծում բարենպաստ պայմաններ դրանց հիմնադրման և զարգացման համար, քանի որ պետական նշանակության խնդիրների քննարկմամբ, վերլուծությամբ Թուրքիայում զբաղվում էին Ազգային անվտանգության, պաշտպանության նախարարության և արտգործնախարարության հատուկ փակ «անալիտիկ» խմբերը, որոնց համապատասխան աշխատանքը պետության միակ վստահելի աղբյուրն էր:

1961թ. ընդունված նոր սահմանադրության մեջ կատարվեցին փոփոխություններ, այդ թվում՝ միությունների կամ հիմնադրամների վերաբերյալ կետում, ինչը գիտահետազոտական կենտրոնների նմանությամբ հիմնադրամներ, կազմակերպություններ և հաստատություններ հիմնելու հնարավորություններ էր ընձեռում¹:

1963թ. Անկարայի պայմանագիրը և թուրքական կապիտալի վերելքը: ՌՀԿ-ների հիմնադրման համար նպաստավոր հանգամանք էր նաև 1963թ. Եվրոպական տնտեսական համայնքի (ԵՏՀ) հետ Թուրքիայի կառավարության ստորագրած Անկարայի պայմանագիրը: Եվրոպայի հետ տնտեսական

¹ Bülent Aras, Şule Toktaş, Ümit Kurt, Araştırma Merkezlerinin Yükselişi. Türkiye'de Dış Politika ve Ulusal Güvenlik Kültürü, Ankara, 2010, s. 51.

համագործակցությունը լայն հնարավորություններ ստեղծեց Թուրքիայի համար. երկրում բարձրացավ տնտեսագիտության ոլորտի մասնագետների և դրան առնչվող գիտելիքի պահանջարկը: Այս ամենի հետևանքով թուրքական գործարար աշխարհը Եվրոպայի տնտեսական դաշտի ուսումնասիրության համար լայնածավալ միջոցառումներ սկսեց անցկացնել: Մյուս կողմից՝ բիզնես շրջանակները նպատակադրվել էին պետական տնտեսական քաղաքականության հարցում որոշում կայացնողների վրա ազդելու նոր միջոցներ և հարթակներ փնտրել, ինչի դերում հանդես եկան հետազոտական կենտրոնները: Գործարար շրջանակների կողմից ստեղծվեցին առաջին կենտրոնները, որոնք ունեին տնտեսական և սոցիալական ուղղվածություն. դրանք էին Տնտեսական և սոցիալական հետազոտությունների կոնֆերանսների պատվիրակությունը (Ekonomik ve Sosyal Etütler Konferans Heyeti), որը 1994թ. վերանվանվեց և ներկայումս գործում է Տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ անվամբ (Türkiye Ekonomik ve Sosyal Etütler Vakfı-TESEV), Տնտեսական հետազոտությունների հիմնադրամը (İktisadi Araştırmalar Vakfı) և Տնտեսական զարգացման հիմնադրամը (İktisadi Kalkınma Vakfı-İKV):

Թուրքիայի ռազմական հեղաշրջումները և Կիպրոսյան խնդիրը: Արտաքին քաղաքական նշանակության հիմնախնդիրները տարեցտարի բազմապատկվում էին, իսկ պետական պաշտոնյաները դժվարանում էին աշխատել բոլոր ճակատներով: Մի կողմից՝ համալսարանները չէին կարողանում գնահատական տալ Թուրքիայում տեղի ունեցող ռազմական հեղաշրջումներին, մյուս կողմից՝ ձախակողմյան քաղաքական կուսակցությունները քննադատության էին ենթարկում Թուրքիայի իշխանությունների արևմտյան կողմնորոշումը: Մինևույն ժամանակ, պետությունն ամեն ինչ անում էր, որպեսզի ներքին և արտաքին քաղաքականության խնդիրներով զբաղվող կառույցներ ի հայտ չգան, խիստ մոտեցում ուներ արտաքին քաղաքականությանն առնչվող ցանկացած խնդրի և համարում էր, որ նման վերլուծությունները միայն իր և ԱԳՆ խնդիրն են: Նման հարցերով զբաղվող կառույցները պետք է հարմարեցնեին իրենց դիրքորոշումը պետական քաղաքականության հետ, այլապես կհայտնվեին ազգային անվտանգությամբ զբաղվող կառույցների վերահսկողության ներքո: Մինչդեռ, անտեսելով բոլոր նախազգուշացումները, Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականությամբ մտահոգ ազդեցիկ ինտելեկտուալ շրջա-

նակները ձեռնարկեցին որոշակի քայլեր՝ ստեղծելու բոլորովին այլ կարգի հետազոտական ինստիտուտներ, որոնք գիտավերլուծական աշխատանքներ պետք է իրականացնեին միայն արտաքին քաղաքականության ոլորտում:

Կիպրոսյան ինդիան անմիջական ազդեցություն ունեցավ թուրքական պետականության ռազմավարական նոր մտքի ձևավորման վրա և դարձավ առաջին քաղաքական ուղղվածությամբ կենտրոնի՝ *Արտաքին քաղաքականության ինստիտուտի (Dış Politika Enstitüsü-DPE)* ստեղծման հիմնական շարժառիթը, որը հիմնադրվեց դիվանագիտական կորպուսի նախկին աշխատակիցների կողմից: Այս կենտրոնի ստեղծման հիմք հանդիսացավ «*Foreign Policy*» («Արտաքին քաղաքականություն») ամսագիրը, որը հրատարակվում էր 1971 թվականից: Կենտրոնի հիմնադրման գործում մեծ էր ԱՄՆ Միջազգային հարաբերությունների խորհրդի (Council on Foreign Relations, CFR) դերը, որին մասնակցություն ունեցավ ներկայում գործունեությունը դադարեցրած իտալական հետազոտական մի ինստիտուտ ևս: Վերջիններիս մեթոդաբանական մշակումները ներդրվեցին DPE աշխատանքային կանոնադրության մեջ:

Իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ 1980թ. Թուրքիայում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում. սահմանափակվեցին որոշ ազատություններ, ինչի հետևանքով գիտավերլուծական կենտրոնների զարգացումը մասամբ կասեցվեց: Ռազմական հեղաշրջման առաջին տարիներին թուրքական ակադեմիական շրջանակները և հատկապես պետնախարարները, մշտապես մեկնելով ԱՄՆ, որոշակի հետաքրքրություն էին ցուցաբերել ամերիկյան ՈւԿ-ների հանդեպ¹ և տպավորված նրանց աշխատանքներով՝ մտադրություն էին հայտնել հիմնել ռազմավարական հետազոտություններ իրականացնող պետական հաստատություններ: Թեև պետական վերլուծական կենտրոններ հիմնադրելու հարցում միակարծիք էր նաև վարչապետի տնտեսական խորհրդական Թուրգութ Օզալը (1980-1982թթ.), այդուհանդերձ, վերջինս չափավոր մոտեցում ուներ և համարում էր, որ ամերիկյան տիպի պետական ՌՀԿ-ների հիմնումը Թուրքիայում հնարավոր չէ: Եվ չնայած քաղաքական հարթակներում այս հարցի շուրջ եղած տարաձայնություններին, մի քանի ուշագրավ միտումներ ի

¹ Օրինակ՝ նախկին պետնախարար Հասան Ջելալ Գյուզելը 1970թ. վերջին աշխատանքային այցով մեկնել է վաշինգտոնյան մի վերլուծաբանական կենտրոն, ներկա գտնվել «սեմինարի» կարգով ընթացող ԽՍՀՄ հնարավոր փլուզման թեմայի քննարկմանը:

հայտ եկան: Պետության անմիջական հրահանգով և վերահսկողությամբ ստեղծվեցին ոչ պետական, «անկախ», քաղաքական օրակարգային խնդիրների լուծմանը նպատակաուղղված վերլուծական հաստատություններ:

Մասնավորապես, քանի որ ռազմական հեղաշրջումից հետո Թուրքիայի անդամակցությունը ԵԽ-ին կասեցվել էր, 1980թ. հիմնադրվեց *Քաղաքական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամը* (Siyasal ve Sosyal Araştırmalar Vakfi-SİSAV), որը պետք է զբաղվեր ԵԽԽՎ-ում Թուրքիայի շահերի պաշտպանությամբ և լոբբինգով:

1984թ. այլընտրանքային արտաքին քաղաքականության ոլորտում ռազմավարական մշակումների իրականացման նպատակով, նորանշանակ վարչապետ Թուրգութ Օզալի (1983-1989թթ.) հանձնարարականով, արտգործնախարար Վահիթ Մելիհի Հալեֆօղլուի գլխավորությամբ հիմնադրվեց *Միջին Արևելքի և բալկանյան հետազոտությունների հիմնադրամը* (Ortadoğu ve Balkan İncelemeleri Vakfi-OBİV), իսկ 1989թ. Օզալի խորհրդական Էրհան Գյոքսելի գլխավորությամբ հիմնադրվեց «ՎԵՐՍՈ» *քաղաքական հետազոտությունների կենտրոնը*:

Վերը հիշատակված կենտրոնները ղեկավարվում էին հիմնականում Թուրգութ Օզալի մերձավոր շրջապատի քաղաքական գործիչների և նրա հիմնադրած «Մայր հայրենիք» կուսակցության ներկայացուցիչների կողմից: Պետական հաստատություններ չլինելով՝ այս կենտրոններն իշխանությունների համար վերածվել էին քաղաքական գործիքների: 1980-ականների կեսերից սկսած՝ այս ոլորտում առկա սահմանափակումները նվազեցին, և գիտավերլուծական կառույցներ հիմնադրվեցին ինչպես քաղաքական տարբեր ուժերի, այնպես էլ ակադեմիական և գործարար շրջանակների կողմից:

Միջկուսակցական հարաբերություններ: Հաջորդ էական փոփոխությունը քաղաքագիտական կամ տարածաշրջանային հետազոտություններ կատարող կառույցի հետ կապված չէր, ինչը սովորաբար նորաստեղծ «թինկ-թանկերի» համար համարվում էր ուսումնասիրվող ոլորտների անբաժանելի մաս: Հայտնի է, որ ժողովրդավարացման ծրագրերով գործող բազմաթիվ եվրոպական կազմակերպություններ (սեփական ֆինանսավորմամբ) այսօր մասնաճյուղեր են բացել տարբեր երկրներում՝ դրանք դարձնելով «դեմոկրատիայի գործիքներ»: Խոսքը ժողովրդավարական արժեքների ներմուծման և

տարածման համար նախատեսված կազմակերպությունների մասին է: 1980-ականների վերջին թուրքական հասարակությանը եվրոպական արժեքներին ծանոթացնելու և դրան ինտեգրելու քայլեր ձեռնարկվեցին, ինչին իրենց մասնակցությունն ունեցան որոշ արտասահմանյան հիմնադրամներ:

1980-ականներին թուրքական «Մայր հայրենիք» կուսակցության և Գերմանիայի Քրիստոնեա-դեմոկրատական միություն կուսակցության միջև ձևավորված համագործակցությունը խթանեց գերմանական հիմնադրամների (Stiftung) մուտքը Թուրքիայի տարածք: Մասնավորապես, այս կապերի շնորհիվ 1984թ. հիմնադրվեց «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի թուրքական մասնաճյուղը: 1987թ. «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի անմիջական աջակցությամբ հիմնադրվեց *Թուրքիայի դեմոկրատիա հիմնադրամը* (TDV-Türkiye Demokrasi Vakfi):

Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության (ԳՄԴԿ) և Էրդալ Ինոյուլի ղեկավարած Սոցիալական ժողովրդավարության ժողովրդական կուսակցության (Sosyaldemokrat Halkçı Parti-SHP) միջև հաստատված կապերի արդյունքում 1988թ. հիմնադրվեց «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի Թուրքիայի մասնաճյուղը: Իր հերթին, գերմանական կուսակցության ուղեղային կենտրոն համարվող «Ֆրիդրիխ Էբերտ»-ի հիմնադրամի աջակցությամբ, 1989թ. ստեղծվեց թուրքական առաջին կուսակցապատկան վերլուծական կառույցը՝ *Թուրքիայի սոցիալական, տնտեսական և քաղաքական հետազոտությունների հիմնադրամը* (Türkiye Sosyal Ekonomik Siyasal Araştırmalar Vakfi-TÜSES):

Այսպես է ընթացել 1960-1991թթ. թուրքական հետազոտական կենտրոնների կայացման առաջին փուլը: Ստեղծվել են մի քանի կենտրոններ, որոնց ուսումնասիրություններն ու հետաքրքրություններն ընդգրկում էին քաղաքագիտականից մինչև իսլամական հետազոտություններ: Մակայն պետք է նշել, որ այս ժամանակաշրջանում հիմնադրված կենտրոններն այդպես էլ չընկալվեցին որպես «թինկ-թանկ», քանի որ դրանց մեջ չէին տեսնում ամերիկյան ճանաչված կազմակերպությունների հզորությունը: Մյուս կողմից՝ դրանց մեծ մասը, խնդիրներ ունենալով իշխանությունների հետ կամ կանգնելով կադրային և ֆինանսական խնդիրների առջև, չդիմանալով մրցակցությանը, դադարեցրեց գործունեությունը:

Երկրորդ փուլ՝ 1991-2002թթ.

Տարածաշրջանային և աշխարհառազմավարական այնպիսի շրջադարձերը, ինչպիսիք էին ԽՍՀՄ և սոցճամբարի փլուզումը, իրաքյան առաջին պատերազմը, Թուրքիային կանգնեցրին նոր մարտահրավերների և հնարավորությունների առջև: Հասարակության տարբեր շերտեր սկսում են շոշափել Թուրքիայի անվտանգության և արտաքին քաղաքականության, ինչպես նաև այլ բնույթի հիմնահարցեր (մարդու իրավունքներ, գիտակրթական, առողջապահական և այլն), տարբեր հարթակներից բարձրաձայնվում են այլընտրանքային քաղաքականության ձևավորման սեփական մոտեցումներն ու տեսլականները: Անվտանգության և արտաքին քաղաքականության նոր ռազմավարության ձևավորման շուրջ ակտիվ քննարկումներ են սկսվում նաև քաղաքական շրջանակներում:

Թուրքիայի փորձագիտական հանրույթին նույնպես չէր կարող չմտահոգել այս իրավիճակը: Գործնական քաղաքականության և ակադեմիական գիտության միջև գոյություն ունեցող խոչընդոտները հաղթահարելու, ինչպես նաև որոշում կայացնողների վրա ազդեցություն գործելու նպատակով ձևավորվեցին նոր որակի և բազմաշերտ հարցերով զբաղվող նեղ մասնագիտացված փորձագիտական-վերլուծական հաստատություններ, ինչը նկատելի չէր մինչև 1991թ.:

Արտաքին քաղաքականության և անվտանգության ոլորտներում ստեղծվեցին *Սոցիալական և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամը* (KÖK Sosyal ve Stratejik Araştırmalar Vakfi-KÖKSAV, հիմն. 1991թ.), *Ազգային անվտանգության և ռազմավարական հետազոտությունների կազմակերպությունը* (Ulusal Güvenlik ve Stratejik Araştırmalar Derneği-UGSAD, հիմն. 1992թ.), *Հասարակական, տնտեսական, քաղաքական հետազոտությունների հիմնադրամը* (Toplumsal Ekonomik Siyasal Araştırmalar Vakfi-TESAV, հիմն. 1993թ.) և *Տնտեսական զարգացման և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամը* (Yükseliş İktisadi ve Stratejik Araştırmalar Vakfi-YİSAV, հիմն. 1995թ.):

Մի քանի կենտրոններ ստեղծվեցին տարածաշրջանային կամ աշխարհագրական բաժանումների հիման վրա: Դրանք են՝ պանթուրանական գաղափարախոսությամբ առաջնորդվող *Թուրքիայի և թյուրքական աշխարհի*

տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամը (Türkiye ve Türk Dünyası İktisadi ve Sosyal Araştırmalar Vakfı -TİSAV, հիմն. 1994թ.) և *Կովկասի հիմնադրամը* (Kafkas Vakfı, հիմն. 1995թ.): Ռազմական վերնախավին խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով 1993թ. հիմնադրված Եվրասիական հիմնադրամի բազայի վրա ստեղծվեցին *Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնը* (Avrasya Stratejik Araştırmalar Merkezi-ASAM, հիմն. 1999թ.) և իրաքյան թուրքմենների սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային ու քաղաքական հիմնահարցերով զբաղվող *Քիրքուկի հիմնադրամը* (Kerkük Vakfı, հիմն. 1997թ.):

Ստեղծվում են նաև այլ հետաքրքրություններ ունեցող վերլուծական կենտրոններ: 1990-ական թթ. տարբեր երկրներում ստեղծվում են լիբերալ հոսանքների պատկանող վերլուծական հաստատություններ: Թուրքիայի մտավորական շրջանակները լիբերալ արժեքների պահպանման և ամրապնդման նպատակով 1992թ. հիմնադրեցին *Լիբերալ մտածողության ասոցիացիան* (Liberal Düşünce Topluluğu-LDT):

Այս փուլում ստեղծվեցին նաև գիտության, գիտակրթական և գիտատեխնիկական հիմնահարցերի լուծմանն ուղղված հաստատություններ՝ *Գիտական հետազոտությունների հիմնադրամը* (Bilim Araştırma Vakfı-BAV, հիմն.1990թ.), *Միջազգային տեխնոլոգիական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների կենտրոնը* (Uluslararası Teknolojik, Ekonomik ve Sosyal Araştırmalar Vakfı-UTESAV, հիմն.1995թ.) և *Թուրքիայի գիտության հետազոտությունների հիմնադրամը* (Türk Bilim Araştırma Vakfı, հիմն. 1995թ.):

Զնայած անկախ, ոչ պետական հետազոտական կենտրոնների քանակն ավելանում էր, այդուհանդերձ, պետություն-ՌՀԿ հարաբերությունները բավական լարված էին, ինչը նկատելի էր մինչև 2000-ական թթ. վերջերը: Արևմուտքում, հատկապես ԱՄՆ-ում, վերլուծական կենտրոններն ու փորձագիտական հանրույթը մեծ հաշվով պետական համակարգի մաս են կազմում, և նրանց պատվիրատուները որոշում կայացնող կառույցներն են: Իսկ Թուրքիայում այս ժամանակահատվածում ՌՀԿ-ները թեև որոշում կայացնողներին մասամբ մոտ էին գտնվում, բայցնայնպես, համակարգի մաս չէին կազմում, առաջին հերթին՝ որոշակի անվստահության և մրցակցության պատճառով:

Թուրքական քաղաքական ընտրանին պետական վերլուծական կենտրոն հիմնադրելու մտադրություններ ուներ դեռ 1980-ական թթ., սակայն

մինչև ԽՍՀՄ փլուզումն այդ ուղղությամբ գործնական քայլեր չեն կատարվել: 1990-ական թթ. սկզբին թուրքական քաղաքական ընտրանին հետաքրքրություն ցուցաբերեց Արևմուտքում իրենց գոյությունն արդարացրած վերլուծական կենտրոնների նկատմամբ, ինչպիսիք էին RAND Corporation-ն ու The Brooking Institution-ը: Ամերիկյան փորձի ներբերման նպատակով թուրքական մի քանի պատվիրակություններ համատեղ քննարկումներ անցկացրին վերը հիշատակված հաստատությունների ղեկավարների հետ, ծանոթացան նրանց աշխատանքային գործունեությանը: Օգալը, որն արդեն Թուրքիայի նախագահն էր և մեծ լիազորություններ ուներ և լիբերալացումն ու քաղաքացիական հասարակության ձևավորումը համարում էր անհրաժեշտություն, աջակցություն ցուցաբերեց պետական ՌՀԿ ստեղծման գործում:

Այնուհետև վարչապետ Մուլեյման Դեմիրելի հավանությամբ և առաջարկությամբ 1992թ. պետնախարար և կառավարության խոսնակ Յիդրըմ Աքթունան, ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությանը մոտ կանգնած ամերիկյան հայտնի մասնագետների, հոգեվերլուծաբանների աջակցությամբ, ստեղծեց վարչապետին առընթեր *Քաղաքական հոգեբանական կենտրոնը* (Politik Psikolojik Merkezi-PPM)¹, որը պետք է իրականացներ հետազոտություններ հետխորհրդային երկրներում տեղի ունեցող քաղաքական փոխակերպումների և ազգամիջյան հակամարտությունների, էթնիկական ահաբեկչության հոգեբանության և այլ հիմնախնդիրների վերաբերյալ: Այս կենտրոնն իր գործունեության ակտիվ ժամանակաշրջանում (1992-1997թթ.) սպասարկել է Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդին և Ազգային անվտանգության կազմակերպությանը:

Պետական ուղեղային կենտրոններ ստեղծվեցին նաև այլ պետական գերատեսչական հաստատություններում. Թուրքիայի ԱԳՆ-ին կից ստեղծվեց *Ռազմավարական հետազոտությունների կենտրոնը* (Stratejik Araştırmalar Merkezi-SAM, հիմն. 1995): Բարձրագույն կրթական խորհրդի շրջանակներում ստեղծվեց *Ռազմավարական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային կոմիտեն* (Stratejik Araştırma ve Etüdler Milli Komitesi-SAEMK, հիմն. 1997թ.), Թուրքիայի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը կից՝ իրավաքաղաքական, հանրային անվտանգության ոլորտներում

¹ Musa Çakmak, Mehmet Sakin, Türkiye'de Think-Tank ve Demokrasi, Zaman, 1998/02/02.

հետազոտական աշխատանքներ իրականացնող *Հետազոտությունների և ուսումնասիրությունների կենտրոնը* (Araştırma ve Etütler Merkezi-AREM, հիմն. 2000թ.):

Նախարարություններին և պետական խորհուրդներին կից գործող հետազոտական կենտրոնները, ԱԳՆ Ռազմավարական հետազոտությունների կենտրոնից բացի, չունեն այն մոբիլությունը, ինչ ոչ պետական վերլուծական կառույցները: Պետական վերլուծական կենտրոնների աշխատանքները շրջանառվում էին համակարգի ներսում՝ հանրային շահերը պաշտպանող այլ դերակատարների գրկելով մասնակցությունից, փակելով մասնավոր ՈւԿ-ների և նրանց փորձագետների մուտքը քաղաքական «դոյակներ»: Այլ կերպ ասած՝ վերջիններս չէին դիտարկվում որպես քաղաքական քննարկումները հարստացնող ռեսուրս:

Փակ կամ ինքնամեկուսացված աշխատանքով գործող պետական կենտրոններից մի քանիսը հետագայում կանգնեցին լուրջ խնդիրների առջև և չկարողանալով մրցակցել անկախ փորձագիտական-վերլուծական հաստատությունների հետ՝ փակվեցին: Օրինակ, *Քաղաքական հոգեբանական կենտրոնն* սկսեց վարել պասիվ գործունեություն և գրկվեց պետական որոշումների վրա ազդեցություն ունենալու իրավունքից:

1991-2002թթ. ստեղծվեցին նաև գյուղատնտեսության, սոցիալ-տնտեսական, մարդու իրավունքների և այլ հիմնախնդիրներով զբաղվող հետազոտական կենտրոններ, հիմնադրամներ:

Երրորդ փուլ՝ 2002-2014թթ.

«2014 Global Go To Think Tank Index Report»-ի ուսումնասիրությունների համաձայն, այսօր Թուրքիայում ռազմավարական հետազոտություններ է իրականացնում 34 կենտրոն¹: Մեր ուսումնասիրության շրջանակներում հաշվառել ենք 150 հետազոտական կենտրոն: Գուցե սեփական մեթոդաբանական չափանիշներից ելնելով ամերիկյան հետազոտողները վերոնշյալ ցանկում չեն ընդգրկել դրանց մեծ մասը՝ իրենց անկայուն և անարդյունավետ գործունեության պատճառով:


2000 թվականից համաշխարհային մակարդակով ՌՀԿ-ների տարեկան աճը կտրուկ դադարում է, և 2004թ. այն հավասարվում է անցյալ դարի կեսերին

¹ 2014 Global Go To Think Tank Index Report, Philadelphia, PA USA, February 4th, 2015, p. 56.

բնորոշ մեծություններին: Դա, ըստ փորձագետների, կապված է ՌՀԿ շուկայի բնական «գերհագեցման» հետ¹: Մինչդեռ 2002 թվականից, երբ իշխանության եկավ Էրդողանի Արդարություն և զարգացում կուսակցությունը, Թուրքիայում հետազոտական կառույցների քանակը կտրուկ ավելացավ: Մեր հաշվարկներով՝ միայն 2002-2014թթ. ժամանակահատվածում մեկ տարվա կտրվածքով հիմնադրվել է 2-18 կենտրոն (Գրաֆիկ 1).

Գրաֆիկ 1

Հիմնադրված ՌԿ-ների քանակն ըստ տարիների



Նոր վերլուծական կենտրոնների առաջացումը պայմանավորված էր մի շարք գործոններով.

- Արտաքին քաղաքականության ոլորտում չլուծված մի շարք խնդիրներ՝ կիպրական և Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հարցեր:
- Նոր հակամարտություններ և ճգնաժամեր (աֆղանական խնդիր, իրանական միջուկային ծրագիր, վրաց-օսական և արաբա-իսրայելական հակամարտություններ, իրաքյան երկրորդ պատերազմ, քրդական հարց և այլն):

¹ Հարությունյան Գ., «Ուղեղային կենտրոնները» և ազգային անվտանգությունը, «21-րդ ԴԱԸ», թիվ 1 (35), 2011, էջ 10:

2002-2014թթ. հիմնադրված վերլուծական հաստատությունների մեծ մասն իրականացնում է հետազոտություններ Թուրքիայի արտաքին քաղաքականության ուղղությամբ: Նրանց հաջորդում են տնտեսական քաղաքականության աջակցմանն ուղղված կենտրոնները: Փորձագիտական գնահատականներ և վերլուծություններ են իրականացվում նաև այնպիսի ոլորտներում, որոնք մինչ այդ չէին կարևորվում, կամ՝ այդ ուղղություններով նախկինում կատարված աշխատանքները համարվում էին անբավարար, ոչ համահունչ արդի մարտահրավերներին դիմագրավելու տեսանկյունից (մասնավորապես, կրթական, բնապահպանական, տեղեկատվական, ազգային անվտանգության ու հանրային ոլորտներին առնչվող խնդիրներ):

2000-ական թվականները կարելի է համարել *SAM*-երի ժամանակաշրջան (*SAM*-ը Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի թուրքական հասպավումն է): Նորաստեղծ ՌՀԿ-ները ձգտում էին հանդես գալ այս անվան տակ. դա գրավիչ էր և նպատակ ուներ ազդել պետության «նյարդերի» վրա: Դա փորձ էր հասկացնելու, որ Թուրքիայի ԱԳՆ *SAM*-ը (հիմն. 1995թ.) միակը չէ, որ կարող է լուծել պետության առջև ծառայած արտաքին և ներքին քաղաքականության հրատապ հարցերը: Նախկին պաշտոնաթող դիվանագետները և գիտական ոլորտի ներկայացուցիչները, օգտվելով երկրում *SAM*-երի ստեղծման «համաճարակից», ձեռնամուխ եղան սեփական թինկ-թանկեր հիմնելուն: Եվ մեկը մյուսին կրկնօրինակելով ստեղծվեցին տասնյակ *SAM*-եր: Մնացած կենտրոնները փորձեցին օգտվել այս բումից՝ պետության բարեհաճությանն արժանանալու համար, մինչդեռ, անձանթ լինելով ոլորտում տիրող խնդիրներին (հատկապես ֆինանսական) և տեսնելով ԱԳՆ փակ դռներն իրենց առջև, աստիճանաբար զիջեցին դիրքերը, դադարեցին գործել կամ մնացին որպես «դեղին թինկ-թանկ»-եր, ինչպես հաճախ ասվում է մամուլի պարագայում: Դրանք ստեղծվում էին «դիլետանտների» կողմից՝ մարդիկ, որոնք չունեին համապատասխան փորձառություն և գիտելիքներ: Ավելի հաջողակները շոշափելի առավելություններ ունեցան՝ կարողանալով փոխհամաձայնության գալ պետական տարբեր օղակների հետ:

Այս փուլում, ըստ մեզ, հետազոտական կենտրոնների զարգացման համար կարևոր էր նաև *ՈւԿ-պետություն հարաբերություններում երկարատև «հակամարտության»* և *«անհանդուրժողականության» մթնոլորտի հաղթահարումը:*

2003 թվականից սկսած՝ պետություն-ՈւԿ հարաբերություններում սառույցը մասամբ հալվեց, փոխհամագործակցության հնարավորությունները դարձան ավելի շոշափելի՝ ձեռք բերելով կիրառական նշանակություն: Այդ հաղթահարման կարևոր դրվագը, համաձայն թուրք վերլուծաբանների, 2003թ. ԱՄՆ զինված ուժերի ներխուժումն էր Իրաք, որն էլ զանգվածային քննարկման նյութ դարձավ թուրքական հասարակությունում: Այս ֆոնին առաջին անգամ լսելի դարձավ փորձագետների ձայնը լրատվամիջոցներով, ինչն ակնհայտորեն առաջ բերեց հասարակության լայն շերտերի հետաքրքրությունն այդ ոլորտի նկատմամբ և նոր հարաբերություններ իշխանությունների հետ: Այդ հարաբերությունները հետաքրքիր են նրանով, որ, թե՛, ի վերջո, կենտրոններն են դիմում այս քայլին՝ հետապնդելով որոշակի շահեր, թե՛ պետական համակարգն է փորձում օգտագործել այդ ներուժը: Առկա են երկու հանգամանքն էլ, բայց մեծ մասամբ կենտրոնի ղեկավարներն իրենք են գնում այդ համագործակցությանը, քանի որ դա երբեմն դեպի քաղաքական իշխանություն տանող միակ դյուրին ճանապարհն է¹:

Արտաքին քաղաքականությամբ զբաղվող կենտրոնները, անկախ նրանից, թե ովքեր են իշխանությունում, սկսել են գործել տարբեր գաղափարախոսությունների ազդեցության տակ, աշխատում են նաև գործնական հարաբերություններ հաստատել տարբեր պետական, այդ թվում՝ ուժային կառույցների հետ:

Պահպանողական գաղափարախոսության շրջանակներում գործող կենտրոններից, որոնք սերտ հարաբերություններ ունեն իշխող կուսակցության հետ, կարելի է հիշատակել *Քաղաքական, տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամը* (Siyaset, Ekonomi ve Toplum Araştırmalar Vakfı-SETA, հիմն. 2006թ.)² և *Ռազմավարական մտածողության ինստիտուտը* (Stratejik Düşünce Enstitüsü-SDE, հիմն. 2009թ.):

Միևնույն ժամանակ, կան այլ հոսանքներին պատկանող կենտրոններ, որոնք աջակցում են պետական իշխանություններին, ինչպես պահպանողա-

¹ 2011թ. Թուրքիայում տեղի ունեցած ընտրություններում Ազգային մեծ ժողովի պատգամավոր ընտրվեց Միջազգային հարաբերությունների և ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (*TURKSAM*) ղեկավար Սինան Օղանը: 2012թ. Միջին Արևելքի և Աֆրիկայի հետազոտողների կազմակերպության տնօրեն Ահմեդ Քավասը նշանակվել է Չադի դեսպան:

² Ստեղծվել է Թուրքիայի քաղաքական հետազոտությունների Անկարայի կենտրոնի (Türkiye Politik Araştırmaları Ankara Merkezi-ANKAM, հիմն. 2003թ.) հիման վրա:

կան ազգայնական կողմնորոշում ունեցող *Թուրք-ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնը* (Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi -TASAM, հիմն. 2004թ.), այնպես էլ լիբերալ ուղղվածության, դիպկորպուսին, զինվորական և քաղաքական շրջանակներին մոտ կանգնած *Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպությունը* (Uluslararası Stratejik Araştırmalar Kurumu-USAK, հիմն. 2004թ.):

Արդարություն և զարգացում կուսակցության պատգամավորների, միջազգային կառույցներին անդամակցող պետական գործիչների և հատկապես նախագահ Էրդողանի ելույթները հիմնված են այս կենտրոնների իրականացրած հետազոտությունների վրա: Նախկին արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն, որը թուրքական վերլուծական շրջանակներից է սերել, բարձր է գնահատում այս կառույցների դերը երկրի ներքին և արտաքին քաղաքականության զարգացումներում: Նա դրանց միջոցով, որպես այլընտրանքային «դիպկորպուս», վարում է արտաքին քաղաքականության վերաբերյալ սեփական տեսակետներն ու դիրքորոշումներն առաջ մղելու քաղաքականություն:

Կան նաև ազգայնամոլական (պանթյուրքիստական) ուղղվածության կենտրոններ, ինչպիսիք են՝ *Թուրանական ռազմավարական հետազոտությունների կենտրոնը* (Turan Stratejik Araştırmalar Merkezi (TURAN-SAM, հիմն. 2007թ.¹) և տարածաշրջանային ու թեմատիկ ուսումնասիրությունների բազմազանությամբ մյուսներից առանձնացող², քաղաքական և ծայրահեղ աջակողմյան կուսակցությունների որոշակի շրջանակների համար համապատասխան պատվերներ կատարող *21-րդ դար թուրքական ինստիտուտը* (21 Yüzyıl Türkiye Enstitüsü, հիմն. 2005թ.): Ինստիտուտում ազգայնամոլական ուղղվածության գերակշռության մասին են վկայում նաև «21-րդ դար» տեղեկատվական վերլուծությունների եռամսյա հանդեսում հրատարակվող հոդվածները, որոնցում վեր են հանվում թյուրքականությանը (պանթյուրքիզմ) հատուկ նոր բառերեր, օրինակ՝ «թյուրքական սուպերէթնոս»: Շրջանառվում է «արաբական նավթ» արտահայտությանը համարժեք «թուրանական նավթի» գաղափարը, որը գալիք համաշխարհային էներգետիկ ճգնաժամերի դեպքում

¹ Հիմնադրվել է Ադրբեջանից Թուրքիա արտագաղթած միջազգային հարաբերությունների մասնագետ Էլնուր Հասան Միքայիլի կողմից (<http://www.turansam.org/yonetim.php>):

² Հատկապես հրատապ են համարվում Թուրքիայի տեղեկատվական անվտանգության, համացանցային և բարձր/կենսատեխնոլոգիաների զարգացման, դրանց արդիականացման հետ կապված խնդիրները:

իբր թե պետք է հանդես գա որպես թյուրքական աշխարհի ռազմավարական նշանակություն ունեցող գործոններից մեկը:

Նշենք, որ կան լիբերալ, նեոլիբերալ և ծայրահեղ լիբերալ, իսլամական, գյուլենական ուղղվածության, քեմալականության և թյուրքական եվրասիականության գաղափարախոսությունները պաշտպանող ու այդ շրջանակներում «ինտելեկտուալ արտադրանք» թողարկող ՌՀԿ-ներ:

Զգադափարականացված ՌՀԿ-ները քաղաքական ակտորների հետ հարաբերություններում աշխատում են չեզոքություն պահպանել՝ իրենց ձայնն իշխանություններին հասանելի դարձնելու համար օգտագործելով ԶԼՄ-ն, հեռուստաընկերությունները, անձնական կապերը և այլն:

2006թ. թյուրքական արտաքին քաղաքականության մերձավորարևելյան վեկտորի ակտիվացմանը համընթաց՝ բազմաթիվ փորձագիտական-վերլուծական կառույցներ սկսում են զբաղվել այդ տարածաշրջանի և Թուրքիայի միջև հարաբերությունների պրոբլեմատիկայով: Մինչդեռ, այս տարածաշրջանի վերաբերյալ կենտրոնների կատարած աշխատանքները ցածրորակ էին և մակերեսային: Այս ուղղությամբ աշխատանքները կենտրոնացնելու նպատակով 2009թ. Թուրքմենական համագործակցության հիմնադրամի աջակցությամբ ստեղծվում է *Միջին Արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոնը* (Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi-ORSAM)¹, որը ռազմական և քաղաքական ընտրանուն մոտ կանգնած հաստատություն է:

Հասարակական և քաղաքական շրջանակներում քրդական հարցի քննարկումների ֆոնին, մի խումբ քուրդ ինտելեկտուալներ, դրանց գիտական մակարդակով մասնակից լինելու համար, հիմնեցին սոցիալ-մշակութային, տնտեսական, կրթական, քաղաքական խորքային ռազմավարական հետազոտություններ իրականացնող կառույցներ՝ *Դիարբեքիրի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտը* (Diyarbakir Siyasal ve Sosyal Araştırmalar Enstitüsü-DISA, հիմն. 2010թ.), *Սոցիալական, քաղաքական և տնտեսական հետազոտությունների ինստիտուտը* (Sosyal Siyasal ve İktisadi Araştırmalar Enstitüsü-ZAN, 2014թ.):

Զինվորական շրջանակները ևս մասնակցեցին այս գործընթացներին՝ հայտարարելով, որ տեղեկատվական պատերազմների դարաշրջանում

¹ Ստեղծվել է 2005թ. հիմնադրված Գլոբալ ռազմավարության ինստիտուտի հիման վրա:

Թուրքիան չի կարող բավարարվել հնացած հայեցակարգերով և մոտեցումներով: Երկրի ռազմավարական պլանավորման հարցերում որոշում կայացնողների վրա ազդեցություն ունենալու նպատակով Թուրքիայի գլխավոր շտաբին կից հիմնվեց նոր «գաղափարաստեղծ շտաբ»՝ *Ռազմավարական հետազոտության և ուսումնասիրության կենտրոնը* (Stratejik Araştırma ve Etüt Merkezi-SAREM, հիմն. 2002թ.), որի հետազոտությունների առանցքում էին գտնվում երեք հիմնական թեմաներ՝ թուրք-հունական հարաբերությունները, Հյուսիսային Իրաքն ու քրդական հիմնախնդիրը:

Չնայած ՌՀԿ-պետություն հարաբերություններում մասամբ հաղթահարվեց երկարատև «հակամարտության» և «անհանդուրժողականության» մթնոլորտը¹, սակայն խիստ գաղափարականացված, հատկապես պետական արտաքին քաղաքականության վերաբերյալ քննադատական դիրքորոշում որդեգրած որոշ կենտրոնների նկատմամբ պետության վերաբերմունքը փոխվեց: Գաղափարականացված ՌՀԿ-ները, որոնք սերտ հարաբերություններ ունեին հատկապես զինվորականության հետ, «Էրզենեքոնի» գործի շրջանակներում հայտնվեցին ուժային կառույցների ուշադրության կենտրոնում, ընդ որում՝ եղան նաև կենտրոնների ղեկավարների ձեռքակալություններ, խուզարկություններ հաստատություններում: Այն բանից հետո, երբ ձեռքակալվեցին «Թուրք Մետալ»-ի արհմիության մի քանի ղեկավարներ, գործունեությունը դադարեցրեց վերջինիս հիմնադրած ձախ ազգայնական կողմնորոշման, ուլտրաազգայնական ռազմական շրջանակների հետ սերտ հարաբերություններ պահպանող *Թուրքիայի ազգային անվտանգության ռազմավարական հետազոտությունների կենտրոնը* (Türkiye Ulusal Güvenlik Stratejileri Merkezi Tusam, հիմն. 2004թ.):

Ավելի մեծ հարված ստացավ Թուրքիայի ռազմական ուժերի և Ազգայնական շարժում կուսակցության ակտիվիստների համար նախատեսված, քարոզչական մեծ ապարատի վերածված, «Յուլքեր գրուբի» կողմից ֆինանսավորվող ASAM-ը (*Եվրասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոն*), որի գլխավոր ղեկավարը Հայկական հետազոտությունների ինստիտուտն (Ermeni Araştırmaları Enstitüsü) էր և ներկայանում էր որպես զինվորա-

¹ Երկար տարիներ թուրքական իշխանություններն անբարեհաճ վերաբերմունք են ունեցել ներքին և արտաքին քաղաքականության խնդիրներով զբաղվող կառույցների հանդեպ՝ հայտարարելով, որ արտաքին քաղաքականության առնչվող ցանկացած խնդիր վերաբերում է միայն իրենց:

կանների «soft power»: Որոշ թուրք հետազոտողներ գտնում էին, որ ASAM-ի փակումը կարող էր կապված լինել տնտեսական ճգնաժամի հետ¹, ոմանք դա բացատրում էին քաղաքական նկատառումներով²: Քաղաքական հաշվարկների մասին են վկայում ASAM-ի փակման պատճառների վերաբերյալ «WikiLeaks»-ում տեղ գտած գրառումները, ուր նշվում է, որ սա «հարված էր Թուրքիայի ինտելեկտուալ ազատությանը»³: Կարելի է ասել, որ կենտրոնի փակումը, ի տարբերություն մյուսների, ավելի փափուկ ձևով իրականացվեց և նրա քաղաքական կողմը հրապարակային չդարձվեց:

Նույն ժամանակահատվածում (2009թ.), «Էրզենեքոնի» գործի հետ կապված, գործունեությունը դադարեցրին նաև *Քաղաքական, տնտեսական, սոցիալական հետազոտությունների և ռազմավարական զարգացման կենտրոնը* (SESAR) և «ՎԵՐՍՈ» *քաղաքական հետազոտությունների կենտրոնը*⁴:

Համապետական ընտրություններից հետո, 2011թ. հոկտեմբերին, փակվեց նաև Թուրքիայի գլխավոր շտաբի *Ռազմավարական հետազոտության և ուսումնասիրության կենտրոնը*: Հավանաբար այն պատճառով, որ թեև ի սկզբանե ռազմական շտաբի ղեկավարները հայտարարել էին, որ Թուրքիայի ներքաղաքական խնդիրները դուրս են կենտրոնի հետաքրքրությունների շրջանակից, այդուհանդերձ, կենտրոնն իր վերլուծական հոդվածներում խիստ քննադատության էր ենթարկում ԱԶԿ-ին՝ քրդական հարցում ունեցած դիրքորոշման համար: Այն ամենից հետո, երբ Թուրքիայում աղմկահարույց «Մեծ մուրճ» հեղաշրջման գործի շրջանակներում ձերբակալվեց կենտրոնի նախկին ղեկավար, դերձովակալ Սյուհա Թանյերին, համապետական ընտրություններից մի քանի ամիս անց՝ 2011թ. հոկտեմբերին, առանց որևէ պատճառաբանության կենտրոնը փակվեց⁵:

Այնպես որ, կարելի է ասել, որ զինվորական վերնախավին ինտելեկտուալ աջակցությամբ սատարող ՌՀԿ-ները իշխանությունները դիտեցին որպես «հեղափոխականների որջեր»:

¹ *Muharrem Sarıkaya*, Davutoğlu ASAM'da hesapları bozdu, <http://www.haber7.com/siyaset/haber/359083-davutoglu-asamda-hesapları-bozdu> (18 Kasım 2008).

² ASAM'dan nankörlük, <https://vakityazilari.wordpress.com/2008/11/18/asam%E2%80%99dan-nankorluk/>.

³ Turkey: Premier Think Tank Asam Closes Its Doors, https://wikileaks.org/plusd/cables/08ANKARA2070_a.html.

⁴ Կենտրոնը հիմնադրվել էր 1989թ. Օզալի խորհրդական Էրհան Գյոքսելի կողմից:

⁵ Askerin 'beyni' durdu!, http://www.radikal.com.tr/turkiye/askerin_beyni_durdu-1076174.

Խոստումնալից սկիզբ ունեցող մի քանի կենտրոններ անկայուն ֆինանսական բազայի բացակայության և մրցակցությանը չդիմանալու պատճառներով փակվեցին: Օրինակ, 1984թ. հիմնադրված և Թուրքիայի ԱԳՆ հարկի տակ գործող *Միջին Արևելքի և բալկանյան հետազոտությունների հիմնադրամը* (Ortadoğu ve Balkan İncelemeleri Vakfi-OBIV) հետագայում ունեցավ նոր մրցակից՝ հանձին 1995թ. հիմնադրված SAM-ի, որը ԱԳՆ-ին ենթակա կառույց է: Այն իր արագ և որակյալ աշխատանքով ստվերում թողեց OBIV-ին՝ իր հնացած աշխատանքի պատճառով: Այս ամենը հանգեցրեց նրան, որ OBIV-ը անջատվեց ԱԳՆ-ից և սկսեց գործել անհամեմատ ավելի բաց՝ վերջինիս հետ պահպանելով նախկին հարաբերությունները, սակայն 2009թ., երբ ստեղծվեց *Միջին Արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոնը*, այն վերջնականապես դադարեցրեց աշխատանքները: Սա դասական օրինակ է, որը ցույց է տալիս, որ նույն ոլորտներն ուսումնասիրող և միևնույն համակարգից «սնվող» կենտրոնները, անկախ իրենց կամքից, դառնում են մրցակիցներ, ինչի արդյունքում մեկի «ճակատագիրը» կանխորոշված է լինում՝ կամ կազմալուծվում է, կամ մյուսի հետ միանալով՝ շարունակում է աշխատանքը:

Որոշ ՌՀԿ-ներ վերածվում են այլ համալսարանների ենթակայության տակ գործող կենտրոնների: Սովորաբար, սեփական նախաձեռնությամբ համալսարանների ենթակայության տակ անցնում են այն կենտրոնները (օր.՝ 1974թ. հիմնադրված *Արտաքին քաղաքականության ինստիտուտը*), որոնք մի քանի տարի գործելուց հետո կորցնում են իրենց հաստատուն դիրքերը նմանատիպ կառույցների կողքին (ոչ ճիշտ աշխատանքային կազմակերպման, ոչ ակտուալ թեմաների ուսումնասիրության և սուղ ֆինանսական միջոցների պատճառով) և նախընտրում են իրենց «ինտելեկտուալ ռեսուրսների» վերարտադրման գործում ապավինել համալսարաններին: Հատկապես ֆոնդային բուհերի համար սա ընդունված կարգ է: Դա շահավետ «գործարք» է դառնում՝ բարձրացնելով համալսարանների վարկանիշը. պատրաստի գիտական կադրերը ներգրավվում են կենտրոնների աշխատանքներում կամ հակառակը՝ ոչ հայտնի կենտրոնները ճանաչում ունեցող համալսարանների միջոցով փորձում են ամրապնդել իրենց հեղինակությունը: Բայց նույնիսկ այս պարագայում ոչ այնքան ուսումնասիրվում են պետական առաջնահերթ խնդիրները. ուսումնասիրություններն ավելի շատ հիշեցնում են ռեֆերատներ կամ

դիպլոմային աշխատանքներ: Նման մեթոդիկան աստիճանաբար ՌՀԿ-ին հեռացնում է իր առանցքային խնդիրներից: Այն դառնում է «հարմարվող», փոխակերպվում է «ամբիոնի» կամ որևէ «ուսումնասիրող բաժնի»՝ իր գործունեությամբ դառնալով սակավարդյունավետ:

Շատ երկրներ իրենց «սփյուռքի» մաս կազմող գիտավերլուծական հանրույթների և պետական կառույցներում հեղինակավոր անհատների գործունեությունից օգտվելու հսկայական փորձ ունենալով՝ կարողացել են արտերկրում ստեղծել նպատակային վերլուծական կառույցներ: Թուրքիան, ընդօրինակելով այլ երկրների փորձը, որոշակի քայլեր է ձեռնարկել՝ արտերկրում հիմնելով թուրքական ֆինանսավորմամբ գործող նոր ՌՀԿ-ներ կամ գործող կենտրոնների մասնաճյուղեր՝ վերջիններս դիտելով որպես այլընտրանքային «դիպլոմատ» կամ լոբբիստական խմբեր, որոնցում ընդգրկվում են առաջին հերթին այդ երկրների առաջատար բուհերի և «ուղեղային կենտրոնների» աշխատակիցները:

Այդօրինակ գործունեություն ծավալող կենտրոններից են՝

- *Ռազմավարական հետազոտությունների և վերլուծությունների կենտրոն* (Centre for Strategic Research & Analysis-CESRAN, հիմն. 2008թ.), Մեծ Բրիտանիա
- *Լոնդոնի ռազմավարական կենտրոն* (London Strategic House, հիմն. 2011թ.)¹, Մեծ Բրիտանիա
- *Թուրքիայի քաղաքական հետազոտությունների կենտրոն* (Centre For Policy and Research On Turkey, հիմն. 2012թ.)², Մեծ Բրիտանիա
- *The Rethink Institute*, ԱՄՆ³
- *Քաղաքական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի* վաշինգտոնյան մասնաճյուղ (SETA), ԱՄՆ
- *Լոբբիստական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի* վաշինգտոնյան մասնաճյուղ, ԱՄՆ

¹ Հիմնադրվել է Մեծ Բրիտանիայում բնակվող թուրք գործարար Հաքքի Թաթարի կողմից: Աշխատակազմում կան անգլիացի, թուրք և ադրբեջանցի մասնագետներ (www.londonstrategichouse.com):

² www.researchturkey.org

³ Հետազոտությունները վերաբերում են թյուրքական թեմաներին, զբաղվում են նաև Թուրքիա-Հայաստան հարաբերությունների ուսումնասիրությամբ: Սերտ համագործակցում է *Ամերիկայի թուրքական դաշինք* (*Turkic American Alliance, TAA*) լոբբիստական կառույցի հետ: Որոշ տվյալների համաձայն, ստեղծվել է «Գյուլենի շարժման» ջանքերով:

- *Բոսֆորի ինստիտուտ* (Institut du Bosphore, հիմն. 2009թ.), Ֆրանսիա¹:

Թուրքական այլ ՌՀԿ-ներ ևս գրասենյակներ են բացել աշխարհի տարբեր երկրներում, սակայն վերը նշված հաստատությունների համեմատ այնքան էլ արդյունավետ չեն գործում:

Այսպիսով, կարելի է ասել, որ 2002-2014թթ. հիմնադրվեցին պետական և սկադեմիական հաստատություններին կից, մասնավոր սեկտորին պատկանող տասնյակ գիտավերուծական կենտրոններ, ինչպես նաև արտասահմանյան ՈւԿ-ների մասնաճյուղեր: Չնայած տեղի ունեցող զարգացումներին, կենտրոններն ինտելեկտուալ ռեսուրսներով ապահովելը, դրանք «աճեցնելը» և ֆինանսական հնարավորությունների սղությունը դեռևս խնդիր են հանդիսանում ոլորտի համար:

Հետազոտական կենտրոնների տեսակները և թեմատիկ ուղղությունները

Ինչպես նշել էինք, ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի՝ աշխարհի «ուղեղային կենտրոնների» վերաբերյալ ուսումնասիրությունների համաձայն՝ այսօր Թուրքիայում ռազմավարական հետազոտություններ է իրականացնում ավելի քան 34 կենտրոն: Ոչ բոլոր կենտրոններն են, սակայն, կարողանում իրենց անվանը համարժեք գործունեություն ծավալել: Մասնավորապես, այն կենտրոնները, որոնք զբաղվում են քաղաքական, սոցիալական, տնտեսական, ռազմական և այլ խնդիրներով, աշխատում են հետազոտական կենտրոնի համբավ ձեռք բերել երկրի ներսում, այլապես բավական արագ հեղինակազրկվում են և «դադարում» գործել: Ըստ պատկանելության կենտրոնները կարելի է բաժանել մի քանի տեսակների՝

¹ Հիմնադրվել է Փարիզում Թուրք արդյունաբերողների և գործարարների ասոցիացիայի կողմից: Լոբբիստական նպատակներն են. աջակցություն ստանալ Ֆրանսիայից՝ Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հարցում: Ինստիտուտի գիտական խորհուրդը ղեկավարում է ԱՄՆ հայտնի «ուղեղային կենտրոնի» Բրուքլինզգ ինստիտուտի փոխնախագահ Քեմալ Դերվիշը:

- Պետական - 6 կենտրոն (օր.՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հետազոտական կենտրոն)
- Կուսակցապատկան - 4 (օր.՝ Քաղաքական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ)
- Մասնավոր - 130 (օր.՝ Տնտեսական զարգացման և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամ)
- Բուհական-ակադեմիական - 100 (օր.՝ Անկարայի համալսարանի ռազմավարական հետազոտությունների կենտրոն)
- Արտասահմանյան կենտրոնների մասնաճյուղեր - 9 (օր.՝ Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ):

Պետական հետազոտական կենտրոններ

1. Թուրքիայի արտաքին գործերի նախարարության *Ռազմավարական հետազոտությունների կենտրոն* (Stratejik Araştırmalar Merkezi-SAM, հիմն. 1995թ.): Միջազգային հակամարտությունները, տարածաշրջանային հիմնախնդիրներն ու միջազգային հարաբերությունները գիտականորեն գնահատող, խորհրդատվական, ապագային միտված կանխատեսումներ, հայեցակարգային մշակումներ, հետազոտություններ, նաև կրթական գործունեություն իրականացնող ռազմավարական պլանավորման կենտրոն է:
2. Թուրքիայի Ազգային մեծ ժողովի *Հետազոտական կենտրոն* (Türkiye Büyük Millet Meclisi Araştırma Merkezi, հիմն. 2006թ.): Պետական օրակարգային հարցերի վերաբերյալ պատգամավորներին տեղեկատվությամբ և հետազոտություններով սպասարկող կենտրոն: Հետազոտությունների մեծ մասը գաղտնի բնույթ ունի:
3. Բարձրագույն կրթական խորհրդի *Ռազմավարական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային կոմիտե* (Stratejik Araştırma ve Etüdler Milli Komitesi-SAEMK, հիմն. 1997թ.): Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության, մշակույթի, տնտեսության, գիտակրթական, իրավական և այլ ռազմավարական նշանակության ոլորտներն ուսումնասիրող կառույց է, որի «մտավոր արտադրանքն» ունի սպառողների լայն շրջանակ:
4. Թուրքիայի ներքին գործերի նախարարության *Հետազոտությունների և ուսումնասիրությունների կենտրոն* (Araştırma ve Etütler Merkezi (AREM), հիմն. 2000թ.): Իրավաքաղաքական, ահաբեկչության և հանրային ան-

վտանգության ոլորտներում հետազոտական աշխատանքներ իրականացնող կենտրոն է:

5. Թուրքիայի գյուղատնտեսության, սննդի և անասնաբուծության նախարարության *Գյուղատնտեսության քաղաքականության զարգացման ինստիտուտ* (Tarımsal Ekonomi ve Politika Geliştirme Enstitüsü – TEPGE, հիմն. 1996թ.): Թուրքիայի գյուղատնտեսական ապրանքների արտահանման, պարենային անվտանգության, գյուղատնտեսության զարգացման և այս ոլորտում հակաձգնաժամային տնտեսական ծրագրեր մշակող կառույց է:
6. Թուրքիայի անտառտնտեսության և ջրային գործերի նախարարության *Ջրային հիմնահարցերի ինստիտուտ* (Su Enstitüsü, հիմն. 2011թ.): Թուրքիայի ջրային հիմնահարցերով զբաղվող, պետական աջակցությամբ ստեղծված ռազմավարական հետազոտական կենտրոն է: Համագործակցում է միջազգային հեղինակավոր կառույցների հետ:

Կուսակցապատկան հետազոտական կենտրոններ

1. *Թուրքիայի սոցիալական, տնտեսական, քաղաքական հետազոտությունների հիմնադրամ* (Türkiye Sosyal Ekonomik Siyasal Araştırmalar Vakfi-TUSES, 1989թ.), Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցություն
2. *Մարմարայի խմբի ռազմավարական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ* (Marmara Grubu Stratejik ve Sosyal Araştırmalar Vakfi-MGSSAV, հիմն. 1985թ.), Ազգայնական շարժում կուսակցություն
3. *Քաղաքական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ* (Siyasi ve Sosyal Araştırmalar Vakfi-SİSAV, հիմն. 1980թ.), «Ճշմարիտ ուղի» կուսակցություն
4. *Թուրքիայի դեմոկրատիայի հիմնադրամ* (Türk Demokrasi Vakfi-TDV, հիմն. 1987թ.), «Մայր հայրենիք» կուսակցություն:

Մասնավոր հետազոտական կենտրոններ և թեմատիկ ուղղություններ

130 մասնավոր վերլուծական կենտրոնները պայմանականորեն բաժանել ենք ըստ հետազոտական ուղղությունների.

1. Արտաքին քաղաքականություն (33)
2. Տարածաշրջանային հետազոտություններ (17)

3. Տնտեսական հետազոտություններ (16)
4. Սոցիալական հետազոտություններ (11)
5. Մարդու իրավունքներ (7)
6. Էներգետիկ ոլորտ (4)
7. Անվտանգության ոլորտ (4)
8. Քաղաքակրթական (3)
9. Գիտակրթական (2)
10. Կանխատեսումներ (2)
11. Տեխնոլոգիական (1)
12. Կրոնական (1)
13. Առողջապահական (1)
14. Բնապահպանական (1)
15. Լոբբիստական (1)
16. Իրավական (1)
17. Բազմասպեկտ (24):

Արտաքին քաղաքականություն (33 կենտրոն): Արտաքին քաղաքականության ոլորտում մասնագիտացված մասնավոր վերլուծական կենտրոնները քանակապես գերազանցում են այլ ոլորտներն ուսումնասիրող կենտրոնները: Կան ինչպես իշխանություններին, այնպես էլ ընդդիմադիրներին սպասարկող մասնավոր վերլուծական կենտրոններ:

Այս կառույցները «անկախ» և կիսանկախ ինստիտուտներ են, որոնք իրականացնում են հետազոտություններ, ձեռք բերում գիտելիքներ՝ դրանք կիրառելով գլխավորապես քաղաքական նպատակների իրականացման համար:

- Արտաքին քաղաքականությամբ զբաղվող առաջատար կենտրոններն են՝
1. *Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպություն* (Uluslararası Stratejik Araştırmalar Kurumu-USAK, հիմն. 2004թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ լիբերալ)
 2. *Թուրք-ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոն* (Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi-TASAM, հիմն. 2004թ. գաղափարախոսական կողմնորոշումը՝ ազգայնական)
 3. *Քաղաքական, տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամ* (Siyaset, Ekonomi ve Toplum Araştırmalar Vakfi-SETA, հիմն.

- 2006թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ պահպանողական)
4. *Ռազմավարական մտածողության ինստիտուտ* (Stratejik Düşünce Enstitüsü-SDE, հիմն. 2009թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ պահպանողական)
 5. *Տնտեսական և արտաքին քաղաքականության հետազոտությունների կենտրոն* (Ekonomi Ve Dış Politika Araştırmalar Merkezi EDAM, հիմն. 2004թ.)
 6. *Ռազմավարական հետազոտությունների և վերլուծությունների միջազգային կենտրոն* (Uluslararası Stratejik Araştırmalar ve Analiz Merkezi-CESRAN, հիմն. 2008թ.)
 7. *Ռազմավարական հաղորդակցությունների կենտրոն* (Stratejik İletişim Merkezi-STRATIM, հիմն. 2008թ.)
 8. *Իմաստուն մարդկանց ռազմավարական հետազոտությունների կենտրոն* (Bilgi Adamlar Stratejik Araştırmalar Merkezi-BILGESAM, հիմն. 2008թ.)
 9. *Անկարայի մտածողության և հետազոտության կենտրոն* (Ankara Düşünce Ve Araştırma Merkezi-ADAM, հիմն. 2006թ.)
 10. *Արտաքին քաղաքականության ինստիտուտ* (Dış Politika Enstitüsü-DPE, հիմն. 1974թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ քեմալական)
 11. *Միջազգային հարաբերությունների և ռազմավարական վերլուծությունների թուրքական կենտրոն* (Türkiye Uluslararası İlişkiler Ve Stratejik Analizler Merkezi-TURKSAM, հիմն. 2004թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ ազգայնամոլական)
 12. *21-րդ դար թուրքական ինստիտուտ* (21 Yüzyıl Türkiye Enstitüsü, հիմն. 2005թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ ազգայնամոլական):

Տարածաշրջանային հետազոտություններ (17 կենտրոն): Այս ոլորտն ուսումնասիրող կենտրոնները հիմնականում մասնագիտանում են կոնկրետ տարածաշրջանի երկրների ներքին և արտաքին քաղաքականության, տնտեսության, էթնիկ հակամարտությունների, ահաբեկչության և այլ հարցերում: Հարկ է նկատել, որ տարածաշրջանային հետազոտություններ իրականացնող կենտրոնների մեծ մասը հիմնադրվել է վերջին հինգ տարիներին:

Տարածաշրջանային հետազոտություններ իրականացնող առաջատար կենտրոններն են՝

1. *Միջին Արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոն* (Ortadoğu Stratejik Araştırmalar Merkezi-ORSAM, հիմն. 2009թ.)
2. *Հարավային Ասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոն* (Güney Asya Stratejik Araştırmalar Merkezi –GASAM, հիմն. 2004թ.)
3. *Միջին Արևելքի և Աֆրիկայի հետազոտողների կազմակերպություն* (Orta-Doğu ve Afrika Araştırmacıları Derneği-ORDAF, հիմն. 2008թ.)
4. *Կովկասի ռազմավարական հետազոտությունների կենտրոն* (Kafkas Stratejik Araştırmalar Merkezi-KAFKASSAM, հիմն. 2009թ.)
5. *Միջին Արևելքի խաղաղության միջազգային հետազոտությունների կենտրոն* (Uluslararası Orta Doğu Barış Araştırmaları Merkezi-IMPR, հիմն. 2012թ.)
6. *Աֆրիկայի ռազմավարական հետազոտությունների կենտրոն* (Afrika Stratejik Araştırmalar Merkezi-AFSAM, հիմն. 2012թ.)
7. *Ռումելիի Բալկանյան ռազմավարական հետազոտությունների կենտրոն* (Rumeli Balkan Stratejik Araştırmalar Merkezi-RUBASAM, հիմն. 2012թ.):

Տնտեսական հետազոտություններ (16): Այս ոլորտն ուսումնասիրող կենտրոնները հիմնականում մշակում են հակաճգնաժամային ծրագրեր, պատրաստում են տնտեսական զարգացումը խթանող ռազմավարական տեսլականներ, իրագործում ֆինանսական, էներգետիկ, արդյունաբերական, արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված նախագծեր:

1. *Տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամ* (Türkiye Ekonomi Politikaları Araştırma Vakfı-TEPAV, 2004թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ լիբերալ)
2. *Տնտեսական զարգացման հիմնադրամ* (İktisadi Kalkınma Vakfı-İKV, 1965թ.)
3. *Տնտեսական հետազոտությունների հիմնադրամ* (İktisadi Araştırmalar Vakfı-İAV, 1962թ.)
4. *Արտաքին տնտեսական հարաբերությունների խորհուրդ* (Dış Ekonomik İlişkiler Kurulu-DEİK, 1988թ.)
5. *Տնտեսագետների պլատֆորմ* (Ekonomistler Platformu-2000թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ լիբերալ)

6. *Եվրասիայի տնտեսական հարաբերությունների ասոցիացիա* (Avrasya Ekonomik İlişkiler Derneği, 2006թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ ազգայնական)
7. *Տնտեսական վերելքի և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամ* (Yükseliş İktisadi ve Stratejik Araştırmalar Vakfı-YİSAV, 1995թ.):

Էներգետիկ, անվտանգության, սոցիալական, մարդու իրավունքների, քաղաքակրթական, գիտակրթական, տեխնոլոգիական, կրոնական, առողջապահական, իրավական, բնապահպանական, լոբբիստական և կանխատեսումների ոլորտում հետազոտություններ իրականացնող նեղ մասնագիտացված կենտրոնները թվաքանակով զիջում են մյուսներին, սակայն սրանց շարքում կան մի քանի առաջատար կենտրոններ: Դրանք են՝

1. *Սոցիալական հետազոտությունների կենտրոն* (Sosyal Araştırmalar Merkezi-SAM, հիմն. 1994թ.)
2. *Իսլամական հետազոտությունների կենտրոն* (İslâm Araştırmalar Merkezi (İSAM, հիմն. 1988թ.)
3. *Հասարակական հետազոտությունների հիմնադրամ* (Kamu Araştırmaları Vakfı-KAV, հիմն. 1995թ.)
4. *Թուրքիայի ծովային հետազոտությունների հիմնադրամ* (Türk Deniz Araştırmalar Vakfı- TÜDAV, հիմն. 1996թ.)
5. *Թուրքիայի տեխնոլոգիական զարգացման հիմնադրամ* (Türkiye Teknoloji Geliştirme Vakfı –TTGV, հիմն. 1991թ.)
6. *Թուրքիայի մարդու իրավունքների հիմնադրամ* (Türkiye İnsan Hakları Vakfı-TİHV, հիմն. 1990թ.)
7. *Կասպյան ռազմավարական ինստիտուտ* (Hazar Strateji Enstitüsü, հիմն. 2012թ.)
8. *Լիբերալ մտածողության ասոցիացիա* (Liberal Düşünce Topluluğu-LDT, 1992թ.)
9. *Ֆյուրիստների ասոցիացիա* (Fütüristler Derneği-TFD, հիմն. 2005թ.)
10. *Անվտանգության ռազմավարությունների հետազոտական կենտրոն* (Güvenlik Statejileri Araştırma Merkezi-GÜSAM, հիմն. 2013թ.)
11. *Գիտության ռազմավարության հետազոտական խորհուրդ* (Bilim Stratejileri Araştırma Kurumu-BİLSAK, հիմն. 2008թ.)

12. *Լոբիլիստական և ռազմավարական հետազոտությունների կենտրոն* (Lobicilik Ve Stratejik Araştırmalar Merkezi-LOBISAV, հիմն. 2012թ.)
13. *Թուրքիայի էներգիայի հիմնադրամ* (Türkiye Enerji Vakfi-TENVA, հիմն. 2012թ.)
14. *Թուրքիայի գիտության հետազոտությունների հիմնադրամ* (Türk Bilim Araştırma Vakfi-TÜBAV, հիմն. 1995թ.):

Բազմաբնույթ հետազոտություններ իրականացնող կենտրոններ (24 կենտրոն): Մասնագիտանում են մի քանի ոլորտներում, հետևաբար դրանք չենք ընդգրկել այլ խմբերում: Խմբի մի քանի առաջատար կենտրոններ հեղինակություն ունեն ոչ միայն Թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս: Դրանք են՝

1. *Սոցիալական և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամ* (KÖK Sosyal ve Stratejik Araştırmalar Vakfi-KÖKSAV, հիմն. 1991թ.)
2. *Հասարակական, տնտեսական, քաղաքական հետազոտությունների հիմնադրամ* (Toplumsal Ekonomik Siyasal Araştırmalar Vakfi-TESAV, հիմն. 1993թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ «քեմալական»)
3. *Թուրքիայի տնտեսական և սոցիալական ուսումնասիրությունների հիմնադրամ* (Türkiye Ekonomik Ve Sosyal Etüdler Vakfi, 1994թ., գաղափարախոսական կողմնորոշումը՝ լիբերալ)
4. *Նոր Թուրքիա ռազմավարական հետազոտության կենտրոն* (Yeni Türkiye Stratejik Araştırma Merkezi, 1994թ.)
5. *Տեխնիկական, տնտեսական ռազմավարական հետազոտությունների կենտրոն* (Stratejik Teknik Ekonomik Araştırmalar Merkezi-STEAM, հիմն. 2002թ.)
6. *Հրանտ Դինք հիմնադրամ* (Hrant Dink Vakfi, հիմն. 2007թ.)
7. *Անատոլիայի ռազմավարական հետազոտությունների և ուսումնասիրությունների կենտրոն* (Anadolu Stratejik Araştırmalar ve Etüd Merkezi-ANSEM, հիմն. 2009թ.)
8. *Գլոբալ հարաբերությունների ֆորում* (Global İlişkiler Forumu-GIF, հիմն. 2009թ.):

Վերը հիշատակված ուղղություններից բացի, առանձին կենտրոններ մասնագիտանում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության նեղ բնագավառներում, շատերը կենտրոնանում են տարածաշրջանային, մի մասն էլ՝ արտաքին քաղաքական համընդգրկուն խնդիրների վրա:

Հայկական հետազոտություններ կատարող կենտրոններ

Մինչև սոցճամբարի փլուզումը հայկական հետազոտություններն իրականացվում էին բացառապես ակադեմիական կառույցների շրջանակներում: Առկա սովորաթիվ վերլուծական կենտրոնների հիմնական մասի, այդ թվում՝ «փակ վերլուծաբանական» խմբերի հետազոտական աշխատանքները կենտրոնացած էին հիմնականում հայկական սփյուռքում տեղի ունեցող տեղաշարժերի և մեծ մասամբ ԱՄԱԼԱ-ի գործունեության հետազոտությունների վրա: Ներկայումս հայ-թուրքական հարաբերությունների, Հայոց ցեղասպանության, սփյուռքի և Հայաստանի ու Հայության վերաբերյալ քաղաքական, ռազմավարական հիմնախնդիրները, ակադեմիական կառույցների կողմից ուսումնասիրվելուց բացի, դարձել են նաև թուրքական ՌՀԿ-ների հետազոտությունների առարկան: Վերջին տարիներին Թուրքիայում քայլեր են արվում նաև հայերենի դասավանդման ուղղությամբ: Մասնավորապես, այդ նպատակով ակադեմիական հաստատություններում բացվել են հայոց լեզվի և գրականության բաժիններ՝ հիմնականում ուսումնակրթական ծրագրերի և դասընթացների շրջանակներում: Որոշ համալսարաններում ստեղծվել են նաև հայկական հետազոտական կենտրոններ, որոնք կատարում են Ցեղասպանության թեմաներով ուսումնասիրություններ: Հայկական հետազոտություններով և ուսումնական գործունեությամբ զբաղվող թուրքական կառույցների (ակադեմիական, թե վերլուծաբանական) համագործակցության մակարդակը բարձր է: Նրանք աշխատում են փոխլրացման սկզբունքով: Այդ հարաբերությունները հնարավորություն են տալիս լուծել մի քանի առանցքային խնդիրներ. կադրերի վերապատրաստում, ռազմավարական նպատակների և առաջնահերթությունների հստակեցում և իրագործում, համատեղ ծրագրերի, գիտաժողովների իրականացում և այլն:

Կենտրոնների «ինտելեկտուալ արտադրանքն» ունի քարոզչական, ճանաչողական և կիրառական նշանակություն: Վերլուծելով վերջին հինգ տարիներին մոտ 10 հետազոտական կենտրոնների հրատարակած հոդվածները,

գրքերը, զեկույցները՝ հայկական հետազոտությունները կարելի է բաժանել երկու մասի՝ պատմական և արդի: Պատմական հետազոտությունները վերաբերում են հետևյալ թեմաներին.

- Հայերը տարածաշրջանում թյուրքական նվաճումից առաջ
- Հայերը սելջուկյան ժամանակաշրջանում
- Հայերն Օսմանյան կայսրությունում (սոցիալական, քաղաքական, ժողովրդագրական, կրթական և մշակութային իրադրությունը)
- Հայկական կուսակցություններն Օսմանյան կայսրությունում
- Հայոց ցեղասպանությունը
- Լոզանի պայմանագիրը և Հայկական հարցը
- Հայկական համայնքը հանրապետական Թուրքիայում:

Արդի խնդիրների ուսումնասիրությունները վերաբերում են՝

- ՀՀ հիմնմանը
- ՀՀ ժողովրդագրական, մշակութային խնդիրներին, հանրության սոցիալական կառուցվածքին
- Թուրքիա-Հայաստան և Թուրքիա-Ադրբեջան-Հայաստան հարաբերություններին
- ԼՂ հիմնախնդրին
- Հայկական հարցին միջազգային հարաբերությունների համատեքստում
- Հայկական սփյուռքին
- Հայերի ներկայությանը կիբեռտարածությունում
- Հայկական ՋԼՄ և մեդիա-դաշտի ուսումնասիրություններին
- ՀՀ արտաքին քաղաքականությանը և այլն:

Երկու դեպքում էլ շարքը կարելի է շարունակել՝ հավելելով նաև այլ ուղղություններ, սակայն վերոհիշյալ հետազոտություններին ավելի մեծ տեղ է հատկացվում: Միշտ չէ, որ ՌՀԿ-ները կատարում են պատմական հետազոտություններ, դրանք բավական հազվադեպ են: Պատմական հետազոտությունները հիմնականում կատարվում են կամ համալսարաններին կից գործող հետազոտական-վերլուծական կառույցներում, կամ «հայագիտական» հարցերում մասնագիտացած ՈւԿ-ներում:

Պատմական և արդի խնդիրներով զբաղվող խոշոր «հայագիտական» կենտրոնը, որտեղ հայկական հետազոտությունները կրում էին հիմնարար բնույթ, ժամանակին Թուրքիայի Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնին կից գործող, 2001թ. հիմնադրված Հայկական հետազոտությունների ինստիտուտն էր (*Ermeni Araştırmaları Enstitüsü*): 2009թ. այն դադարեցրեց գործունեությունը: Հայկական հետազոտությունների ինստիտուտն այժմ շարունակում է աշխատանքները *Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնում* (Avrasya İncelemeleri Merkezi-AVIM, հիմն. 2009թ.), «Կովկաս և Հայկական հարց» բաժնի կարգավիճակով, նախագահն է նախկին դիվանագետ Օմեր Էնզին Լյութեմը: AVIM-ը և մեկ այլ ռազմավարական կենտրոն՝ ORSAM-ը (*Միջին Արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոն*) հիմնադրվել են Թուրքմենական համագործակցության և մշակույթի հիմնադրամի կողմից: Միջինարևելյան թուրքմենական կապիտալի ներդրումը Թուրքիայի գիտավերլուծական կենտրոններում նոր և եզակի երևույթ է, որը նկատելի է վերջին հինգ տարիներին:

Կենտրոնը հրատարակում է երկու ամսագիր՝ «Հայկական հետազոտությունների հանդես»-ը (թուրքերեն) և «*Review of Armenian Studies*»-ը (անգլերեն): Որոշ տվյալների համաձայն՝ այն վերահսկվում է Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդին կից Ազգային ակադեմիական ցանցի և տեղեկատվական կենտրոնի կողմից:

Թեև ամսագրերում հրատարակվող հոդվածներն անդրադառնում են հայագիտության տարբեր բնագավառների, այնուամենայնիվ, գերակշռող են Ցեղասպանության ժխտողականության վերաբերյալ հրապարակումները, ինչը վկայում է, որ դրանք շարունակում են գործել *Անկարայի հայկական ինստիտուտի* որդեգրած սկզբունքներով: Երբեմն ամսագրերում կարելի է հանդիպել հայոց պատմության վերաբերյալ հոդվածների, որոնց նպատակն անաչառության պատրանքի ստեղծումն է: Թուրք հեղինակներից բացի, ամսագրերում հրատարակվում (ինչպես նաև խմբագրական խորհրդում ընդգրկված են) արևմտյան և ադրբեջանցի հեղինակներ ակադեմիական և վերլուծական շրջանակներից, ինչը «միջազգային» բնույթ է տալիս պարբերականներին: Հակահայկական, քարոզչական բնույթի հրապարակումները չեն սահմանափակվում սույն պարբերականներով: Կենտրոնը նման աշխատանքներ ներկայացնում է նաև զեկույցների տեսքով:

Հայկական հարցերում մասնագիտացված բուհական-ակադեմիական ՌՀԿ-ներից են՝

1. Սաքարիայի համալսարանի *Թուրք-հայկական հարաբերությունների հետազոտական կենտրոնը (Sakarya Üniversitesi Türk-Ermeni İlişkileri Araştırma Merkezi, հիմն. 2001թ.)*
2. Աթաթյուրքի համալսարանի *Թուրք-հայկական հարաբերությունների հետազոտական կենտրոնը (Atatürk Üniversitesi Türk-Ermeni İlişkileri Araştırma Merkezi, հիմն. 2001թ.):*

Երկու կենտրոններն էլ որոշ ժամանակ գործակցել են Անկարայի հայկական ինստիտուտի հետ, իսկ այժմ ավելի սերտ են դրանց և *AVİM*-ի հարաբերությունները:

Հայկական հետազոտություններ կատարում են հետևյալ մասնավոր ՌՀԿ-ները.

1. *Սոցիալական և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամ (KÖK Sosyal ve Stratejik Araştırmalar Vakfı-KÖKSAY, հիմն. 1991թ.)*
2. *Նոր Թուրքիա ռազմավարական հետազոտության կենտրոն (Yeni Türkiye Stratejik Araştırma Merkezi, 1994թ.)*
3. *Միջազգային հարաբերությունների և ռազմավարական վերլուծությունների թուրքական կենտրոն (Türkiye Uluslararası İlişkiler Ve Stratejik Analizler Merkezi-TURKSAM, հիմն. 2004թ.)*
4. *Հրանտ Դինք հիմնադրամ (Hrant Dink Vakfı, հիմն. 2007թ.)*
5. *Թուրքական ակադեմիայի քաղաքական սոցիալական ռազմավարական հետազոտությունների հիմնադրամ (Türk Akademisi Siyasi Sosyal Stratejik Araştırmalar Vakfı-TASAV, հիմն. 2012թ.)*
6. *Ռազմավարական հետազոտությունների կենտրոն (Birlik Stratejik Araştırmalar Merkezi BİRSAM, հիմն. 2014թ.)*
7. Ստամբուլի «Kultur» համալսարանի *Գլոբալ քաղաքական ուղենիշների կենտրոն (Global Political Trends Center, հիմն. 2008թ.):*

Նշենք, որ ՌՀԿ-ների համար ընդհանրականն այն է, որ ՀՀ-ի և Հայոթյան վերաբերյալ հետազոտությունները հիմնականում պարբերական են, մնացած դեպքերում՝ դիպվածային կամ իրավիճակային: Դրանց մեծ մասն

իրականացվում է կովկասյան, տարածաշրջանային և այլ անվանումներ կրող ենթաբաժինների կողմից: Հարկ է նշել, որ «ինտելեկտուալ արտադրանքից» բացի՝ իրականացվում են նաև գիտաժողովներ, կլոր սեղաններ, տարբեր բնույթի միջոցառումներ:

Բուհական-ակադեմիական կենտրոններ

Բուհական-ակադեմիական հաստատություններ ստեղծվեցին 1970-ական թթ., հետագայում, մասնավորապես՝ վերջին քսանհինգ տարիներին, դրանց թիվը կրկնապատկվեց՝ անցնելով հարյուրի սահմանը: Դրանք իրականացնում են ռազմավարական հետազոտություններ ԵՄ-Թուրքիա հարաբերությունների, Կիպրոսյան խնդրի, մերձավորարևելյան, բալկանյան, կովկասյան տարածաշրջաններում առկա հակամարտությունների, սոցիալ-տնտեսական խնդիրների վերաբերյալ: Չնայած համալսարանները գերհագեցած են ՌՀԿ-ներով, սակայն հարկ է նշել, որ դրանց մեծ մասն անկայուն գործունեություն է ծավալում և, ի տարբերություն մասնավոր կամ պետական ՌՀԿ-ների, վատ է ներկայացված կիրառարածությունում:

Ֆինանսական աղբյուրներ

Հետազոտական կենտրոնների կենսագործունեության ապահովման համար կարևոր է ունենալ կայուն ֆինանսական հոսքեր, որոնք ձևավորվում են տարբեր աղբյուրներից:

Կենտրոնները ֆինանսավորվում են հետևյալ հիմնական աղբյուրներից.

1. Պետական բյուջեից
2. Կուսակցություններից
3. Գործարարներից
4. Տեղական հիմնադրամներից և համալսարաններից
5. Միջազգային կազմակերպություններից:

Պետական վերլուծական կենտրոնները ֆինանսավորվում են այն պետական (ԱԳՆ, ԲԿԽ, ԹԱՄԺ) հաստատությունների բյուջեներից, որոնց մաս են կազմում: Պետական վերլուծական հաստատությունների տարեկան բյուջեները (թվերի տեսքով) հստակ չեն: Փորձագիտական գնահատականներով՝ դրանք բավական մեծ գումարներ են կազմում: Իշխանությանը մոտ կանգնած

և նրանց քաղաքական հայացքները կիսող մասնավոր ՈւԿ-ները մասնակիորեն պետական գումարներ են ստանում դրամաշնորհների և նվիրատվությունների տեսքով:

Հատկանշական է, որ անկախ և ընդդիմադիր վերլուծական կառույցները ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից ավելի թափանցիկ են (տե՛ս Աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Կենտրոնի անվանումը	Տարեկան բյուջեն	Դոնոր կազմակերպությունները
Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ	\$2 մլն (2013թ.)	Սորոսի հիմնադրամ «Ֆրիդոմ հաուս» Համաշխարհային բանկ Բաց հասարակության ինստիտուտ Ժողովրդավարացման աջակցության ազգային հիմնադրամ Ֆրիդիրխ Էբերտ հիմնադրամ
Արտաքին քաղաքականության ինստիտուտ	\$300 հազ. (2012թ.)	Ֆինանսավորվում է ընդդիմադիր կուսակցությունների և գործարարների կողմից
Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամ	\$980 հազ.-1 մլն (2013թ.)	Թուրքիայի Պալատների և բորսայի (TOBB) միություն Իսլամական զարգացման բանկ Համաշխարհային բանկ, ՄԱԿ Մանկական հիմնադրամ (UNICEF), ԱՄՆ արտգործնախարարություն
Տնտեսական և արտաքին քաղաքականության հետազոտությունների կենտրոն	\$435 հազ. (2013թ.)	-

Իշխանություններին քննադատող «ուղեղային կենտրոններն» ավելի քիչ գումարներ ունեն՝ ֆինանսավորվելով հիմնականում ընդդիմության կողմից: Մասնավոր կենտրոնների մեծ մասը, որոնք չեն կիսում ո՛չ պետության, ո՛չ ընդդիմադիր կուսակցությունների և այլ ակտորների քաղաքական հայացք-

ները, գաղափարախոսությունը, այլընտրանքային ֆինանսական աղբյուրների որոնման հարցում ավելի շահավետ դիրքերում են գտնվում: Այդպիսի կենտրոնները չեզոքություն պահպանելու նպատակով հրաժարվում են ստանալ գումարներ արտերկրից և այդ բացը լրացնում են ի հաշիվ բիզնես շրջանակների հետ կապերի: Գործարար շրջանակների համար համագործակցության առումով թիրախային են այն վերլուծական կենտրոնները, որոնք որևէ առնչություն չունեն պետական հաստատությունների և կուսակցությունների հետ կամ գաղափարականացված կառույցներ չեն:

Անկախ այս ամենից, քաղաքական շահեր հետապնդող բիզնես շրջանակները երբեմն ֆինանսապես աջակցում են նաև ընդդիմադիր ՌՀԿ-ներին: Արդյունքում՝ մի շարք վերլուծական կենտրոններ, որոնք գաղափարականացված էին և աջակցություն էին ստանում գործարարներից, պետության ճնշման ներքո ստիպված էին դադարեցնել ֆինանսական հատկացումները¹: Ըստ երևույթին, սա հարված էր Թուրքիայի խոշոր գործարար որոշ շրջանակների շահերին, որոնք մինչ այդ իրենց հովանավորության տակ էին վերցրել մի քանի ՌՀԿ: Սա ազդանշան էր երկու կողմերի համար էլ՝ լինել պետության հետ կամ ոչ, ինչն, իր հերթին, վտանգավոր ճեղքեր էր առաջացնում պետություն-բիզնես ընտրանի-փորձագիտական հանրույթ հարաբերություններում:

Որոշ գնահատականներով՝ անհամեմատ ավելի մեծ գումարներ են ստանում Թուրքիայի քաղաքական, ակադեմիական և փորձագիտական որոշ շրջանակներում «հինգերորդ շարասյուն» բնութագրումն ստացած և Թուրքիայի տարածքային անվտանգության համար սպառնալիք համարվող, հասարակության պառակտման մեջ մեղադրվող կառույցները: Այդպիսի ֆինանսական մեծ հնարավորություններ ունեն Թուրքիայում գրասենյակներ ունեցող արտասահմանյան ՌՀԿ-ների մասնաճյուղերը, ինչպես նաև զուտ թուրքական կենտրոնները, որոնք կառույցի գործունեության ապահովման կամ դրամաշնորհներով իրականացվող նախագծերի համար գումարներ են ստանում արտերկրից:

¹ Օրինակ, 2004թ. հիմնադրված և 2009թ. փակված, «քեմալական» գաղափարախոսության դիրքերից հանդես եկող *Թուրքիայի ազգային անվտանգության ռազմավարական հետազոտությունների կենտրոնը*, որը ֆինանսավորվում էր «Թուրք Մետալ» ձեռնարկության կողմից, խնդիրներ է ունեցել իշխանությունների հետ:

Վերլուծական կենտրոնների մի մասը «սնվում» է թուրքական հիմնադրամներից, տեղական գիտակրթական հաստատություններից (Թուրքիայի գիտատեխնիկական հետազոտությունների խորհուրդ, Թուրքիայի գիտությունների ակադեմիա) և միջազգային դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար նախատեսված գումարներից, մյուսները գոյատևում են այլ միջոցների հաշվին: Հաճախ ֆինանսական աղբյուրները (պետական և ոչ պետական) համադրվում են:

Կադրային քաղաքականությունը

Կադրերը համալրվում են ակադեմիական շրջանակներից՝ բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդներ (առավելագույնը պետք է լինի մագիստրոս), գիտության թեկնածուներ, արտասահմանում ուսում ստացած քաղաքագիտության դոկտորներ, ակադեմիաների պատվավոր անդամներ: ՌՀԿ-ները համալրվում են նաև պաշտոնաթող զինվորականներով և պետական, քաղաքական գործիչներով, դիվանագիտական կորպուսի նախկին աշխատակիցներով: Ահա թե 2010թ. Թուրքիայի նախկին նախագահ Աբդուլա Գյուլի և *Տնտեսական ու սոցիալական հետազոտությունների ասոցիացիայի* (Ekopolitik) աշխատակիցների հետ դոնիվակ հանդիպման ժամանակ ինչ է ասել կենտրոնի խորհրդական, հոգեվերլուծաբան Վամըք Վոլքանը. «Մեր մեջ կան և՛ Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության նախկին աշխատակիցներ, և՛ սարից իջած քուրդ»¹:

Կադրերով համալրվելու խնդիրը թուրքական ՌՀԿ-ների առավել կարևոր մարտահրավերներից է: Ո՛չ պետության և ո՛չ մասնավոր սեկտորի կողմից չի ստեղծվել կադրերի պատրաստման անհրաժեշտ աշխատանքային միջավայր՝ «դարբնոցներ»: Այդ պատճառով կադրային ընտրության հնարավորություններն ինչպես նախկինում, այնպես էլ այսօր խիստ սահմանափակ են. փորձառու մասնագետներ ոչ լրիվ դրույքով աշխատում են նաև այլ կենտրոններում: Երբեմն նախագահներ կամ տնօրեններ են դառնում հասարակական գործունեություն ծավալած հեղինակավոր անհատներ, նախկին դիվանագետներ, ինչպես նաև գործարարներ:

¹ Gül Ekopolitik Grubu ile görüşti, <http://www.haberturk.com/gundem/haber/546127-gul-ekopolitik-grubu-ile-gorustu>, (26 Ağustos 2010).

Ռազմական, պաշտպանական համակարգի աշխատակիցների ներհոսքը ոչ պետական ՈւԿ-ներ ունի խորքային պատճառներ: Պետության «ուժեղ ձեռքը» կենտրոնները ներսից վերահսկելու և աշխատանքները «ճիշտ կազմակերպելու» միջոցներ է ձեռնարկում նաև այսօր: Կենտրոնների ազատության սահմանափակումը տարիների ընթացքում հղկվել և ձեռք է բերել որոշակի ձևաչափ: Կենտրոններն աստիճանաբար կախվածության մեջ են հայտնվում՝ դառնալով «ռազմական խունտայի» փաստացի կամակատարը, որտեղ քաղաքացիական աշխատանքային իրավունքներին փոխարինելու է գալիս զինվորական կանոնադրությունը:

Համաձայն ՌՀԿ-ների վերաբերյալ հետազոտություններ իրականացնող թուրք վերլուծաբանների, փորձագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերը սովորաբար կարճաժամկետ են, դրանք երկարաժամկետ են լինում միայն այն դեպքում, երբ իրագործվում են 2-3 տարվա համար նախատեսված հետազոտական հատուկ ծրագրեր: Բազմիցս շեշտվում է այն տեսակետը, որ կարճաժամկետ պայմանագրերը չեն նպաստում երիտասարդ մասնագետների՝ վերլուծաբանական աշխատանքներին լիարժեք ինտեգրվելուն¹:

Պետական առաջնահերթ խնդիրներին հաղորդակից դարձնելու և ընդհանուր նպատակների շուրջ մոբիլիզացնելու նպատակով ավելի շրջահայաց կենտրոններն օգտվում են թուրքական «սփյուռքի» գիտական-փորձագիտական ռեսուրսներից: Գոյություն ունեն մի քանի առաջատար ՌՀԿ-ներ, որոնք մոբիլիզացնում են արտերկրի թուրք ինտելեկտուալներին տարբեր ինստիտուտների, քաղաքական պլատֆորմների շուրջ:

Փորձագետների մեծ մասն իր պոտենցիալը կենտրոնացնում է տարածաշրջանային այնպիսի հարցերի վրա, ինչպիսիք են Մերձավոր Արևելքը, Բալկանները, Կովկասը և այլն (տե՛ս Աղյուսակ 2), ինչից կարելի է ենթադրել, որ Թուրքիայի ներկա իշխանությունների համար արտաքին քաղաքական հիշյալ հարցերը չափազանց կարևոր են:

¹ *Bilal Karabulut*, *Dünyada Ve Türkiye’de Think Tank Kuruluşları: Karşılaştırmalı Bir Analiz*, Akademik Bakış, Cilt 4, Sayı 7, Kış 2010, s. 101 և Hasan Kanbolat, “Türkiye’de Düşünce Merkezi Kültürünün Oluşum Süreci: Türkiye’de Dış Politika ve Güvenlik Alanındaki Düşünce Merkezleri”.<http://www.orsam.org.tr/tr/yazi-goster.aspx?ID=32325.08>. 2009.

Աղյուսակ 2

Վերլուծական կենտրոն	Ուսումնասիրվող ուղղություններ	Փորձագետների քանակը	Արտաքին քաղաքականության ուղղություններ	Արտաքին քաղաքականությամբ զբաղվող փորձագետների թիվը
Քաղաքական, տնտեսական և հասարակական հետազոտությունների հիմնադրամ-SETA	Արտաքին քաղաքականություն Հասարակություն և տնտեսություն Մարդու իրավունքներ	26	ԱՄՆ Ասիա Աֆրիկա Եվրոպա Ֆուկյաններ Կովկաս Մերձ Արևելք	10
Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամ-TEPAV	Տնտեսություն Արտաքին քաղաքականություն Կառավարում	38	ԷՄ Ֆուկյաններ Կովկաս Ասիա Ռուսաստան ԱՄՆ Մերձ Արևելք Օսգի երկրներ	11
Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ-TESEV	Ժողովրդավարացում Լավ կառավարում Արտաքին քաղաքականություն	16	ԷՄ, Կիպրոս Հարավային Կովկաս, Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա, Թուրք-հայկական հարաբերություններ	6
Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպություն- USAK	Արտաքին քաղաքականություն Սոցիալական հետազոտություններ Անվտանգություն Էներգետիկ տնտեսություն Միջազգային իրավունք	33	ԷՄ ԱՄՆ Ասիա Օվկիանիայի երկրներ Մերձավոր Արևելք, Աֆրիկա	20

Այս մոտեցմամբ կենտրոնները նպատակ ունեն մոտենալ իշխանությանը, սիրաշահել նրան և հանդես գալ որպես պետության արտաքին քաղաքական գործընթացների «պաշտպան»՝ այդպիսով լուծելով նաև սեփական կառույցի գոյատևման խնդիրը:

Պետք է ասել, որ ՌՀԿ-ների առատության պայմաններում կադրային բազան բավարար չէ տնտեսական, քաղաքական, կրոնական, տարածաշրջանային հետազոտությունների իրականացման համար, որի պատճառով տարբեր կենտրոնների փորձառու մասնագետներ ոչ լրիվ դրույքով աշխատում են նաև այլ կենտրոններում: Օտար լեզուներին տիրապետող կադրերի բացակայությունը խոցելի է դարձնում հատկապես տարածաշրջանային բլոկը. ռուսերեն, հայերեն, հունարեն և արաբերեն լեզուների պահանջարկը բավական մեծ է, և անհրաժեշտ թվով մասնագետներով համալրելու փորձերը գնահատվում են ոչ բավարար¹:

Ամփոփելով նշենք, որ.

1. ՌՀԿ-ների թվաքանակի աճի առկա միտումները նպաստել են ակադեմիական շրջանակներից դուրս հումանիտար գիտական մտքի զարգացմանը և նոր որակ հաղորդել քաղաքագիտական-ռազմավարական մշակումներին
2. Քայլեր են կատարվում «ինտելեկտուալ արտադրանքը» միջազգային շուկա արտահանելու ուղղությամբ
3. Թուրքական վերլուծական հանրույթը փորձում է ակտիվ ֆոն հաղորդել ավելի վաղ շրջանում հիմնված կենտրոնների աշխատանքներին
4. Ֆինանսապես ամրապնդվելու և մրցակցությանը դիմագրավելու համար փնտրվում են եկամուտի նոր աղբյուրներ
5. Հիմնադրվում են ժամանակակից պահանջներին համապատասխան, բազմաշերտ հիմնախնդիրներով զբաղվող նոր որակի հետազոտական կենտրոններ
6. Առկա կենտրոնների բազայի վրա հիմնվում են մասնաձյուղեր տարբեր երկրներում, ստեղծվում են նոր կենտրոններ

¹ Հետաքրքիր են *TEPAV* (Թուրքիայի տնտեսական քաղաքականության հետազոտությունների հիմնադրամ) տնօրեն Գյուլեն Սաքի հետևյալ պարզաբանումները. «Հայկական հետազոտությունների թեման այսօր, ավելի քան երբևէ, արդիական է, սակայն չունենք մի կենտրոն, որը կարող է սովորեցնել հայերեն»: Իսկ Բահչեշեհրի համալսարանի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի նախագահ Էրջան Չիթլիօղլուն, ՈւԿ-ների ներքին խնդիրներին անդրադառնալիս, հրատապ է համարում կենտրոնների մասնագետների պատրաստման հարցը. «Այսօր մերձավորարևելյան երկրների խնդիրներն ուսումնասիրող մասնագետները բացարձակապես չեն տիրապետում արաբերենին, անգամ Կովկասի գծով փորձագետները ռուսերեն չգիտեն, այդպես հնարավոր չէ»: Տարբեր ղեկավարներ իրենց հարցազրույցներում անդրադարձել են օտար լեզուների իմացությամբ մասնագետներ չունենալու խնդրին: Տե՛ս *Muhsin Öztürk, Mesut Çevikalp, Ankara'nın yeni aktörleri, Aksiyon dergisi, Sayı: 715, 18.08.2008:*

7. Կենտրոնները գործում են տարբեր գաղափարախոսությունների ազդեցության տակ՝ անկախ նրանից, թե ովքեր են իշխանությունում
8. Գործադրվում են ջանքեր մասնագիտական կազմի որակական բարելավման ուղղությամբ:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
DIŞ POLITIKA ENSTITÜSÜ (DPE)

Կենտրոնական գրասենյակն՝ Անկարայում
Պաշտոնական կայք՝ www.dispolitika.org.tr

I. Ընդհանուր տեղեկություն (ղեկավար, հիմնադրման տարեթիվ, կառույցի նկարագիր, աշխատակազմի թվաքանակ, ֆինանսական աղբյուրներ, հովանավորներ):

Ինստիտուտի հիմնադիր նախագահն է Սեյֆի Թաշհանը (պաշտոնավարում է 1974 թվականից): Գաղափարախոսական տեսանկյունից կառույցը ղեկավարում են «չափավոր քեմալականները»:

Հիմնադրվել է 1974թ., արտաքին քաղաքականության ոլորտում մասնագիտացված անկախ հետազոտական կենտրոն է: Կենտրոնի ստեղծման հիմք է հանդիսացել «Foreign Policy» («Արտաքին քաղաքականություն») ամսագիրը, որը հրատարակվում էր 1971 թվականից: Կենտրոնի հիմնադրման գործում մեծ էր ԱՄՆ արտաքին քաղաքականության գծով խորհրդի դերը, որին մասնակցություն ունեցավ ներկայումս գործունեությունը դադարեցրած իտալական հետազոտական մի ինստիտուտ: Վերջիններիս մեթոդաբանական մշակումները ներդրվել են ինստիտուտի աշխատանքային կանոնակարգման մեջ:

Ինստիտուտի նպատակն է կապեր հաստատել արտերկրում գոյություն ունեցող՝ Թուրքիայով շահագրգիռ նույնանման կառույցների հետ՝ կապված թուրքական արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերի հետ, ինչպես նաև մշակել առաջարկություններ Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ:

Հետազոտական ծրագրերում ընդգրկված են տարածաշրջանային՝ Միջերկրածովյան երկրներին, Կիպրոսին, Եվրոպային, Բալկաններին ու Կովկասին վերաբերող ռազմավարական և անվտանգության հարցեր, որոնք փոխկապակցված են Թուրքիայի արտաքին քաղաքականության հետ:

Ֆինանսական խնդիրների պատճառով ինստիտուտը որոշ ժամանակ գործել է Հաջիթեփեի համալսարանում (1991-2000թթ.), այժմ տեղակայված է

Անկարայում գտնվող Բիլքենթի համալսարանում:

Ինստիտուտն ունի սահմանափակ թվով փորձագետներ՝ հիմնականում ԱԳՆ աշխատակիցներ, պաշտոնաթող դիվանագետներ և ակադեմիական շրջանակների ներկայացուցիչներ:

Ինստիտուտի տարեկան բյուջեն կազմում է \$300 հազ.:

II. Կառուցվածքը

Ղեկավար խորհուրդ (15 անձ)

Հետազոտական կենտրոններ (ուղղություններ)

1. Կիպրոսյան խնդիր
2. Մերձավոր Արևելք
3. Կովկաս
4. Բալկաններ
5. ԵՄ-Թուրքիա հարաբերություններ
6. Միջազգային անվտանգություն

III. Ներքին և արտաքին կապեր, համագործակցություն

- *Պետական կառավարման մարմիններ:* Թուրքիայի արտգործնախարարություն, Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդ:
- *Միջազգային կապեր:* Բար-Իլանի համալսարանի «Բեգին Սադաթ» ռազմավարական հետազոտությունների կենտրոն (Իսթաբուլ), արտաքին քաղաքականության գծով ԱՄՆ խորհուրդ, ԵՄ-Միջերկրական հետազոտական հանձնաժողով (EuroMeSCo), Եվրոպայի և միջազգային հետազոտությունների Լյուքսեմբուրգի ինստիտուտ, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի և Իտալիայի վերլուծական կենտրոններ, միջազգային մի շարք կազմակերպություններ:
- *Այլ կառույցներ:* Թուրքիայի միջազգային հարաբերությունների և ռազմավարական հետազոտությունների հիմնադրամ, Եվրասիական հետազոտությունների կենտրոն (AVIM), ԶԼՄ և մեդիա-համագործակցություն:

IV. Գիտական գործունեությունը

1. Հրատարակություններ
- «FOREIGN POLICY» ամսագիր

- Թեմատիկ պարբերականներ
- Զեկույցներ
- Գրքեր (թվով 25)

2. Միջոցառումներ

- Գիտաժողովներ (տեղական և միջազգային, թվով 200)
- Սեմինարներ
- Կլոր սեղաններ
- Շնորհանդեսներ

V. Հայկական խնդիրներ

Հայաստանին, հայկական սփյուռքին, ԼՂՀ հիմնախնդրին և թուրք-հայկական հարաբերություններին նվիրված հոդվածները կրում են դիպվածային կամ իրավիճակային բնույթ, կան արտատպություններ այլ կենտրոններից: Օժանդակություն է ցուցաբերում Եվրասիական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, պաշտոնաթող դիվանագետ Օմեր Էնզին Լյութեմը, որն Արտաքին քաղաքականության ինստիտուտի ղեկավար խորհրդի անդամ է:

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ULUSLARARASI STRATEJİK ARAŞTIRMALAR KURUMU (USAK)**

Կենտրոնական գրասենյակն՝ Սնկարայում
Պաշտոնական կայք՝ www.usak.org.tr

I. Ընդհանուր տեղեկություն (ղեկավար, հիմնադրման տարեթիվ, կառույցի նկարագիր, աշխատակազմի թվաքանակ, ֆինանսական աղբյուրներ, հովանավորներ):

Հիմնարկության նախագահն է Օզդեմ Սանբերկը (պաշտոնաթող բարձրաստիճան դիվանագետ, 1985-1987թթ. զբաղեցրել է Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալի արտաքին քաղաքականության հարցերով գլխավոր խորհրդականի պաշտոնը), նախագահի տեղակալներ՝ Մեհմեթ Թիրաշ, Քամեր Քասըմ, Սելջուկ Չոլաքոլու:

Հիմնադրվել է 2004թ. պրոֆ. Սեդաթ Լաչիների (ղեկավարել է 2004-2010թթ.), ակադեմիական, գործարար շրջանակների և քաղաքական ասպարեզում գործունեություն ծավալող գործիչներ Յուսուֆ Զիյա Օզջանի, Թայիբե Գյուլեք Դոմաչի կողմից:

Լիբերալ ուղղվածություն ունեցող հետազոտական կենտրոն է, որի հիմնական նպատակն է գտնել Թուրքիայի անվտանգության ոլորտում առկա սուր հարցերի լուծման ուղիներ վերլուծական, խորհրդատվական և այլ կարգի աշխատանքներով: Մերտ հարաբերություններ ունի Արդարություն և զարգացում կուսակցության հետ:

Ընդհանուր առմամբ ունի 50 աշխատակից, որոնցից 42-ը՝ փորձագետ, ներառյալ արտերկրի չորս ներկայացուցիչ (Լոնդոն, Ադիս Աբեբա, Մոսկվա, Դելի) և 8-ը՝ վարչական:

Բյուջեն ձևավորվում է նվիրատվություններից, ամսագրերի վաճառքից, գովազդներից ստացվող գումարներից:

II. Կառուցվածքը

1. Փորձագիտական խորհուրդ
2. Ղեկավար խորհուրդ

3. Գիտական խորհուրդ
4. Մասնագիտական խորհուրդ
5. Պատվավոր անդամների խորհուրդ

Հետազոտական կենտրոններ

1. Ամերիկայի հետազոտությունների կենտրոն
2. Ասիական և խաղաղօվկիանոսյան հետազոտությունների կենտրոն
3. Եվրամիության հետազոտությունների կենտրոն
4. Եվրասիական հետազոտությունների կենտրոն
5. Էներգետիկ անվտանգության հետազոտությունների կենտրոն
6. Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի հետազոտությունների կենտրոն
7. Միջազգային անվտանգության հետազոտությունների կենտրոն
8. Միջազգային իրավունքի հետազոտությունների կենտրոն
9. Սոցիալական հետազոտությունների կենտրոն

Հատուկ նախագծեր

1. Ստամբուլ քաղաքի անվտանգություն (2013թ.)
2. Կրիտիկական էներգետիկ ենթակառուցվածքների անվտանգություն (2013թ.):

III. Ներքին և արտաքին կապեր, համագործակցություն

- *Պետական կառավարման մարմիններ:* Թուրքիայի արտգործնախարարություն, էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն, Թուրքիայի ազգային անվտանգության խորհուրդ, Թուրքիայի գիտատեխնիկական հետազոտությունների խորհուրդ:
- *Ուժային կառույցներ:* Թուրքիայի ազգային հետախուզական ծառայություն (MIT):
- *Այլ կառույցներ:* Միջազգային քաղաքացիական հասարակության օժանդակության և զարգացման հիմնարկություն (Թուրքիա), ԶԼՄ և մեդիա-համագործակցություն:
- *Միջազգային կապեր:* ՄԱԿ Մանկական հիմնադրամ (UNICEF), Եվրոպայի թուրքական սփյուռքի կազմակերպություններ, միջազգային մի շարք ուղեղային կենտրոններ:

IV. Գիտական գործունեություն

1. Հրատարակություններ

- «Անալիտիկ» ամսագիր
- «Անալիզ» ամսագիր
- «Կենտրոնական Ասիա և Կովկաս» պարբերական
- Զեկույցներ
- Հարցազրույցներ
- Գրքեր (թվով 68)

2. Միջոցառումներ

- Գիտաժողովներ (տեղական և միջազգային)
- Սեմինարներ
- Կլոր սեղաններ
- Շնորհանդեսներ:

V. Հայկական խնդիրներ

Հայաստանի և հայության վերաբերյալ ստեղծման օրվանից հրատարակել է 3 գիրք՝

1. Սեդրաթ Լաչիներ, «Ո՞րն է հայկական հարցը», 2009:
2. Սեդրաթ Լաչիներ, «Հայկական հարցը, Սփյուռքը և Թուրքիայի արտաքին քաղաքականությունը», 2008:
3. Սեդրաթ Լաչիներ, «Հայերը և թուրքերը», 2006:

Տարբեր տարիների հրատարակվել են Հայաստանին, հայկական սփյուռքին, ԼՂՀ հիմնախնդրին նվիրված ինչպես արդի, այնպես էլ պատմական տարբեր ժամանակահատվածներին վերաբերող հոդվածներ:

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՍ
TÜRKIYE EKONOMI POLİTİKALARI
ARAŞTIRMALAR VAKFI (TEPAV)**

Կենտրոնական գրասենյակն՝ Անկարայում

Պաշտոնական կայք՝ www.tepav.org.tr

I. Ընդհանուր տեղեկություն (ղեկավար, հիմնադրման տարեթիվ, կառույցի նկարագիր, աշխատակազմի թվաքանակ, ֆինանսական աղբյուրներ, հովանավորներ):

Հիմնադրամի տնօրենն է տնտեսագետ Գյուվեն Սաքը:

Հիմնադրվել է 2004թ. ապրիլի 1-ին, գործարար և քաղաքական շրջանակների կողմից: Ոչ կառավարական, լիբերալ ուղղվածության վերկուսակցական ուղեղային կենտրոն է, որի հիմնական նպատակն է գտնել գլխավորապես Թուրքիայի տնտեսության ոլորտում առկա սուր հարցերի լուծման ուղիներ՝ վերլուծական, խորհրդատվական և այլ կարգի աշխատանքներով: TEPAV-ը տնտեսական քաղաքականությամբ զբաղվող խոշոր թուրքական հետազոտական ինստիտուտ է և ուրույն մասնակցություն ունի նաև հանրային քաղաքականության քննարկումներում: Ունի 62 աշխատակից:

Հիմնադրամը ֆինանսավորվում է Թուրքիայի Պալատների և բորսայի (TOBB) միության կողմից: Տարեկան բյուջեն կազմում է \$980 հազ. - 1 մլն:

II. Կառուցվածքը

1. Հիմնադրամի հանձնաժողով
2. Ղեկավար խորհուրդ

Հետազոտական ստորաբաժանումներ

1. Տնտեսական քաղաքականության հետազոտության ինստիտուտ
2. Միջազգային քաղաքականության հետազոտության ինստիտուտ
3. Տնտեսական կայունության ինստիտուտ
4. Նախաձեռնությունների ինստիտուտ
5. Մասնավոր սեկտորի և տնտեսական զարգացման ինստիտուտ
6. Հանրային դիվանագիտության կրթական և հետազոտական ինստիտուտ

7. Եվրամիության ինստիտուտ
8. Իրավական հետազոտությունների ինստիտուտ
9. Ֆինանսական ինստիտուտ
10. Պարենային և գյուղատնտեսական քաղաքականության հետազոտությունների ինստիտուտ
11. Կենսատեխնոլոգիաների հետազոտությունների կենտրոն
12. TEPAV և Միջազգային բանկի տեղեկատվական կենտրոն
13. Ռուսաստանի հետազոտությունների կենտրոն
14. ԱՄՆ հետազոտությունների կենտրոն
15. Առևտրի հետազոտությունների կենտրոն
16. G20 հետազոտական կենտրոն

Հատուկ նախագծեր

1. Առողջապահական բարեփոխում (երկարաժամկետ, 2012-2016թթ.)
2. Գլոբալ նախաձեռնությունների ծրագիր-Թուրքիա (ԱՄՆ արտգործնախարարություն)
3. Թուրքիայի ուրբանիզացիայի ծրագիր (Համաշխարհային բանկ)
4. Ծրագիր Թուրքիայի պետական դպրոցներում անգլերեն լեզվի իրավիճակի վերաբերյալ (Մեծ Բրիտանիայի դեսպանատուն)
5. Կլիմայական փոփոխության նախագիծ (ՄԱԿ Զարգացման ծրագիր)
6. Նախադպրոցական կրթության զարգացմանն ուղղված նախագիծ (ՄԱԿ Մանկական հիմնադրամ)
7. Եվրամիությանը նոր անդամակցած և թեկնածու երկրներում արդյունաբերական հարաբերությունների զարգացման օժանդակության նախագիծ
8. Սոցիալ-տնտեսական ինտեգրացիոն խնդիրների լուծմանն ուղղված ծրագիր մեծ քաղաքներ տեղափոխված թուրք քաղաքացիների շրջանում:

III. Ներքին և արտաքին կապեր, համագործակցություն

- *Պետական կառավարման մարմիններ:* Թուրքիայի նախագահական ապարատ, Թուրքիայի արտգործնախարարություն, ներքին գործերի նախարարություն, Պետական պլանավորման կազմակերպություն, Թուրքիայի Հանրապետության` Եվրամիության գործերով նախարարություն:
- *Տնտեսական:* Թուրքիայի Պալատների և բորսաների միություն, Արդյունա-

բերության և առևտրի նախարարություն, ֆինանսների նախարարություն, Թուրքիայի գործարար խորհուրդ, առևտրի և մաքսային նախարարություն:

- *Միջազգային կապեր:* Համաշխարհային բանկ, Իսլամական զարգացման բանկ, ՄԱԿ Մանկական հիմնադրամ (UNICEF), ԱՄՆ արտգործնախարարություն, Եվրամիության Թուրքիայի պատվիրակություն, Հարվարդի համալսարանի միջազգային զարգացման կենտրոն, ՄԱԿ Զարգացման ծրագիր, Եվրոպայի Միջերկրածովյան տնտեսական ինստիտուտների ֆորում, Հայաստանի Եվրասիական համագործակցության հիմնադրամ:

IV. Գիտական գործունեություն

Հրատարակություններ

- Ջեկույցներ
- Տեղեկատուներ
- Հարցազրույցներ
- Գրքեր

Միջոցառումներ

- Գիտաժողովներ (տեղական և միջազգային)
- Սեմինարներ
- Կլոր սեղաններ
- Շնորհանդեսներ

V. Հայկական խնդիրներ

Հայաստանի և հայության վերաբերյալ ստեղծման օրվանից հրատարակվել են հոդվածներ, իրականացվել նախագծեր և այլ միջոցառումներ.

1. Թուրք-հայկական հարաբերությունների նորմալացումը որպես տարածաշրջանային բարեկեցության հնարավորությունների պատուհան, զեկույց, 2009:
2. Սահմանային գետի կամրջի վերանորոգում, ծրագիր՝ ուղղված Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների բարելավմանը, 2009:
3. Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին, դրամաշնորհային ծրագիր, TEPAV-ը ծրագրի անդամներից մեկն է 2014-2015թթ.):
4. «Թուրք-հայկական հարաբերությունները և միջսահմանային ռեգիոնալիզմը» կլոր սեղան-քննարկում, Երևան, 2010 (ֆինանսավորել է Մարշալի հիմնադրամի թուրքական մասնաճյուղը):

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ
TÜRKIYE EKONOMİK VE SOSYAL ETÜDLER VAKFI (TESEV)**

Կենտրոնական գրասենյակը՝ Ստամբուլում
Պաշտոնական կայք՝ www.tesev.org.t

I. Ընդհանուր տեղեկություն (ղեկավար, հիմնադրման տարեթիվ, կառույցի նկարագիր, աշխատակազմի թվաքանակ, ֆինանսական աղբյուրներ):

Հիմնադրամի նախագահն է Ջան Փաքերը (եղել է Ժողովրդահանրապետական կուսակցության նախկին առաջնորդ Դենիզ Բայքալի խորհրդականը, լիբերալ-դեմոկրատական հայացքներ ունեցող քաղաքական և հասարակական գործիչ է):

Հիմնադրվել է 1994թ.՝ «Տնտեսական և սոցիալական հետազոտությունների կոնֆերանսների պատվիրակություն» (հիմնադրվել է 1961թ. հայտնի գործարար Նեջաթ Էջզաջըբաշըի կողմից) անվանումով հասարակական կազմակերպության հիման վրա: Կենտրոնը սերտ հարաբերություններ ունի Թուրքիայի ԱԳՆ-ի հետ: Ժողովրդավարացում ծրագրի ղեկավար, հայազգի էթիեն Մահչուփյանը 2014թ. նշանակվել էր Թուրքիայի վարչապետ Ա.Դավութօղլուի գլխավոր խորհրդական:

Ոչ կառավարական լիբերալ ուղղվածության «մտավոր կենտրոն» է, որն իրականացնում է հետազոտություններ արտաքին քաղաքականության վերաբերյալ (հայ-թուրքական, ԵՄ-Թուրքիա և այլն) և ժողովրդավարական խնդիրների (Քրդական հարց, ազգային փոքրամասնություններ, կրոն և հասարակություն, իրավաքաղաքական հարցեր, ԶԼՄ ազատություն):

Ունի 41 աշխատակից, 22՝-ը տարբեր խորհուրդների անդամներ, 15-ը՝ փորձագետ և 4-ը՝ վարչական:

Ֆինանսավորվում է տեղական և միջազգային կառույցներից՝ ՄԱԿ, Համաշխարհային բանկ, Freedom House, Բաց հասարակության ինստիտուտ, Սորոսի հիմնադրամ, ժողովրդավարական տարբեր նախագծեր իրականացնող այլ կառույցներից:

Տարեկան բյուջեն կազմում է \$1 մլն 500 հազ. - 2 մլն (2013թ.):

II. Կառուցվածքը

1. Հիմնադիրների խորհուրդ
2. Ղեկավար խորհուրդ
3. Խորհրդատվական խորհուրդ

Հետազոտական կենտրոններ (ուղղություններ)

1. Ժողովրդավարացում
2. Արտաքին քաղաքականություն
3. Լավ կառավարում

III. Ներքին և արտաքին կապեր, համագործակցություն

- *Պետական կառավարման մարմիններ:* Թուրքիայի արտգործնախարարություն, Թուրքիայի ներքին գործերի նախարարություն:
- *Այլ կառույցներ:* Թուրքիայի ոստիկանական ակադեմիա, Թուրքիայի ակադեմիական և վերլուծական կենտրոններ, ԶԼՄ և մեդիա-համագործակցություն:
- *Միջազգային կապեր:* Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ (Գերմանիա), ՄԱԿ, Բաց հասարակության ինստիտուտ, Ժողովրդավարացման աջակության ազգային հիմնադրամ (ԱՄՆ), Centre for the Democratic Control of Armed Forces (Շվեյցարիա), Center for International Private Enterprise (ԱՄՆ), Կովկասյան ինստիտուտ (Հայաստան) և միջազգային այլ կազմակերպություններ:

IV. Գիտական գործունեություն

Հրատարակություններ

- Թեմատիկ պարբերականներ
- Ջեկույցներ

Միջոցառումներ

- Գիտաժողովներ (տեղական և միջազգային)
- Սեմինարներ (տեղական և միջազգային)
- Կլոր սեղաններ (տեղական և միջազգային):

V. Հայկական խնդիրներ

Հայաստանի և հայության վերաբերյալ հրատարակվել են հոդվածներ, զեկույցներ, գրքեր, իրականացվել նախագծեր և այլ միջոցառումներ: Թուրքիա-Հայաստան հարաբերությունների կարգավորման ուղղությամբ աշխատանքներն իրականացվում է Արտաքին քաղաքականության ծրագրի շրջանակներում:

Հրատարակություններ

1. Ֆերիաթ Քենթել, Գևորգ Պողոսյան, «Թուրքիայի և Հայաստանի հանրությունների փոխադարձ ընկալման և երկխոսության նախագիծ», Երևան-Ստամբուլ, 2005 (ֆինանսավորել է Վաշինգտոնի Ամերիկյան համալսարանի Գլոբալ խաղաղության կենտրոնը):
2. Այբարս Գյորգուլու, Ալեքսանդր Իսկանդարյան, Սերգեյ Մինասյան, Սաբիհա Սենյուչել Գյունդոգար, «Թուրքիա-Հայաստան երկխոսության շարք. հաղթահարելով փակ շրջանը», 2008:
3. Այբարս Գյորգուլու, «Թուրքիա-Հայաստան հարաբերություններ. փակ շրջան», 2008:
4. Այբարս Գյորգուլու, Ալեքսանդր Իսկանդարյան, Սերգեյ Մինասյան, «Գնահատելով հարաբերությունների բարելավման գործընթացը», 2010:

Գիտաժողովներ, սեմինարներ

1. «Թուրքիա-Հայաստան. շարժում առաջ», սեմինար TESEV գրասենյակում, Ստամբուլ, 2010թ. մայիս 28:
2. «Հայ-թուրքական հարաբերությունների քննարկում Կարսում», Կարս, նոյեմբեր 3, 2010:
3. «Երկխոսություն հայկական Սփյուռքի հետ», Լոս Անջելես, մայիս 15-16, 2014 (համակազմակերպիչներ՝ Olive Tree Initiative of University of California Los Angeles, Center for Citizen Peacebuilding of University of California):

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
AVRASYA İNCELEMELERİ MERKEZİ (AVİM)

Կենտրոնական գրասենյակն՝ Անկարայում

Պաշտոնական կայք՝ www.avim.org.tr

I. Ընդհանուր տեղեկություն (ղեկավար, հիմնադրման տարեթիվ, կառույցի նկարագիր, աշխատակազմի թվաքանակ, ֆինանսական աղբյուրներ):

Հիմնադրամի պատվավոր նախագահն է պաշտոնաթող դեսպան Օմեր Էնգին Լյութեմը, նախագահն է պաշտոնաթող դեսպան Ալնի Քըլըչը:

Հիմնադրվել է 2009թ. «Turkmeneli համագործակցության և մշակութային հիմնադրամ»-ի կողմից:

Ոչ պետական «մտավոր կենտրոն» է, որն իրականացնում է տարբեր տարածաշրջաններին (Կովկաս, Բալկաններ, թյուրքական հանրապետություններ, Իրաք և այլն) վերաբերող հետազոտություններ: AVİM-ում ընդգրկվել է Հայկական հետազոտությունների ինստիտուտը, որը գործում էր Անկարայում 1999-2009թթ. Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (ASAM) շրջանակում:

Ունի 30 աշխատակից, 20-ը՝ տարբեր խորհուրդների անդամներ (ներառյալ օտարերկրյա մասնագետներ), 8-ը՝ փորձագետ և 2-ը՝ վարչական:

Ֆինանսավորվում է «Turkmeneli համագործակցության և մշակութային հիմնադրամ»-ի կողմից:

II. Կառուցվածքը

1. Նախագահ
2. Պատվավոր նախագահ
3. Գլխավոր խորհուրդ
4. Խորհրդատվական խորհուրդ

Հետազոտական ստորաբաժանումներ

1. Կովկաս և հայկական հարց
2. Բալկանյան հետազոտություններ
3. Իրաքի հետազոտություններ
4. Ասիական հետազոտություններ

5. Եվրոպական հետազոտություններ

III. Ներքին և արտաքին կապեր, համագործակցություն

- *Պետական կառավարման մարմիններ:* Թուրքիայի արտգործնախարարություն:
- *Միջազգային կապեր:* Ադրբեջանի նախագահականին կից Ռազմավարական հետազոտությունների կենտրոն, թուրքական և ադրբեջանական համայնքային կառույցներ:
- *Այլ կառույցներ:* Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդին կից Ազգային ակադեմիական ցանց և տեղեկատվական կենտրոն, Թուրքիայի ակադեմիական և վերլուծական կենտրոններ, ԶԼՄ և մեդիա-համագործակցություն:

IV. Գիտական գործունեություն

Հրատարակություններ

- «Հայկական հետազոտություններ» հանդես
- «Review of Armenian Studies»
- «Միջազգային հանցագործություններ և պատմություն»
- Զեկույցներ
- Գրքեր
- Բրոշյուրներ

Միջոցառումներ

- Գիտաժողովներ (տեղական և միջազգային)
- Սեմինարներ (տեղական և միջազգային)
- Կլոր սեղաններ (տեղական և միջազգային):

V. Հայկական խնդիրներ

Հրատարակություններ

1. Ջերեմի Սալտ, «Հայերը Սիրիայում 1915-2013թթ.», զեկույց համար 1, 2014:
2. Մեհմեթ Օղուզհան Թուլուն, «Ի՞նչ է համաշխարհային եկեղեցիների խորհուրդը», զեկույց համար 5, 2014:
3. Մեհմեթ Օղուզհան Թուլուն, «Հայ Առաքելական եկեղեցի», զեկույց համար 4, 2014:

4. Հազել Չադան, «Հայկական ահաբեկչության անդրադարձը թուրքական մամուլում (1973-1984)», 2013:

Գիտաժողովներ, սեմինարներ

- «The Armenian-Azerbaijani, Nagorno-Karabakh Conflict: A Threat to Regional Peace, Security and Neighbourly Relations», նոյեմբեր 21, 2014 (համակազմակերպիչ՝ Ադրբեջանի նախագահին կից Ռազմավարական հետազոտությունների կենտրոն):
- «Հայ-թուրքական երկխոսություն», 2014, ապրիլի 26 (Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի (Հայաստան) հետ համատեղ):

**ԹՈՒՐԳ-ԱՍԻԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**
TÜRK ASYA STRATEJİK ARAŞTIRMALAR MERKEZİ (TASAM)

Կենտրոնական գրասենյակը՝ Ստամբուլում

Պաշտոնական կայք՝ www.tasam.org

I. Ընդհանուր տեղեկություն (ղեկավար, հիմնադրման տարեթիվ, կառույցի նկարագիր, աշխատակազմի թվաքանակ, ֆինանսական աղբյուրներ):

Հիմնադրամի նախագահն է Սուլեյման Շենսոյը, տեղակալն է պաշտոնաթող դիվանագետ Մուրադ Բիլհանը:

Հիմնադրվել է 2003թ. Սուլեյման Շենսոյի նախաձեռնությամբ, ունի մասնաճյուղ Անկարայում:

Ոչ պետական ազգայնական ուղղվածություն ունեցող «մտավոր կենտրոն» է: Պատմական, մշակութային, քաղաքական, տնտեսական, իրավական, սոցիալ-մշակութային, միջուկային խնդիրներն այս կենտրոնի հետազոտությունների անբաժան մասն են կազմում: Բավական մեծ հեղինակություն ունի ոչ միայն Թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս: Տասնամյա գործունեության ընթացքում այս կառույցին հաջողվել է կապեր հաստատել տարբեր երկրների, այդ թվում Ադրբեջանի, Վրաստանի, ՌԴ և միջինասիական հանրապետությունների առաջատար «մտավոր կենտրոնների» հետ, ստեղծել համագործակցության տարբեր ձևաչափեր: Տարածաշրջանային հետազոտություններն ընդգրկում են Լատինական Ամերիկայից մինչև Ինդոնեզիա:

Ունի 300 աշխատակից (ներառյալ օտարերկրյա մասնագետներ):

Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերում կենտրոնն ուղորդվում և մտավոր, կազմակերպչական աջակցություն է ստանում Թուրքիայի ԱԳՆ-ից, ֆինանսավորվում է թուրքական պետական որոշ ֆանկերի, տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար շրջանակների կողմից:

II. Կառուցվածքը

1. Նախագահ

2. Նախագահի տեղեկալ
3. Գիտական խորհուրդ
4. Հրատարակչական խորհուրդ
5. Իմաստուն մարդկանց խորհուրդ
6. Խորհրդատվական մարմին

Հետազոտական ստորաբաժանումներ

1. Աֆրիկյան ինստիտուտ
2. Քաղաքական կապերի ինստիտուտ
3. Իսլամական երկրների ինստիտուտ
4. Հանրային դիվանագիտության ինստիտուտ
5. Զարգացման և համագործակցության ինստիտուտ

Հետազոտական աշխատանքային խմբեր

1. Եվրամիության հետազոտությունների խումբ
2. Կովկաս, Կենտրոնական Ասիա, Մերձավոր Արևելք հետազոտությունների խումբ
3. Էներգետիկ հետազոտությունների խումբ
4. Աֆրիկյան հետազոտությունների խումբ
5. Քաղաքական գիտությունների և սոցիոմշակութային հետազոտությունների խումբ
6. Տնտեսական հետազոտությունների խումբ
7. Շրջակա միջավայրի հետազոտությունների խումբ
8. Մամուլի և հասարակության հետ կապերի խումբ

Հատուկ նախագծեր

1. Թուրքիայի միջուկային տեխնոլոգիաների հարթակ
2. Թյուրքական երկրների ֆորում
3. Թուրքիայի ռազմավարական տեսլական 2023
4. Թուրքիայի ուղեղային կենտրոնների միջև երկխոսություն
5. Միջազգային հասարակական կազմակերպությունների զարգացման և համագործակցության հարթակ
6. Իսլամական համագործակցության կազմակերպության երկրների ուղեղային կենտրոնների հարթակ

7. Բալկանյան կապերի ցանցային նախագիծ
8. Թուրքիա-Եվրոպա ֆորում
9. Թուրքիա-Լատինական Ամերիկա և Կարիբյան երկրների ֆորում
10. Թուրքիա-ԱՄՆ ֆորում
11. Թուրքիա-Չինաստան ֆորում
12. Թուրքիա-Իրան ֆորում:

III. Ներքին և արտաքին կապեր, համագործակցություն

- *Պետական կառավարման մարմիններ:* Թուրքիայի նախագահական ապարատ, կառավարություն, Թուրքիայի արտգործնախարարություն, ներքին գործերի նախարարություն, Պետական պլանավորման կազմակերպություն, Թուրքական համագործակցության ու համակարգման գործակալություն, մշակույթի և տուրիզմի նախարարություն, Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդ:
- *Այլ կառույցներ:* Թուրքիայի ակադեմիական և վերլուծական կենտրոններ, ԶԼՄ և մեդիա-համագործակցություն:
- *Միջազգային կապեր:* ՄԱԿ զարգացման ծրագիր, Իսլամական համագործակցության կազմակերպություն, Շանհայի համագործակցության կազմակերպություն, Աֆրիկյան միություն, Իսլամական զարգացման բանկ, Իրանի ԱԳՆ ռազմավարական հետազոտությունների կենտրոն: Համագործակցում է շուրջ երկու տասնյակի հասնող արտասահմանյան ուղեղային կենտրոնների հետ:

IV. Գիտական գործունեություն

Հրատարակություններ

- «Ռազմավարական տեսլական» ամսագիր
- Զեկույցներ
- Գրքեր
- Բրոշյուրներ

Գիտաժողովներ (տեղական և միջազգային)

- Թուրք-աֆրիկյան միջազգային կոնգրես (ամենամյա)
- Թուրք-ասիական միջազգային կոնգրես (ամենամյա)

- Կրթությունն իսլամական երկրներում
- Միջուկային տեխնոլոգիաների իրավիճակն աշխարհում, միջազգային կոնֆերանս
- Թուրքիայի բանկային համակարգի տեսլականը
- Մերձավոր Արևելքի խնդիրներին նվիրված միջազգային գիտաժողով
- Թուրքիա-Մեքսիկա հարաբերություններին նվիրված գիտաժողով:

V. Հայկական խնդիրներ

Հրատարակություններ

1. Սաբահադդին Օզել, «Հավատարիմ ազգ. հայերը», զեկույց 2005
2. Ֆաթիհ Օզբայ, «Հայկական Սփյուռքը և թուրք-ռուսական հարաբերությունները, զեկույց, 2005:

Գիտաժողովներ

1. «Թուրքական և հայկական սփյուռք: Հանրային դիվանագիտություն. հնարավորություններ և ռիսկեր» (Թուրքական համաշխարհային 3-րդ ֆորումի շրջանակներում), 2014, մայիսի 28-30:
2. «Այսպես կոչված Հայոց ցեղասպանությունը և թուրքական սփյուռքի համագործակցությունը» («Թուրքական խորհուրդը, թուրքական սփյուռքն ու սոցիալ-տնտեսական համագործակցությունը» համաթուրքական առաջին ֆորումի շրջանակներում), 2010, հոկտեմբեր 20-22:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ STRATEJIK ARAŞTIRMALAR MERKEZI (SAM)

Կենտրոնական գրասենյակն՝ Անկարայում

Պաշտոնական կայք՝ www.sam.gov.tr

I. Ընդհանուր տեղեկություն (ղեկավար, հիմնադրման տարեթիվ, կառույցի նկարագիր, աշխատակազմի թվաքանակ, ֆինանսական աղբյուրներ):

Ենթարկվում է Թուրքիայի արտգործնախարար Մևլութ Չավուշօղլուին, կենտրոնի նախագահն է պրոֆ. Ալի Ռեսուլ Ուսուլը:

Թուրքիայի արտգործնախարարությանը կից կառույց է, հիմնադրվել է 1995թ.:

Միջազգային հակամարտությունները, տարածաշրջանային հիմնախնդիրներն ու միջազգային հարաբերությունները գիտականորեն գնահատող, խորհրդատվական, ապագային միտված կանխատեսումներ, հայեցակարգային մշակումներ, հետազոտություններ, նաև կրթական գործունեություն իրականացնող, ռազմավարական մտածողության և պլանավորման կենտրոն է:

Ունի 15 աշխատակից:

Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերում կենտրոնն ուղորդվում, մտավոր, կազմակերպչական և ֆինանսական աջակցություն է ստանում Թուրքիայի ԱԳՆ-ից:

II. Կառուցվածքը

1. Նախարար
2. Նախարարի տեղակալ
3. Խորհրդական
4. Նախագահ
5. Աշխատակազմ

III. Կրթական ծրագրեր

1. Ամառային դպրոց
2. Ձմեռային դպրոց:

IV. Ներքին և արտաքին կապեր, համագործակցություն

- *Պետական կառավարման մարմիններ:* Թուրքիայի նախագահական ապարատ, կառավարություն, Պետական պլանավորման կազմակերպություն, Թուրքական համագործակցության ու համակարգման գործակալություն, Մշակույթի և տուրիզմի նախարարություն, Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդ և այլն:
- *Այլ կառույցներ:* Թուրքիայի ակադեմիական և վերլուծական կենտրոններ, ԶԼՄ և մեդիա-համագործակցություն:
- *Միջազգային կապեր:* Չինաստանի սոցիալական գիտությունների ակադեմիա, Իսլամական համագործակցության կազմակերպություն: Համագործակցում է տարբեր երկրների արտգործնախարարությունների, գիտակրթական և վերլուծական հաստատությունների հետ:

V. Գիտական գործունեություն

Հրատարակություններ

- «Perceptions» ամսագիր
- Vision Papers
- SAM Papers
- SAM Reports

Գիտաժողովներ (տեղական և միջազգային)

1. «Աֆրիկյան և Թուրքիան 21-րդ դարում»
2. «Ղրիմը երեկ և այսօր. պատմություն, մշակույթ և միջազգային քաղաքականություն»
3. «Երկխոսություն, զինաթափում, տարածաշրջանային և գլոբալ անվտանգություն»
4. «Ասիական օրակարգը Թուրքիայի արտաքին քաղաքականությունում»
5. Թուրքիա-Հարավային Կորեա համագործակցության երկխոսություն:

VI. Հայկական խնդիրներ

1. «Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը», գիտաժողով, 2011թ.:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
EKONOMI VE DIŞ POLITIKA ARAŞTIRMALAR
MERKEZİ (EDAM)**

Կենտրոնական գրասենյակը՝ Ստամբուլում

Պաշտոնական կայք՝ www.edam.org.tr

I. Ընդհանուր տեղեկություն (ղեկավար, հիմնադրման տարեթիվ, կառույցի նկարագիր, աշխատակազմի թվաքանակ, ֆինանսական աղբյուրներ):

Կենտրոնի նախագահն է Սինան Ուլգենը, տեղակալն է Թուրքիայի նախագահի Եվրամիության գծով խորհրդական, Ժողովրդահանրապետական կուսակցության անդամ, պատգամավոր Զեյնեփ Դամլա Գյուրելը:

Հիմնադրվել է 2004թ. Սինան Ուլգենի, անկախ վերլուծաբանների, ակադեմիկոսների և պետական նախկին գործիչների կողմից: Տնտեսության, էներգետիկ, Թուրքիայի միջուկային հնարավորությունների, սպառազինության և միջազգային հարաբերությունների ոլորտներում աշխատող մտավոր և հետազոտական անկախ կենտրոն է: Բավական մեծ հեղինակություն ունի ոչ միայն Թուրքիայում, այլև նրա սահմաններից դուրս: Հետազոտական աշխատանքներում և ղեկավար գործադիր մարմիններում ներգրավված են արտասահմանյան առաջատար վերլուծական և ակադեմիական հաստատությունների գիտաշխատողներ:

Ունի 39 աշխատակից (ներառյալ օտարերկրյա մասնագետներ): Ֆինանսավորվում է թուրք գործարարների կողմից, տարեկան բյուջեն կազմում է \$435 հազ. (2013թ.):

II. Կառուցվածքը

1. Փորձագիտական և ղեկավար խորհուրդ
2. Գործադիր խորհուրդ
3. Խորհրդատվական մարմին
4. Հետազոտական խումբ

Հետազոտական ստորաբաժանումներ

1. Թուրքիա-ԵՄ բաժին

2. Արտաքին քաղաքականություն և անվտանգություն
3. Էներգետիկ և կլիմայական փոփոխություն
4. Տնտեսություն և գլոբալիզացիա

Հատուկ նախագծեր

1. Թուրքիայի միջուկային էներգետիկա (2010-2011թթ., շարունակական)
2. Կիտոյի արձանագրության ազդեցությունը (2009-2010թթ.)
3. Թուրքիայի կերպարի ձևավորումը Ֆրանսիայում (2010թ.)
4. Տարածաշրջանային զարգացում (2010թ.)
5. Անցումը միջուկային էներգետիկային և դրա մարտահրավերները. թուրքական նախագիծ (կատարվելու է առաջիկա տարիներին):

III. Ներքին և արտաքին կապեր, համագործակցություն

- *Պետական կառավարման մարմիններ:* Թուրքիայի նախագահական ապարատ, կառավարություն, արտգործնախարարություն, Պետական պլանավորման կազմակերպություն, Թուրքիայի միջուկային էներգետիկայի կազմակերպություն, Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդ, Թուրքիայի կրթական հիմնադրամ:
- *Այլ կառույցներ:* Էջզաջըբաշըի դեղագործական հոլդինգ, Թուրքիայի ակադեմիական և վերլուծական կենտրոններ, ՋԼՄ և մեդիա-համագործակցություն:
- *Միջազգային կապեր:* Եվրոպական կայունության նախաձեռնություն, Ուիլյամ և Ֆլորա Հելետի հիմնադրամ, Եվրոպական բարեփոխումների կենտրոն, Եվրոպական քաղաքական հետազոտությունների կենտրոն, Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ, Բրուքինգսի ինստիտուտ, «EurActiv» հիմնադրամ, Մերձավոր Արևելքի Քարնեգի կենտրոն, Ռոբերտ Բոշի հիմնադրամ, Եվրամիության անվտանգության հետազոտությունների ինստիտուտ:

IV. Գիտական գործունեություն

Հրատարակություններ

- EDAM վերլուծական ամփոփագրերի շարք
- Զեկույցներ

Գիտաժողովներ (տեղական և միջազգային)

- Տնտեսական կառավարում ֆորում (2014թ.)
- ՆԱՏՕ ռազմավարական հայեցակարգը և միջուկային սպառազինություն (2009թ.):

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ STRATEJIK DÜŞÜNCE ENSTITÜSÜ-SDE

Կենտրոնական գրասենյակն՝ Անկարայում

Պաշտոնական կայք՝ www.sde.org.tr

